

ՄՈՎԱԽԵՍ ԿԱՂԱՆԿԱՅՏՈՒԱՅԻ

Ե Ի

ԹՈՎԱՄԱ ՄԵԾՈԲԵՑԻ

ի լոյս ընթայեաց հանդերձ ժանօրութեամբ.ք

Կարապետ Վարդապետ Շահնազարեան՝ միաբան
սրբոց Խջմիածնի և անդամ խորհրդարանի կայսերա-
կան Ճեմարանին Տեարց Լազարեանց :



1860 ՓԱՐԻԶ ԱՅԹ :

Ե ԳՈՐԾԱՏԱՆ Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ :

ՃԱՐ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐԱՑ :


ՄՈՎԱՒԵՍ

ԿԱՂԱԿԱՑՏՈՒԱՑԻ

ՊԱՏՄԻՉ ԱԴՎԱՆԻՑ :

Հասոր Բ :

1860 ՓՄԲԻՉ ՌՅԹ :



A VIS

Après avoir publié successivement *Ghévond Vardabède*, *Stéphanos Açogik*, le *Connétable Sembatt*, comte de Coricosse, *Vahrame Vardabède et Stéphannos Orbélian*, nous venons de mettre sous presse *Moïse de Calancaitoutz*, historiographe des Arméno-Albanais, ou mieux des Albanais du Caucase, peuple extrêmement intéressant, dont le nom et peut-être la race et le sang se perpétuent encore dans les Albanais de la Turquie d'Europe, et dont les souvenirs et les traditions se mêlent et se perdent dans les annales des anciens habitants de l'Angleterre, de l'Irlande, de l'Espagne, de l'Italie, de la Grèce, et même des Celtes.

L'auteur que nous publions actuellement fait partie de la *Galerie historique arménienne*; il est le sixième. Nous espérons le faire suivre de huit autres, si nos moyens nous le permettent. Il vécut dans la première partie du VII^e siècle de notre ère, sous le prince Arméno-Albanais Djévançhir, et composa son ouvrage en remontant à deux siècles avant Jésus-Christ. Un anonyme le continua jusqu'au X^e siècle. Outre des détails d'une haute importance qu'il donne sur les mœurs, les traditions, les guerres de ce peuple contre les Persans, les Arméniens, les Arabes et d'autres peuples, il parle aussi des Chozars, des Turcs, des Hongrois et d'autres peuples ses voisins, et surtout de leurs religions et de la propagation de la religion chrétienne parmi eux par les apôtres arméniens. Il est remarquable qu'il vante parmi les productions de l'Albanie, l'abondance de la soie à l'époque où le Bas-Empire venait seulement d'en recevoir les premières graines de la Chine.

Dans une longue préface, nous avons réuni tous les documents qu'il nous a été possible de nous procurer concernant ce peuple, et que nous avons puisés dans les auteurs grecs, romains, arméniens, arabes, géorgiens, persans, russes, etc. Si nous avons réussi dans notre tâche, c'est un petit service que nous rendrons au progrès des lettres: c'est la récompense que nous ambitionnons. Si au contraire nous avons échoué, le monde savant est assez généreux pour nous tenir compte de nos efforts et de notre persévérance.

G. V. CHAHNAZARIAN.

Rue de l'Ouest, 86.

Paris. — Imprimé par E. THUOT ET C[°], rue Racine, 26.

Հ (Կ Դ. Պ Ձ Վ)

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՂՎԱՆԻՑ

ԱՐԱՐԵԱԼ

ՄՈՎՍԻՍԻ ԿԱՂԱՆԿԱՅՏՈՒՄ.ՑԻՈՑ

իրաց ընթացեաց համերձ ժամօրութեամբք

Կ. Վ. Շահնազարեան՝ միաբան
սրբոյ Եջմիածնի և անդամ խորհր-
դարանի Լազարեանց Ճեմարանին որ
ի Մուկվայ:

A 55-010

Ի ԳՈՐԾԱԾՈՆ Կ. Վ. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ:



Ի ՅԻՇ Ա.Տ ԱԿ :

Հոգեւոր Տնօղին իմոյ և բարերարի Յովսենիայ արք-
եպիսկոպոսի Վեհապետեան, հաւան իմոյ ՄԵԼԻՔ-Շահ-
նազարի, հօրս ՄԵԼԻՔՈՎԻ, մօրս Մանամի, եղրօս
Ղազարու և քեռս Նազարեի և Քըրիսոս հանգու-
ցելոց :

Մովսիսի Կաղանկայտուացւոյ

ԵՐԵՐԴԻ ԳԻՐՔ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂՎԱՆԻՑ (1) :

Ե. — Առաջին յարձակումն ի հարսաւոյ երկրէ ունիլ
զժազս տիեզերաց Խոմայելքական ազդին :

Զորս ընկալար ի հոգեղուարճ վարդասլետաց
մակերեւումն ասլառնեաց՝ արտածել ուսցուք յիշեւ
լով զնահազետական բանն առ Խոմայէլ մարդարէն
ացեալ եթէ. ձեռք դորա յամենեսեան, և եղիցի
յաղդ մեծ :

Ընդ նուաղելթաղաւորութեան Պարսից Սասա-
նական աղջին՝ վերերեւեալ սյր մի Մահմէտ անուն
ի սուստ մարդարէիցն, զոր ի Փրկչէն լուար, դիւա-
հոգւով, վայրագ եւ աղեղնաւոր, յանապատոս կայր ։
Եւ ի միում աւուր կերալարանեալ սաստանայ ի ձեւ
էրէոյ վայրաց՝ դիալեցուցանէ զնա Արիոսի կեղծիւն
միայնակեցի ումեմն անուն Բահլորայ (2). եւ չարն
չիք եղեալ իտեղլողն. եւ վալիճ աղեղն ի Մահմետէ
գեղսապարիւր մարդոյն. իսկ նորա սաստիմէ ձայնեալ

ասէ, մի մեղանչեր ուրդեակ՝ զի իրրեւ զբեղ մարդ էմ: Ասէ առ նա Մահմէտն զի մարդ եւ վասն է՞ր կաս ի քարանձաւդ:

Յայնժամ կոչեցեալ առ ինքն զնա՝ սկսաւ ուսուցանել ի հին եւ ի նոր կտակարանաց ըստ Աքիսուի, որ արարած զՈրդին Աստուծոյ ասաց, եւ նա զոր ինչ ի նմանին լինէր ուսուցեալ ի ոլիղծ վարդապետէն՝ հրամայէր նմա զնոյն խուժաղուժ Տաճկացն սկատմել: և բողոքէր առ նա զի մի ոք դիտացէ զնորա տեղին: Եւ անիմաստ, հեթանոսամիտ և մարդահանութեանն՝ ասեն ցՄահմէտ՝ ուստի՞է քեղ զոյդ գիտել: Եւ Մահմէտն հայթայթեալ զանձանօթն իւր աղջ՝ ասէ, հրեշտակ խօսի ընդ իս, որպէս ընդ մի ոք յաստուածախօս առաջին մարդարէիցն: Եւ նոցա դաղտնի լրտես կայուցեալ առ ի գիտել թէ ով պատմէ նմա զայն, կամ ուստի գիտէ նա զայս ամենայն: Իսկ զայս իմացեալ Մահմէտի զդաւաճանսն՝ ծածկարար զչար վարդապետն իւր սպանեալ ընդաւաղեաց. և ի նմին տեղւոջ նստեալ ինքն՝ լրտեսացն ասէ, յայսմ տեղւոջ հրեշտակ ինձ երեւեալ՝ մեծամեծ սրանչելիս պատմէ: Եւ նոցա տեսեալ զնա միայն՝ եկին, պատմեցին վրիպական, մոլորամիտ աղջին Տաճկաց: Եւ նոցա մեծախումբ արարեալժողով՝ դիմեցին յանջրդի, դիւական յանա-

պատն , և մեծագոյն պատուով դղիւաշունչն այն
Արհմէտ ածին յիւրեանց մէջն :

Եւ Փրկչական բանն անդանօր կատարիւր՝ յառ-
նել սուտ մարդարէի , զոր դիւալատիր Արհմէտն
առնել սկսաւ մարդարէութիւն : Առէ . Եթէ զուք
անսայր իմոյ մարդարէութեանս և քարոզութեանս
և առնէր՝ մեծ իշխանութիւն աղջիա մերոյ հասանէ ,
որպէս Հոռոմոց դիրն ասէ թէ . մեզ իշխանութիւն
վասն հաւատոյս մերոյ տուաւ յԱստուծոյ : Եւ զոր
իւրեանց ատրուշանաց և զոհից էին տեղիք՝ զմբէթ
Արրահամու անուանեաց և տեղի աստուածակոյս :
Եւ անդ հրամայեաց կոտորած (3) առնել եւ զօրն
զայն Արրահամու անուանեաց . և հրաման ետ չորեք-
կուսի ի զոհանոցն աղօթել քար արձան տայր կանդ-
նել . և համբուրել յանուն Արրահամու : Եւ առ նա
երանելի մարդարէն առնէր զմարդարէութիւնն եթէ
թողցէ այր զլին իւր և լինիցի առն այլում՝ եթէ
դառնացցէ առ այր իւր՝ ո՞չ ասլաքէն պղծելով պլո-
ծեսցի կինն այն : Զայս իսկ կատարեաց Արհմէտն :

Տալր ոմն տաճիկ ունէր կին գեղեցիկ , վասն որոց
յըղեալ սլաստգամ առ նա եթէ Աստուած հրամայեաց
թողուլ զլին քո . իսկ Տալրն այն զլին իւր ածեալ ի
մէջ հրապարակին՝ երդմամբ կացուցեալ վկայս՝ եհան,
արձակեաց յիւրմէ : Եւ Արհմէտն առ ինքն առեալ
զլինն՝ ելից զբղջախոհ ախտին իւրոյ տուփանս . եւ

յետ այնորիմ դարձեալ ասէ ցՏաղբն՝ Աստուած.
հրամայեաց առնուլ զկինք քո առ քեզ : Եւ այս օրէնք
տաղակի յազգ նոցա եւնուտ, ևթէ զկինք թողեալ ի
կնութենէ, ապա առ այլում եղեալ ի քուն՝ առ ինքն
առնու : Եւ այսալէս է անօրէն նոցա օրէնսդրութիւն
որ մինչ յահեղ անունն Աստուծոյ Երգնուն՝ ստեն,
և մինչ յառականս կանանց Երգնուն՝ անսուստ պա-
հեն : Եւ այլ ինչ բաղում աղտեղութիւն աւանդեաց
աղջին այնմիմ, որք են կարապետք և զօրք նեռինն
և լինելոց են Երկրապագուք նմա և մարտակիցը նորա
լինին : Առ նոսա ասէ օրէնեալն Պօղոս « մարտիք
սպականեալը մեղօր, անալիտանք ի հաւատս, որոց
անմութիւնն յայտնի լիցի յաւոր մեծի դատաս-
տանին Աստուծոյ » . և այլուր « լալու խակ ասեմ
զթշնամեաց խաչին « Քրիստոսի, որոց կատարածն
կորումտ է » :

Ի ընուլ 65 թուականին Հայոց Երեւեցաւ մոլարն
Մահմէտ ի Մեղին շահաստանի, և իրեւ եղեւ 70,
եկն ի գմբէթն Արքահամու, և անտի ելաւ յայն
շահաստան, որ այժմ կոչի յիւր անուն Մահմէտաց,
յսմանեանն Ասւիար (Աաֆէր) : Եղեւ քնոք ամ մի,
և զողջոցն ամին ի շահաստանին ասպատակ արարեալ
յամսեանն Շահ ռադի աւաղ (Աաֆէր, Ռէպալիէվիէլ)
սկսեալ թափեաց զգմբէթն Արքահամու, և ի Ո.ա.
մազան ամսոյ 19 նն այն ութերորդ ամ էր նորա

իշխանութեանն : Շատաղ (Շեվիալ) ամսոյ 15լն կռուեցաւ ընդ Ների (4) Պարսկի : Կուղիաթ (Գիլ գատէ) (5) ամսոյ իշխանարակել տունջեան և դիշերոյ եկն ի Մարտ . և անտի դարձեալ յիւր շահաստանն մինչդեռ 6 օր կայր ի Կուղիքջայ (Զիլիջիջէ) ամսոյ ի նոյն ամին, և եթաղ ամիրա ի Մարտ զԱԵդ Արու սիդայ որդի : և դարձան նորա ընկերուն ի Մարտ : Աբուրաքր Աբուհիայ որդի (6), աւագ էր ընկերացն, և այն, ինն տարի (էր) Մահմետայ իշխանութեանն : Ի տաներորդ ամին մեռաւ յաւուր Երկարաթի յամնեանն Շահ սարի տւաղի (Բէպալիլ Եփիլէլ) (7) յերկուցն կալեալ դիշխանութիւնն ամս տան : Եւ Երեբուասան ամ զմոլորականն իւր քարոզութեան զալունի հաստատեաց հաւատ . հ0 ամ ունէր մինչեւ Երեւեցաւ, եւ ի վաճառուն եւ Երբորդ ամին մեռաւ :

◇◇

Բ. — Որ յևս Մահմետի՝ սուստ մարդարէին, եղեն Ամիր-Մումեիր (8) :

Երկրորդ յիշխանութեանն Տաճեաց զինի Մահ-

մէտի նստաւ Արուրէրը Արուհինեան, և կալաւ ամս
9(9): Ումար Խաստարեան՝ 7 ամ։ Զնա սպանին(10) :
Ութման-Իրն-Քան(11) 11 : Ապա արդէլին զիշ-
խանութիւնն Ութմանայ, և Ութման ետ իշխանու-
թիւն Արդլայի(և) սպատիւ քրքմէլզէրս և զմօրուս :
Արտիա՝ ամս 9. Եղիդ-Իրն-Արտիայ՝ ամս 8. Արդրւ-
մէլիք-Իրն-Արվան՝ ամս 11 : Ի սորս աւորս էր
Հաջիջ-Իրն-Ուսուփ : Վլիթ՝ Արդլմէլփայ որդի,
ամս 9. Առլէման-Իրն-Արդլմէլփ, ամս 14. Ումար՝
Արդլ-Աղիզայ որդի, ամս 10. Եղիդ-Իրն-Արդրւ-
մէլիք, ամս 6. Հեշիմ-Իրն-Արդլմէլփ, ամս 20.
Վլիթ-Իրն-Եղիդ, ամ մի : Զնա սպանին. և շիո-
թունն եղեւ Տաճկաց : Մրվան՝ Մահմէտայ որդի,
ամս 4 : Սա սպան զԼուրիչիկա (Պուրէյիկա) զւսա-
ւորս Տաճկաց՝ արս 60, զսալանողսն Վլիթայ ամի-
բայի, առաջի խոր ակնարկեալ սպանողացն :

Եւ եկն Արլ-Արաս ի Մարաց օգնականութեամբ
և զօրօր Արու-Առլիսմոյ՝ Խորասանայ իշխանին, և
սպան զԱրվան . և կալաւ զիշխանութիւնն ամս 7 :
Եւ Արլ-Արաս Արդլայ՝ Մահմատայ որդի, Արցի
որդի, Արդլայի որդի, Արասաց որդի, Արդարմուտ
Աղիրայ որդի, որ այժմ աղջաւ կոչին Հեշամիկը :
Եւ սպան զաղտուկ զԱրուսաղիմ յորժամ եհաս
յիշխանութիւնն : Եւ յետ նորա սպանմանն և ինքն
վախճանեցաւ : (Սա) Արու-Զափար կոչեցաւ :

Արդաղայ՝ նորին եղբայր, ամս 20. նա մեռաւ ի
զմբէթն Աքրահամու : Մահղի որ կոչի Մահմատ՝
որդի Աքղպայի, ամս 9 : Մուսէ՝ ամ մի. Հարուն՝
Մահղեայ որդի, որ Մաղիսւնն կոչեն, ամս 25 :
Սա նեղութիւն անջափ հասոյց աշխարհի. և վասն
այնր բաղում զաւառը Հայոց վախեան ի Հոռոմս :
Մահմէտ որդի Հարունայ, ամս 3 : Հարուն մինչ
կենդանի էր՝ բաժանեաց զիշխանութիւնն իւր եր-
կուց որգուց խրոց՝ Մահմէտայ եւ Մայմոնայ. եւ
ըստ երիցութեանն ունիլ զիշխանութիւնն Մահմէ-
տայ ի Բաղդատ և ի Խորասան. և Մայմոնն ընդ
հակառակս ելեալ սրտուերաղմուլ՝ մեռանի Մահմէտ.
և Արղլաց որ և Մայմոնն կոչիւր, իշխեաց ամե-
նայնիւ Աքրեհիմ՝ ամս 10. Հարուն երկրորդ նատա-
ի Մահմէտայ Ամիր-Մումեի (12). եւ հայ թուա-
կանն էր 270 :

○○

Դ. — Վասն Բակուրայ ուսմեմն Եկրուս անուն՝
Նղեսալ կարտիկոս Աղվանից :

Խ վախճանելն Եղիսաղարու՝ Աղլանից կաթողի-
կոսի, ոմնյերկարնակ աղամողոյն Քաղկեդոնի Բակուր

անուն, երբեմն եղեալ եսլիսկոպոս Գարդմանայ եւ
Ներսէս յորջորջեալ : Աս ոխտաղբեալ Ազրամայ՝
Աղվանից տիկնոջ, ինոջ Վարաղ-Տրդատայ, որ էր
ի նոյն աղանդ հետեւեալ ինքէր դաշնս վասն փա-
ռամոլ տիրողոթեանն ասելով . Եթէ կամ է քո կո-
չել զիս ի հայրապետոթիւն Աղվանից, ևս արարից
զամենայն Աղվանա խոստովանոթեամբն Քաղկե-
դոնի : Եւ ունինդիր եղեալ նմա չարախառ կնոջն՝
խորհուրդ բերեալ ընդ եսլիսկոպոսունս և ընդ մեծա-
մեծս աշխարհին Աղվանից, և ոչ որ խմացաւ զդաւա-
ճանոթիւնն . յանձն առին առ հասարակ կատարել
զիսնդիրան : Իսկ սամենակալ Հոգին սուրբ աղղեալ
եսլիսկոպոսին Մեծ Խրանց Յովիկայ, առաջի մեծա-
խումբ ժողովցն խնդրեաց ի Ներսիս ձեռնարկ
նդումել զժողովն Քաղկեդոնի և զտումարն Աւոնի
նորին մատանուով, և ընկաղեալ զնամակնի ժողովութեան
արեւելից՝ ըստ կանոնական սահմանի ընկաղեալ
եղեւ : Եւ նոյն ինքն Յովիկ եսլիսկոպոս հանդերձ
այլ եսլիսկոպոսօք վերակոչեն զնա ի հայրապետական
չնորհս սուրբ ամեռուցն Աղվանից : Եւ նոյնժամանյն
Յովիկ եսլիսկոպոս առ ինքն առեալ զնողովից զիրն՝
ղնէր ի սրբահետի, և յետ այնր կեցեալ ամս 14 վո-
խաղրիւր ի Քրիստոս :

Յայնժամ զտեալ տեղի Ներսիսի կատարել ըզ
կամս խր՝ խմույն վտթայ ի դաւառն Մեծ Խրանց

և դործակից խր գտեալ դջաբարիա՝ վանաց հայր,
տայ նմա խորհուրդ առնել զնա եսլիակոսոս եւ
չնորհել նմա զտէրունի հասն, միայն թէ տացէ ըղ
նորին ձեռնարկն զի այրեացէ ։ Եւ նորա տուեալ
զտորը ուխտի դիրն առ նա, առ և անդէն ի տեղն
հրկիղեաց. և դջաբարիա ձեռնադրեաց եսլիակոսոս
Ա'նձ Իպանց. և ի կարեւոր բարեկամոթեան զնա
կտէալ՝ դարձու. ի հին վախածն, զոր ի (բաղում)՝
ժամանակաց սպասէր. տիկնոջն Ապրամաց զնա
ստիալեալ և նորին օգնութեամբ և այլոց նախաւ
բարաց, որոց զորոմնէր ընկալեալ՝ քակեալ աւերեաց
զբաղում սեղանս եկեղեցեաց, յորում յաղթողն
եղեւ. և զարժանաժառանդ մանկունս եկեղեցւոյ
զուղղախառս հալածականս արար տարարնակս,
նախ՝ զերանելին Խարայէլ նշանադործ եսլիակոսոս
Ա'նձ Կողմանց, հալածեաց, որ զբաղում աշխարհս
Խաղբաց և Հանաց դարձոյց ի քրիստոնէութիւն.
Ընդ նմին և զԵղիսողար՝ Գարդմանաց եսլիակոսոս.
Խակ ոմանը յեղիակոսոսաց նշկահեցին ի նմանէն՝
Յովհաննէս՝ Կապաղակաց եսլիակոսոս, Աահակ՝
Ամարասաց եսլիակոսոս, Ամէօն՝ Յոշոց եսլիակոսոս,
Շերոյ՝ մեծ իշխանն Ազգանից, հանդերձ խր ա-
զատօքն և քաղմութեամբ ուխտից եկեղեցւոյ զու-
մարեալ հանդէս ժողովոյ՝ նզովեցին զԱերսէս ընդ
ամենոյն հերձուածողս ։

Դ. — Թուղթ Ժողովոյն Աղլանից սու Եղիա՝ Հայոց
կարողիկոս :

Տեառն Եղիայի՝ Հայոց կաթողիկոսի . միարան
ժողովոյ Աղվանից Երկրագութիւն : Վասն զի զմի
հաւատ ուղիղ հարքն մեր ընդ հարսն ձեր (ունելով)
զմիմեանց հողային զհողւոց փրկութիւն, և իներեւ
Տեառն Աստուծոյ զօրացեալ տիեզերակործան,
զեղիսակրօնն Քաղկեդոնի՝ Ելից զտիեղերս. և մեր
կողմանքս ցայսօր ժամանակի անխառն յայնմ աղան-
դոյ էր մնացեալ : Խակ այժմ, զոր կարծէաբ գոլ
հովիւ բարի մեղ զՆԵրաէս, սա դայլ Եղեալ օձտեւ
սկառ զբանաւոր հօտս Քրիստոսի, վասն որոյ կամք-
ցար յուշ առնել սրբութեան ձեր՝ յայց Ելանել որալ, և
ձերոց անդամոց, և բժշկեւ զրեկումն մեր : Ո՞զ
Էրուք ի Տեւ :

Ե. — Թուղթ Եղիսյին Հայոց կարողիկոսի, առ
Արդ-Մէլիք Ամիր-Մումնի ի նոյն խորհուրդ :

Տիեզերակալ Արդլայի Ամիր-Մումնոյ. Եղիսյին
Հայոց եսլիսկոսապատէ : Յամենակալէն Աս-
տուծոյ ունիմք զծառայական աշխարհս հնագանդ
ձերոյ տէրութեանդ . և մեր և Աղվանիք սլաշտէլ
ունիմք դըբիստոսի աստուածութիւնն . իսկ այժմ
որ Աղվանիցն է կաթողիկոս նստեալ ի Պարտաւ-
խորհուրդ արարեալ ընդ կայսերն Յունաց՝ ղնա քա-
րողէ յաղօթս . և ղաշխարհս ստիալէ զի ի հաւատ եւ
ի միաբանութիւն նմա եկեսցեն : Արդ՝ դիտութիւն
ձեզ լիցի . և մի անփոյթ արասցես վլասն այդորիկ .
զի կին մի մեծատուն խորհրդակից է նորա . զորա
պատուհասակոծ հրամացէք առնել մեծ իշխանու-
թեամբ ձերով, ըստ արժանի խրեանց դործոց, զոր
առ Աստուած կամեցան մեղանչել :

Զ. — Պատասխանի թղթոյն Եղիայի՝ Հայոց կարուհին, յԱյոն-Մելիքի, Ամիր-Մումենոյ :

Զառնդ Աստուծոյ զԵղիսյի զԱրմենեան աղջի Պաթողիլիք (13) կարդացի զզիր մտերմութեան, և ի շնորհս քեզ առաքեցի զծառայ խմ հաւատարիմ բազում զօրօք. և վասն ապստամբացն Աղվանից ի մերմէ տէրութենէ հրամացեալ եմք ըստ կրօնից առնել առ նոսա ուղղութիւնս. և զմեր սլատուհասդ քո առաջի ի Պարտաւ արասցէ ծառայդ մեր՝ ըզ Կերակս և զկինն հոմանիդ ի նմին (14) չղթայս Երկաթիս հարեալ անարդանօք ածցէ ի դուռն արքունի դի ի տեսիլ ամենայն ասլատամբացն նշաւակս զնոսա արարից :


♦♦

Ե. — Գաղն Եղիայի՝ Հայոց կարողիկոսի, ի Պարտաւ. և պատմել զԵրակս. և ի տեղի նորին յաշորդել զԱխմոն սարկաւագավետն կամօք ժղովոյն Աղվանից :

Եկեալ հասանէ մեծ հայրապետն Հայոց Եղիա ի

մեծ քաղաքն Աղվանից Պարտաւ. և նստաւ ի մեծ
եկեղեցւոջն . հրամայէ ածել զԵրսէս առաջի իւր .
և նա ի թարստի լեալ ոչ գտանիւր :

Յայնժամ մեծահաւատն Եերոյ՝ Աղվանից իշխան,
ըմբռնեալ զմօտակայս նորա՝ հրամայէր ածել ըզ
Ներսէս, և կացուցեալ զնա ի մէ ջրադմամբոխատենի
առաջի Եղիսայի : Եւ անպատասխանի դոլով եղիելին
այն՝ ըստ արքունի հրամանին տուրժանելի վիրացհան՝
զիալիւր, զի ոտն ընդ ոտն բաղադանեալ կապեցաւ
ընդ ինոջն . և հանդերձեալ էր վարիլ ի տար աշա
խարհ : Որ սակս այնորիկ անսուաղ եղեալ զաւուրս
ութն՝ վախճանեցաւ. և ետ թաղել զինքն նովին
երկաթեօք. և նորովեաց զԵերոյ, զի նա եղեւ առաջ
նորդ չարի նորա և Սպրամայ վասն հակաճառու
թեանն որ ընդ նա և ընդ Սպրամի վերայ իշխաւ
նութեանն : Եւ Ներսէս կալաւ զաթուն ուղղափառ
ութեամբ ամս 14. և ի չարափառութեանն՝ ամս 3
և կէս նմանեալ նեռինն որ հանդերձեալ է լինել ի
յետին աւուրի : Այսոցիկ այսպէս եղելոյ՝ ընտրեցաւ
ի նմին ժողովոյ Սիմէօն՝ այր պարկեշտ և սուրբ. և
ձեռնազրեցին զնա Աղվանից. որ զաղտորումն Ներս
սիսի երարձ յաշխարհէս, և բաղում կարգս ուղղու
թեան աւանդեաց եկեղեցւոյ վրիալելոյ. և զեղիելի
Ներսիսի զբեանն, զոր ցեալ էր յարկեղու վի հերձ
սւածօք, սուեալ զամենայն ետ ի զետն Տրտու յիւր



Հովոց տեղւոջն որ Բներդական (15) կոչի, կացեալ
յախոռն ամմի և կէս :

♦♦

Ը.— Զեւնարկ զոր խնդրեաց Եղիս՝ Հայոց կարո-
ղիկոս, ի ժողովոյն Աղվանից վասն միարանու-
թեան և ոխտի հաստատութեան Հայոց և
Աղվանից :

Քանդիբազում և աղդիաղդի չարութեամբ, որպէս
սովոր է յամենայն ժամ բարիատեաց թշնամին մեր
և հասարակաց փրկութեան հակառակորդն սատա-
նայ, որսալ զալարզամիտս ի մարդկանէ, և ընդդէմմր-
ցիլ մանկանց եկեղեցւոյ ըստ իւրում բնածին բարուց
հնարել և յընտրեալն կամեցեալ ըստ բանին եթէ
ոսոխն մեր սատանայ իրրեւ դառիւծ դոչէ եթէ զո-
կանիցէ : Քանդի ի նախաստեղծ լինելութեան
նախահօրն մեր նոյն չարութիւն ասկատամբ զօրա-
կանին արտասահմանեաց զմեզ ի կենաց փայտէն և
յանուշակ և ի հեշտալի փափկութեան զրախտէն (16). և սատանայ ի սկզբանէ մեղանչէ՝ մանաւանդ
ի թոյլ և յողոյողդ խորհուրդ դիւամբուար անմիտ

մարդկանց, որոց կուրացեալ են միտք ըստ ժամանակաց չարութեամբ գնացելոց զի մի ծաղեսցէ առ նոսա լոյս փառացն Քրիստոսի. զի որովք զրկեցաւ բանսարկուն սկզբնատիալ չարութեամբն ի մոլար խարէութենէ կոոյն երկրագութեան, շահիլ կամեցաւ այժմ զնոյն ի ձեռն անխմաստ մարդոց պառակտողաց եկեղեցի Աստուծոյ նորաձայնութեամբ և ձեռով անսրբով զշահս և դղղոխա. սակա որոյ և ի միջի մերում երեւեալ այժմ չարարմատ դառնութեան աղանդոյն Նեստորի և Մաքսիմոսի ի ձեռն Ներսիսի ամբարշտեցելոյ, որ ներողութեամբ Հոգուոյն սրբոյ կարդեցաւ յառաջնորդութիւն տանս Աղվանից, և խորամանկութեամբն եղեւ հաւատական կորոյս և մոլորեցուցիչ հոգւոց մերոց : Վասն զի զիրկական աւանդութիւն առաքելաբարող հարցն մերոց, որ անարատ ձեռօք հաստատեալ էին յեկեղեցիս, անարժան ձեռօք ի բաց կործանեաց, զրարենսախանձ Եսլիակոպոսունս ուղղափառութեան հաւատոյն և զաւանդասահան քայբայեաց. զոմանս բամբասանօք հալածեաց յօտար երկիր, զոմանս տրտոմութեամբ լցեալ վտանդեաց, զալատուական աթոռսն քակտեաց, եւ զբանակա ճզնաւորական կրօնաւորացն այլ և այլ շիոթեաց. յորմէ ցրուեալ եղեն Քրիստոսի սուրբ մարմնոյ սկատուական անդամբ. և որդիք Ախոնի բովանդակ մոլորեցան խարէ-

ութեամբ. և տաճար սրբութեան մերոց եղեւ յապաշանութիւնը ըստ ողբերգութեան Երեւմիայ. բարձան սրբութեան մերոց վառք. և ի չորեքեզերեան տիեզերա սլարծանք սլարծանաց մերոց շիջեալ կործանեցաւ :

Այլ սակայն յայսմ վայրի օրհնութիւն և զոհութիւն եղիցի Փրկչին Աստուծոյ, որ ոչ ետ թոյլ թշնամույն մարդկան յառաջել խարս. Եւ զիացեալ ի տեսարութիւնս մեր՝ ողորմեալ ժողովրդեան մերում առարեաց առ մեզ զարատաւականոց հոյր զեցիս՝ շնորհիւն Աստուծոյ Հոյոց կոմմոցիկոս, զայր սուրբ և ճշմարիտ, զուգամիու որրոյն Պրիզորի, ձերափ եռիակուալոսօր և վարդապետօր. Ախմէօն՝ Խորիսուանեաց եռիակուոս, Ասրդիա՝ Ամասունեաց եռիակուոս, Ասրդիա՝ Ռոտուկոց եռիակուոս, Յովհաննես վարդապետ, և այլ բազում աշակերտելոք ձեր Եկիմի, հասացը ի մացրագարարս մեր Պարտու, և ձերով քաղցրուոցց վարդապետութեամբ բարձեր զշարն ի միջոց մերմէ, և յիշելով զառաջնոց հարցն մերոց սուանդութիւն՝ մերանորոդեցէր զոմմոռ հոյրապետութեանս մեր ի ձեռն սրբանեալ առն, որոց մեր Եմբ վիայր ճշմարտութեանն ։ Ա ան որոց, մեր ամեններեան. Ախմէօն՝ Աղքանից կամմոցիկոս, Յովհաննես՝ Կառլազակոց եռիակուոս, Ախմէօն՝ Յուրց եռիակուոս, Ատհակ՝ Ամարտաց եռիակուոս

սրբասէր՝ Քչիկ՝ Աերս-Միհը վանաց տանուտէր,
բոլոր ոխտիւ մերով, որք անխռուն յաղանդոցն
ուահեցան, Գառոյ վանաց տանուտէր, Լաստարոյ
վանաց տանուտէր, Յովսէփաց վանաց տանուտէր,
Գատիթ՝ Կաղանկացուաց վանական, Պետրոս՝
Տղուակերտոյ վանական, Պօղոս՝ Ազածորաց վանա-
կան, քրիստոսանէրն Շերոյ՝ Ազգանից իշխան, Զո-
տնքոց՝ Ազգանից աղարածես, Վարդան պատրիկ և
նորին եղբայր Գաղղիկ, Բարի Հրահատեան, Վախո-
տանդ Վարազմանեան, Պատրիկի ի. Բարոյեանյաղըէ
թագաւորաց, Վահան ի Վարազ-Յոհանեսն,
Թմէողորոս յԱնաստոյեան, Ուստում ի Վարազա-
քոյեան, Զար-Միհը ի Վարազ Քուրդափետն յազդէ
թագաւորաց, Մահմատ ի Շերոյեան, և ամենայն
աղաւոր աշխարհիս օրհնեցար և ընկուղար միարանու-
թեամբ հոգեւորաց և մարմնաւորաց դաստիքական
հաւատն մեր, զոր նոխ ի որրոյն Եղիշայէ հիմա-
դրեալ, և ասօն ի որրոյն Գրիգորիէ հաստատեալ,
որ ցոյժմ ոչ էր առերիւրեալ ։ Եւ ի հասանեալ
վարձանաց հասաց Աստուած(17)զօդնութիւնիւրի
ձեռն վախանորդիուր որրոյն Գրիգորի, որոյ ուղղա-
վառութեանդ էար աշակերտք և եղիցուք՝ Տեսան
Եղիշայի՝ Հայոց կաթողիկոսի, որ եղեւ վրէժինողիր
թշնամոյն արդարութեան ։

Եւ արդ մեր ամենեթեան նորմեամբ զամենացն

հերձուածողսն՝ զառաջինս և զմիջինս և զվերջինս՝
զնոմինոս և զնորին վարդապետն Արիոս, զվաղեն-
տինոս, զվաղինար, զնիոդորոս, զՄանի, զՄար-
կուլն, զԵւտիքէս և զՆեստոր և զԹէոդորետոս,
զողովն Քաղկեդոնի և զտումարն Լեւոնի, ըդ
Մաքսիմոս և զաշակերտս դորա. Ընդ որս և զեղկե-
լին մեր Ներսէս նզովեցաք, որ հաւանեալ եղեւ
երկարնակ աղանդոյն, և որք հաւանին : Կոյն կա-
նոնա առաջի Աստուծոյ և ձեր սրբութեանդ սպայ-
մանեցաք. յայսմէւտէ մի ոք իշխեսցէ իմէնջ արտարս
ելանել յաւանդութենէ; հարցն մերոց : Եւ եթէ
յանդուղն որ գտցի, որ վերստին զնորածայնութիւնն
բերցէ ի մէջ, այնպիսիքն նզովեալ եղիցին ի սրբոց
Երրորդութենէն և ի մերմէ միարանութենէս. և ի
չնորհաց Հողեւոյն անմասն եղիցին, և խոստայեալ
արքայութեանն մի հասցեն : Եւ եթէ յեսիսկոպոսաց
ոք իցէ՝ լուծեալ լիցի ի պատուոյն, և ի բարձրու-
թենէ աթոռոյն անկցի, և եթէ ի քահանայից իցեն՝
զնոյնս կրեսցեն. և եթէ ի կրօնաւորաց ոք իցէ՝ նզո-
վեալ հովածեսցի, և եթէ յաղատաց ոք իցէ՝ արդե-
լեալ յեկեղեցւոյ յընկերս մի խառնեսցի մինչեւ ի
կարդ ուղղութեան եկեսցէ :

Կցնարէս վասն ձեռնաղրութեան կաթողիկոսաց
Աշվանից կարդ կանոնեցաք. քանզի ի սուղ ինչ
ժամանակս կաթողիկոսը մեր զկարդն յեսլիսկո-

պլոսացս մերոց առին. խակ այժմ զի անփորձ եւ
անընտրող գործով եղեւ, եւ հերձուածեցաւ աշ-
խարհ։ վասն այդորիկ պայմանեցաք առաջի Աս-
տուծոյ եւ ձերոյ հայրութեանդ. Եթէ ձեռնա-
զրութիւն հոյրապետութեանս Աղվանից ի սուրբ
Գրիգորի աթոռէն լիցի միաբանութեամբ աշխարհիս,
որպէս եւ էրն ի սրբոյն Գրիգորայ անտի. զի անդ
ընկալար զլուսաւորութիւն . եւ ճշմարտութեամբ
զիտևմք թէ զոր զուր ընտրէք՝ հաճոյ Աստուծոյ է
եւ մեղ, եւ յայսմ պայմանի մի լիցի իշխանութիւն
ումեր արտարոյ եղանել եւ այլաձեւ ինչ առնել.
ասլա Եթէ ոչ՝ անվաւեր եւ ունայն լիցի, եւ մի հա-
մարեսցի ճեռնազրութիւնն այն ընդունելի : Այդ՝
որք երկիւղիւն Աստուծոյ մերոյ ասհմանազրու-
թեանս կատարիչը լինին՝ ի սուրբ Երրորդութենէն
օրհնեալ լիցին, եւ յամենայն ծառայից Աստուծոյ
ուղղափառաց. խակ եթէ որ ընդդիմացեալ թիրես-
ցի ի ճշմարտութենէ աստի՛ ինքն տացցէ Աստուծոյ
պատասխանի որք եւ լիցենն :

Գրեցաւ զիրս այս միաբանութեան Աստուծոյ
միջնորդութեամբ վասն հաստատութեան հաւատոյ
անշարժ լինելոյ ի մշջ երկոցունց յ85երորդ ամի
Տաճկաց, եւ ի հայ թուականիս 148. յամենան Հրո-
տից. եւ ինքեցաւ կամօք մերովք եւ մատանեօք. որոց
անուանք ի վերոյ զրեալ են :

Թ. — Գիրպայմանի Տեսուն Եղիսայի՝ Հայոց կարուղիկոսի, առ Ադրբան :

Զարժութեան չարախտուին Կերսիտի՝ որ յԱղվանաէր սակա հաւատոյ, եւ զներկումն երկարմանակ տղանդոյն Քաղկեդոնի ի բաղմաց սերմանեալ հողիա, եւ խորամաննկ չարութեամբն իւրով վտանդեալ զեսիակուալունս, քահանայս եւ գլորոնաւորս. վտան որոյ զգացեալ իմ Եղիսայի՝ Հայոց կաթողիկոսի, և կի հանդերձ լսով եսլիսկապաօք յԱղվանից ի դերահոչակ քաղաքարդ Պարտու. եւ ժողովեցան առ իս հոգեւորք եւ մարմնաւորք. եւ ցուցին ինձ զայն գիր, որ (ով) յառաջն նզովեալ եւ ի բաց ընկեցեալ էր Հայոց զԿերաէս ի կաթողիկոսութենէն (18). թէ ալէտ եւ նա բռնակալութեամբ կացեալ էր յաթուն, սակայն նոյն եսլիսկապատունքն եւ բովանդակ ուխտ եկեղեցւոյ վերստին նղովեցին զըսով եւ կնըսով, Աստուծոյ միջնորդութեամբ եւ մեօք հանդերձ. եւ պայմանեցին եթէ կամբ ի նոյն հաստատութեանս, եւ ոչ խառնիմք ի զեղծ աղանդն Քաղկեդոնի եւ ընդ չար վարդապետութիւնն Բակուրայ : Արդ եթէ կան ի նոյն պայմանի եւ յաւանդութեան սուրբ հարցըն՝ ընկալարուք զըսուա եւ սիրեցիք որսէս հոգեւոր

տեսուչս ձեր, ասկա եթէ թիւրեսցի որ յայս պայման
նէս՝ կաթողիկոս կամ Եպիսկոպոս՝ չունի իշխանութեան
թիւն ի ձեր վերաց, այլ կազ ձեզ յեկեղեցիս ձեր, եւ
հանապաղ անդադար աղօթս մատուցանել առ
Աստուած. ի ձեր վերաց իշխան Աստուած լիցի եւ
ուղղափառ վարդապետք : Եւ ետու զայս յանհոգութեան
ձեզ սրբասիրաց Քչկայ, Ներս-Միհրի վանից
տանուտեառն, եւ Գրիգորի եւ Յովենիայ վանից
տանուտեառն :

Ես Եղիա՝ Հայոց կաթողիկոս, հանդերձ իմ
Եպիսկոպոսօք առի զմիաւորութեան զիրոդ ի ժողով
վոյդ Աղվանից, եւ ետու զայս պայմանի զիր ձեզ
զի մի որ յանդզնեսցի թիւրել ինչ զեղեալ ոխոաւ
զրութիւնդ : Եւ զերկուեան նամակադ կնքեալ խոյլ
մատանեաւ, ետու ի սրահեատ ի Ներս-Միհրի ուխա-
տի ի ձեռն սրբասիրի Քչկայ հօր պայման անհո-
գութեան :

ԺՅ — Գիր անուանց նախարարաց Աղվանից բառ
նախադրութեանն , զորս ներքինին Այրու-Մե-
լեքի Ամիր-Մումենոյ տարառ եւ եղ ի դիւանի
արքունի :

Զայս սուրբ Հոգւոյն խոստովանութիւն , զոր
խնդրեցաք ի ժողովոյն Պարտաւայ դրով ծանու-
ցանել մեղ ղճշմարտութիւն՝ ղերկեկի հերեսիու-
թեանցն զաւող բանա , եւ զհոդեղուարձ վարդա-
պետացն ընդդիմական . եւ նոյն ժամանյն իմացաք
զատոցդն , նախօ եւ Շերոյ՝ Աղվանից իշխան , եւ
Զուանքոյ՝ Աղվանից սպարապետ , Վարդան պատ-
րիկ եւ նորին եղբայր Գաղիկ , Վախտանգ . ի Վա-
րազմանեան , եւ նախնի է սոցա քաջն Վարդան ի
Միհրական տոհմին , որ յաւուրս Վաչաղանայ՝ Աղ-
վանից արքայի , յԱղուէն ժողովոյն յարքային նախա-
դահ եղեալ բնաւորեցաւ ի Գարդման . Պատրիկ ի
Քարոյեան ի յարքայիցն Պարսից , որք ի նորին
հրամանէ Վաչաղանայ արքայի բնակեցան յԱղիդ
գաւառի . եւ սորա նախնիք՝ քաջն Վաչաղան եւ
Վաչէ եւ որք ըստ կարդի կան ի ղրիդ . Բարի Հրա-
հատեան , որք յԱտրապատականու իշխանացն են
բնաւորեալք ի Կապաղակ եւ ի Կողթ . Վահան ի

Վարազ-Յոհանեան, ի Մադիանացւոյն Պարսից
Յակոբիկ հաւատով, որք եկեալ ի Կամրիձան բնա-
կեցան. Ոտատոմ ի Վարազարոյեան, որք յԱտահըր
գաւառէ Պարսից բնակեցան յՈւտի դաւառի յաւա-
նին Կաղանկացտուաց . Զառ-Միհր ի Վարազ-
Քարդաբեան եւ Մահմատ Շերոյեան , Դալմանց
տէրանցն որդիք, սոքա բնակեալ էին ի Դալմայ հողսն
արքայատուր յԱղմանից աշխարհիս :

Այսր ամեներեան որ գրեցան ի դիւանի Արդըլ
Մելքի Ամիր-Մումնւոյ, սակս այսորիկ եթէ զորս ի
սոցանէ զտանեն երկարնակ եղեալ՝ սրով եւ գերու-
թեամբ սալառեսցեն : Այսպէս եղեւ խաղաղութիւն
ամենայն եկեղեցեաց Աղմանից :

◇◇

Ճ.Ա. — Կանոնք Տեսան Սիմոնի Աղվանից կա-
րողիկոսի, յետ կորժանման Ներսիսի :

Այս կանոնալրութիւն եղեւ ի Սիմոնէ Աղ-
վանից կաթողիկոսէ, յորժամ նստաւ յաթուն, ի
ժողովումն որ վասն անիծելցն Կերսիսի եղեւ, զի

զիարդ եկեղեցեացն այլայլեաց. վասն որոյ հարկ եղեւ
վէրատին առնել ուղղութիւն :

Ա. Մինչ կամեցաւ գթալի մեղ բաղցրութեամբն
իւրով բարեբար եւ մարդասէր ամենակալն Աստ-
ուած, ըստ մեծի ողորմութեան իւրում, եւ վասն
բաղում սիրոյն իւրոյ կարդեաց զմեղ հովիւս, տե-
սուչս, առաջնորդս բանաւոր հօտի իւրոյ, որ է սուրբ
եւ առարելական եկեղեցի. եւ շնորհեալ զայս մեղ
Քրիստոսի զաստուածային եւ զմեծ սկատիւս ոչ
ինչ յաղագս մերոյ բարեգործութեան եւ արժանա-
սոր լինելոյ. այլ ըստ բաղում ողորմութեան իւրում
կամեցաւ ինքն, եւ պարզեւեաց մեղ շնորհիւ իւրով,
որպէս երանելի առարեալն ասէ, որով Քրիստոս
խօսէր. Հողին սուրբ եղ զմեղ հովիւս, տեսուչս
հօտի իւրոյ հովուել արդարութեամբ. որոյ սկատուի-
թեմ ձեղ զգո՞յշ կացէր անձանց եւ հօտիդ : Այլ
եւ յորժամ Մովսիսի սկատուիրէր Տէր վասն քահա-
նայիցն. այսպէս ասէ, « Կայուցից զբեղ զլուխ եւ
առաջնորդ ժողովրդեան իմոյ զլուշացուցանել նոյս
պահել զսաւուիրանս իմ ». Ժրացիր եւ քա՞ջ լեր եւ
մի՛ հեղդասացիա » : Ըստ նմին օրինակի եւ ի ձեռն այ-
լոց մարդարէիցն եւ զմեղ զլուշացուցանէ Տէր.
դէտ կայուցի զբեղ ժողովրդեան իմոյ . զգուշա-
ցուցի՛ք նոյս սկատդամն, որպէս յինէն, դառնալ
մեղաւորին եւ անօրինին ի չար ճանապարհէ իւրմէ

եւ կեալ. եւ եթէ ոչ զգուշացուցանէր՝ զարիւն նորա
ի ձեռաց ձերոյ խնդրեցից : Զայս ահաղին եւ սու-
կալի պատուէր ունիմք ի Տեսունէ, այլ եւ զայն եթէ.
Ետու ձեզ իշխանութիւն թողուլ զմեղս եւ արձակել
ի կաալանաց մեղաց զմարդիկ : Եւ արդ՝ ոչ եթէ
մերով անձամբ կամ զօրով եամբ առաք զայս իշ-
խանութիւն, զալատիւ եւ զաթու առարելական.
այլ Արարիչն եւ Հաստիչն ամենայնի կարդեաց
զմեղ յայս տեղի հովուել զժողովուրդս իւր վասն
իւրոյ հաճոցից :

Բ. Վասն որոյ (19) սիրելիք եւ եղբարք իմ պատ-
ուականը եւ ընտիր աշակերտք Քրիստոսի եւ
ծշմարիտ ծառայք պատուիրանաց նորա՝ պարտ եւ
արժան է մեզ պտղաբերել Աստուծոյ պատուլ բարի
եւ քաղցր ի հաճոյս նորա. եւ շինել ի վերայ հիման
առարելական, որ է Յիսուս Քրիստոս, ոսկի, ար-
ծաթ, ականս պատուականս, այսինքն զանազան
առարինութիւնս եւ զամենայն գործ բարի. զի յե-
րեւիլ Փրկչին մերոյ Աստուծոյ ընդունիցիմք զան-
թառամ փառաց պատկն :

Արդ շնորհիւ սուրբ Հոդույն եւ պատուիրանի
նորա, որպէս հրամացեաց մեզ Տէր ի մեռն մարդա-
րէից, առարելոց եւ վարդապետաց. նախ սիրել
զԱստուծ ի բոլոր սրտէ, եւ պահել զպատուիրանս
նորա զլնկալեալս ի ծշմարիտ եւ յաստուածարեալ
ջ.

հարցն մերոց՝ անշարժ եւ հաստատուն ունիլ. նոյն պէս եկեղեցւոյ սրբոյ կարգս անխափան սլահել ի ձեռն անարատ քահանայից եւ սպասաւորաց սլայծառացուցանել. զմիմեանս որսկէս զանձն սիրել. եւ միարանութեամբ կրօնաւորիլ ըստ կանոնական հրամանի, եւ մի թողացուցանել եւ ոչ տալ անարժանից եւ դինուորական մարդկանց եկեղեցւոյ ունիլ իշխանութիւն, մի պոռնկորդաց, մի շնացելոց, մի սպանանողաց, մի գողոց, ստոց եւ սուտերդմանց, մի դրկողաց եւ չարակն ագահից, զօշաբաղաց, եւ մի ամենելին դինուոր մարդկանց հեծելոց և մաքսապետաց մի ոք իշխեսցէ տալ զեկեղեցւոյ իշխանութիւն. եւ մի դհացն եւ դչասն տալ այնալիսեացն, դի աստուածային օրինօքն զոր մատուցանէր ժողովուրդն ի տուն Աստուծոյ վասն մեզաց, զայն քահանայր անարատը մատուցանողը եւ սպասաւորք սեղանոյն վայելէին. զի նոցա է հասն. եւ խնդրել յԱստուծոյ զտիւ եւ զզիչեր զքաղցրութիւն եւ ըզհաշտութիւն վասն աշխարհի, զթողութիւն մեղաց եւ զառողջութիւն հողւոց եւ մարմնոց. եւ ոչ անարժանից կամ դինուորաց հրամայեալ է ունիլ զիշխանութիւն եկեղեցւոյ, եւ շարժել զքարկութիւն ի վերայ աշխարհի եւ անձանց խրեանց : Զի Տէրն փառաց յորժամ սրատուիրէր Առվախի յաղաղս խորանին ասէր. զքահանուց սուրբս, անարատս ընտ-

րեացյաղղէն Ղեւեայ եւ մի յայլ աղղացն Խարայէլի
զինուոր կամ անարժան յանցաւոր ոք, կամ արա-
տաւոր, որպէս օրէնքն խակ ասեն թէ. մի իշխեսցեն
անարժանքն կալ առաջի սեղանոյ խմոյ, եւ ի հասխն
իշխեսցեն ուտել: Այլ եւ քահանայութիւնքն որ
անարժան վարուք իցեն՝ մերժեալ հեռասցին ի
ժառանգութենէն. եւ դի սովորական ժողովուրդքն
ամենեւին մի մերձեսցին մի ի սկաշտօն, մի ի կարդ,
մի ի տեղի քահանայից. եւ ոք ոք յանդգնեսցի՝
պատուհասեալ սատակեսցի, որպէս Կորիսն, Պա-
տան եւ Արիրոն որք խորասոյզ եղեն, կամ նոյն
ինքն Ողիա, նոյնալէս եւ այլը բաղումք՝ որք (ի վեր)
քան ցկարդ խրեանց յանդգնեցան պաշտել զԱսո-
ուած, դի էր օրինակ խորանն եւ քահանայքն նորոյ
ուխտիս եկեղեցւոյ սրբոյ, յոր չիշխէին կեալ անար-
ժանքն կամ զինուորքն : Զնոյն հրաման առաւել
տիրացուցին առաքեալքն հրամանաւ Փրկչին ասե-
լով եթէ հաճոյ թուեցաւ Հոգւոյն սրբոյ եւ մեզ
այսալէս կարդել: Մի իշխել զինուորաց եւ անար-
ժանից ընդ իշխանութեամբ արկանել զեկեղեցի, եւ
ոք ոք յանդգնիցի՝ նղովեալ լիցի. ըստ որում՝ եւ
յերջանիկ հարցն մերոյ հաստատեալ են. եւ մի ու-
մեր լիցի իշխանութիւն զեկեղեցի Աստուծոյ ընդ-
ձեռել անարժանից եւ զինուորաց կամ վաճառել
որպէս ստացուած, կամ իշխանաց տալ կամ նոցին

դայեկաց ի սլարդեւ : «Սոյնալէս եւ քահանայք մի իշխեսցեն զհացն կամ զհասն տալ եղբարց կամ որդւոց անարժանից, եւ մի վաճառել իշխեսցեն զժառանդութիւն եկեղեցւոյն. այլ թէ քահանայք և եղբարփն և որդիլիքն իւր յանարժանութեան գտոյին՝ մերժեալ լիցին ի ժառանդութենէ, եւ որք յանդըդնին՝ նղովլեալ եղիցին :

Զայդ հրաման ունիմք մեր յԱստուծոյ եւ ի նորին սլատուիրանացն, եւ ո՛չ սլարտ է Աստուծոյ հակառակ լինել զրոյն օրէնք վասն եկեղեցեաց ամենայն աշխարհականք ունին եւ այսօր, զի յորժամ վաճառեն զդեղս իւրեանց՝ սեպհականօք ունին . եւ այսպէս զրեն զկտակն եթէ ուրոյն յեկեղեցւոյ և յեկեղեցւոյ հողոյն : Եկեղեցիք Աստուծոյ ազատ են, եւ չեն ընդ ուրուք իշխանութեամբ, բայց եսլիակոսաց. եւ որոց նորա տան արժանաւորաց (20) ձշմարտից, սուրբ քահանայից եւ ոչ անարժան զինուորաց, զոր յայսհետէ, եւ յառաջ մի ոք իշխեսոյէ առնել զայդ այդակէս, զի հակառակ Աստուծոյ սլատուիրանացն է, եւ կորուստ հոգւոյ եւ մարմնոյ զադատութիւն եկեղեցւոյ ի ձեռն անարժանից մատնել. վասն որոյ լսեմ ի բաղմաց տրտնչելոյ թէ ի յոլով տեղիս զեկեղեցիս Աստուծոյ վանականութեամբ զինուորմարդիկ ունին ոք, սակա չար զործոց իւրեանց, չեն արժանի մտանել յեկեղեցի, թողի թէ զեկեղեցականն ուտել

զհասն եւ զհայն : Վասն որոյ սրբասնեալ Քշիկայ՝
Ներս-Միհրայ վանից տանուտեառն, զրեալ է թէ՝
Վարաղ-Տրդատայ՝ Աղվանից իշխանի, տուեալ է
գեղիկ փորրիկ սրբոյ Խաչիս ի սպասաւորութիւն
սակա Գոդւոյ մասին :

Արդ այժմիկ Փուսան-Վեհ անուն հեծելակ՝ աշ-
խարհավար կեցեալ անտառակոթեամբ, զրածո
թերէ յառաջթէ ինձ տուեալ է զեկեղեցին Աղվանից
իշխանիդ վանականութեամբ վասն զայեկութեան
իմոյ, վասն այզորիկ սիրելիք՝ այս իրաւունք կացցեն
յայտմ հետէ եւ առ յասլա, եւ մի լիցի ունիլ Փու-
սանու-Վեհին այն զայն եկեղեցին ըստ սուրբ Հոդ-
ոյն հրամանի, այլամբիծ եւ անարատ քահանայից
իշխան եկեղեցւոյ վերայ (զի) իշխանութիւն ոչ առ
յԱստուծոյ եւ ոչ առ ի մէնջ :

Արդ՝ ես Ախմէօն՝ չնորհիւն Աստուծոյ Աղվանից
կաթողիկոս, ըստ աստուածային սրատուիրանացն
եւ կանոնաց այսպէս հրամայեցի՝ զիրաւունս զեր-
կիւղի Աստուծոյ քահանայը կալցեն՝ ճիշդ փառք,
որք զեկեղեցեացն Կերպիսի, եւ մի լիցի զինուորաց
եւ աշխարհականաց յեկեղեցւոյ վերայ ունիլ իշ-
խանութիւն, եւ մի ի չնորհէն առնուլ բռնուլ. եւ
եթէ յանդգնի ոք յԱստուծոյ եւ ի մէնջ ընդ պատու-
հասիւ եղիցի. իակ եթէ զիր ոք թերէ յառաջ վասն
եկեղեցւոյ ըստ մարմնաւոր աշխարհական իրաւանց,

Եւ ոչ ըստ աստուածային պատուիրանաց եւ կանոնաց, անվաւեր եւ անհաստատ է, եւ մի ոք ընկալցի ընդ իրաւունս. վասն զի զեկեղեցի եպիսկոպոսաց և քահանայից հրամայեալ է հոգալ Աստուծոյ, եւ ոչ զինուորաց եւ հեծելոց անարժան մարդկան :

Այժմ եւ դուք սիրելիք եւ եղբարք՝ միմեանց աթոռակից եպիսկոպոսունք, սուրբ աթոռոյս վիճակեալը, զդոյն աստուածային կանոնական իրաւունս սրահեցի՞ք զիւրաքանչիւր վիճակի. եւ մի տայր համարձակութիւննեղել զեկեղեցի Աստուծոյ և քահանայս ընդ ծառայութեամբ արկանել զի հաշտեսցի ընդ մեզ Աստուած, եւ ողորմեալ փրկեսցէ զմեղ յամենայն նեղութեանց. զի Տէրն ասաց. մի արկանէք զմարդարիտս ձեր առաջի խողոյ, և մի տայր զարբութիւնս շանց, որալէս եղեւ կամ Աստուծոյ կոչել սրբութիւնս սրբութեանց. և զնոյն ինքն՝ անարատ քահանայից և ոչ անարժան : Այդ պատուիրեմ ամենեցուն . զգոյց կայէք պատուիրանաց Աստուծոյ, եւ դոհութիւն անսալառ մատումնի՞ք ողորմածին Աստուծոյ որ խնդրեաց զվրէժ երկարընակութեան Ներսիսի պղծոյ, եւ զշար որոմն նորաերարձ ի մէնջ տնկելով դիսաղաղութեանն արմատի մէջ եկեղեցւոյ մերում . վասն որոյ զդաստութեամբ տեսչաւորեցի՞ք զսէտս եկեղեցւոյ. զի ամենեցուն յանդիսան լինել կայ առաջի ատենին Քրիստոսի,

եւ համարս տալ վասն ժողովրդեան եւ անձանց .
դարձեալ աղաչեմ. եւ ասեմ զգոյշ կացէք. և Հոգին
սուրբ Եղիսյի ընդ ձեզ. ամէն :

• •

ԺԲ. — Հարկապահանջին Արտաղ-Տրդառայ՝ Աղ-
վանից իշխանի. եւ երբն ի Յոյնս տալ պատանեց
զորդիս իր. եւ Միքայելի վոխանորդել զո-
րուն Աղվանից զինի Սամոելի :

Ընդ նուազել իսպառ թագաւորութեան Պարսից,
եւ զօրանալ աղջին հարաւային Տաճկաց՝ սաստկա-
նացին սակր հարկահանաց աշխարհի՝ առաւել կող-
մանցս արեւելից. զի իշխանն Վարտաղ-Տրդառ ընդ
երիս հարկէր՝ Խաղբաց, Տաճկաց եւ Հոռոմոց :
Իսկ իստաղոյն նեղութիւն ի Հոռոմայեց ոցն հաս-
եալ նմա հանդիալիւր. (եւ) հանդերձ որդւովք իւրովք
յարբայրնակ քաղաքի անդ արդելեալ լինէր ի
կայսերէն. եւ տուեալ ի պատանող զորդիան, եւ ինքն
անդ խօթացեալ իշխանն մնայր (21). զի այսակս
ասեն զօդոց երկրին՝ եթէ ժանտարելք են օտարա-

մուտ աղջայ մտեալ յաւուրս գարնայնւոյ առ ժա-
մանակ հիւանդանան. եւ հերքն եւ մօրուք ճողին
յայս պատճառս :

Եւ յերկարին Վարազ-Տրդատայ՝ ի միում աւուր
եղեւ թագաւորին Հռոմայեցւոց ընտրել ակունս
սլատուականս. եւ կոչեալ դիշխանն Աղվանից՝ ցու-
ցանէր նմա : Եւ նորա խորամանկեալ ասէ. ի տան
իմում սլատուականագոյնք գտանին քան զայդոսիկ.
տաց զնոսա ձերոյդ աստուածապսակեալ անձինդ զի
վայել է իսկ ձեզ : Եւ այն ամ հինդ էր իշխանին
կալն ի Հռոման. և վասն այսր իրի զերծեալ Աստուծոյ
օդնութեամբն՝ եկն, եհաս յաշխարհն իւր. եւ յայնմ-
էետէ ետ զաշխարհս արեւելից ի Տաճկւս. եւ նոցա
միոյն հարկէր : Եւ եղեւ ի նորին աւուրս Վարազ-
Տրդատայ սովլ անտանելի յԱղվանից սահմանս .
վասն որոյ առասալելաբանիւր յոմանց եթէ ես կորեակ
ի Շակաշէն դաւառի ծածկեալ կայի ի վայրին Կա-
կուայ. եւ զանց առնէին զինեւ բաղմութիւնք գնո-
զաց. եւ ոչ զնէին զիս. եկն ժամ բարի. որ եղբայրն
իմ սովլ տիրանայր. եւ ահա զտայ ես երեւելի ի
սեղան Վարազ-Տրդատայ իշխանի եւ Եղիազարայ
կաթողիկոսի. և որք կերանն զիս արխւնաբերք եղեն.
անմեղալիք լերուք :

Իսկ Վարազ-Տրդատայ՝ Աղվանից իշխանի, որ-
դիքն Գաղիկ եւ Վարդան, որք ի Յոյնս էին պա-

տանդը՝ վասն խռովութեան թագաւորին կացին ի
մթին տան ամս 12. եւ պատճառք հօր նոյս զաշ-
իարհս արեւելից ի Տաճիկս տալն եղեւ : Եւ ի
վախճանիկն Յուստիանոսի՝ Հոռոմոց թագաւորի,
Վարդան-Փղեսլիկոս թագաւորեաց, որ էր յազա-
տայն Հայոց, եւ յիշեաց զորս ի խաւարացին բերդին
էին արգելեալք կենդանւոյն. և հրամայեաց թագաւ-
որն հանել զնոսա յանտանելի տանջանայն : Որոց
տեսութիւն աչայն խաւարհն իւրեանց շնորհեալ մասն
Գաղկայ ի կենաատու խաչէն՝ զլոյս տիեզերաց,
Եւ նորա եկեալ՝ ետ զմեծ պարզեւն ցՄիքայէլ՝
Աղվանից կաթողիկոս. եւ կանգնեցին նշան տէրու-
նական, յորում կայ դիր սցսակէս. «Քրիստոս Աստ-
ուած՝ յիշեամ զիամաւոր չարչարանս քո ի վերաց
սորա, զոր վասն մերոց փրկութեան. եւ ընկած
զնշանս զայս զոր ետուր երկիւղածաց քոց, եւ ներ-
եամ յանցանաց խնոց Միքայէլ՝ Աղվանից կաթողի-
կոսի, եւ ողորմեամ աշխարհիս փրկելով յամենայն
փորձութեանց. զի յուռուր դալստեան քո արժանի
լիցուք կալ ընդ աջմէ քո : Եւս աղաչեմ վասն
Գաղկայ՝ ծառայի քո, եւ քեռ սորա Մարեմայ, և
Վարազրոյի՝ ոսկերչի մեծի » :

ԺԳ. — Աւան ոչ առնել առ ազգայինս խնամուրին
Միքայէլի՝ Աղջանից կարողիկոսի, արարեալ
ժողով :

Փոխանորդէ զաթոռ հայրապետութեան Աղվանից
երջանիկն Միքայէլ զինի Ասմուէլի. եւ եկաց ամս
35. Յաւուրա սորա լինի առնակնութիւն իշխանացն
Աղվանից : Վարապոյ՝ Վախտանգայ որդի, թոռն
Վարապմանայ, զմոռնակիցն իւր Վարդանուհին
արար իւր կին. եւ Տէր Միքայէլ տարագրեալ զնա
թէ մի յանդկնիր առնել զի թոռունք էր : Խակ նորա
զկորստեան խորհեալ խորհուրդ՝ զրէ առ Թաղիղէ՝
Վրաց կաթողիկոս, օրհնեալ զանօրին ամուսնու-
թիւնն. եւ չարափառն այն այր այստէս հրամայեաց
« Եթէ զուր յիմումը խոստովանութեան էր՝ օրհնեալ
էր. ասքա եթէ յԱղվանից աւանդութեան էր՝ զուք
գիտէր » :

Հայնոմամ հայրապետն Աղվանից Միքայէլ արար
ժողով ուխտի եկեղեցւոյ իւրոյ. կոչէ առ ինքն ըզ
հռչակելի ոյրն զԱսումօնն, որ Մաքենոցացն էր
սուածնորդ ուխտին սուրբ, եւ ըստ ժամանակին
Հայաստանեաց էր պարծանք և եւ զումարեալ
զնոսա ամենեսին ի Շամքոր ի Բերդոց վանս՝ միաբան

ժողովով նզովեցին զտունն Արագոյի : Եւ ի նոյն
ժամու հասանէին Տաճիկը, եւ ի զոդ մօրն փողոտե-
ցին սրով . եւ զմիւս որդին ձի տարեալ ստան : Եւ
գրեցին թուղթ ժողովեալքն առ Թաղիղէ՝ Արաց
եպիակոստոս, եթէ զի իշխեցեր լուծանել դկանոննեալ
սուրբ Առաքելոյն աշակերտաց, որբ յԱնտիոք ժո-
ղովեալ տարագրեցին զՊօղոս Ամաստացին ի սուրբ
եկեղեցւոյ . եւ սահմանեցին տառս կանոնականս թէ
մի որ իշխեսցէ զազգական առնուլ կին . եւ սրբոյն
Աքանասափ կանոնական հրաման եթէ չէ ամուսնու-
թիւն . այլ պոռնկութիւն . եւ երանելոյն Բարաղի
վասն սորին դործոյ ասացեալ : Աքդ՝ մեք ուղղա-
փառութեան ժողովքս և զքեղ նզովեցաք ընդ ամե-
նայն հերձուածողն . եւ արդարագատին Քրիստոսի
մատուցութեա բազմապատիկ վառս :

«»

ԺԴ. — Նորին Միքայէլի՛ Աղիսնից հայրաւպետին,
խնդիր յարագս պապանձման Զաքարիայ եւ
Յննդեան եւ Յայտնութեան Փրկչին ընդդէմ
երկարնակ աղանդոյն :

Առվելա տօնակարդեաց Խարայէլացւոյն յեօթն-

երորդում ամսեանն, որ է Թօքրին, առաջին օրն տօն
Փողոցն, տասներորդ օրն՝ տօն Քաւութեան, տասն
և հինգերորդն՝ որէ տօն Տաղաւարահորացն, տասն և
եօթներորդն՝ պատանձումն Զարարիայ մինչ ցբան
եւ երկու նոյն Թօքրին ամսոյ : Ապա գնաց ի տուն
իւր . եւ յղացաւ Եղիսարէթ՝ կին նորա, որպէս
Դուկսս աւետարանիչն ասէ « Եթէ թարուցանէր
զանձն ամիսս հինգ, եւ յամսեանն վեցերորդի առա-
քեցաւ Գարրիէլ հրեշտակ Աստուծոյ » : Արդ տես-
ցուր զվեցերորդ ամիսն, թէ որ իցէ, տեսար ըզ
տումարն եւ գտար այսպէս. ի Թօքրին ամսոյ ի քան
եւ երկուսն լինի ըստ Հոգտեմրէր ամսոյ
ինն : Արդ ի տասնէն յառաջ սկսանիմք ընուլ զվեց
ամիսն. լինի յԱպրիլի յեօթանն ըստ հրեշտակին թէ.
այս վեցերորդ ամիս է նորա : Երբայեցոց Նիսա-
նի տասն եւ եօթն (լինի) աւետիք կուսին. անտի
յառաջ մինչեւ ի հինգն Ապրիլի լինի 270 օր, որ է
ինն ամիս. եւ Ծնունդն նորին Քրիստոսի. նոյնարէս
ունիմք զվարուապետաց զասացուածս զայս : Խակ
Ծնունդ եւ Յայտնութիւն եւ Աւետիքն (22) մին
տան կատարէ եկեղեցի. վասն զի միոյ Աստուծոյ
ծնունդ հոգեւոր փրկութեան մերոյ մի տօն կատա-
րի, որպէս ոմն ի յաստուածազան վարդապետացն
տաաց. « Երիս ծնունդս մեղ զիտէ բանն՝ մին վըշ-
մամբ, երկրորդն՝ մարմարանալով և մկրտութեամբ, և

մի ծնունդ թուէ. եւ երրորդն յարութեամբ :

Նոյնակէս Մարկոս՝ հայրապետն Երուաաղէմի, որ
մի էր ի Նիկիական հարցն, որ յիւրում խրատական
թղթին զրեաց ի Հայո յաղագս մկրտութեանն եթէ
ի միում աւուր տօնեմք զԾնունդն եւ զՄկրտու-
թիւնն : Եւ զորօրինակ մահն եւ թաղումն անկատար
է առանց յարութեան. եւ որպէս յարութեան աւե-
տարանն նախ զիսաչն եւ զթաղումն յայտնէ, եւ
ապա ի վերաց ածէ զյարութիւնն. նոյնակէս եւ կա-
տարէ զփրկութիւնն, զոր դարձեալ առէ Աստուածա-
բանն. բայց այժմ Աստուծոյ Յայտնութեանս տօն.
քանզի երեւեցաւ Աստուած մարդ ծննդեամբ :

Երուաաղէմոյ եսլիակուարն մինչեւ ցկիւրեղ 42
եսլիակուար, եւ յետ նոցա այլը տօն Ծննդեան եւ
Յայտնութեան կատարէին Յունովարի ամսոյ ի վեցըն
մինչեւ ցՅորնաղիտ. որ թուին լինել ամք յարու-
թեանն մինչեւ ցՅորնաղիտ չորեքհարիւր : Դար-
ձեալ՝ որ յընթերցուածին առէ վասն Դառթի եւ
Յակորու եթէ յայլ քաղաքս առնեն զԾնունդն
Քոփասոսի, որ է Դեկտեմբերի քսան եւ հինգն :
Յայլ քաղաքս այսպէս ասեն եթէ, ի հեթանոսաց ան-
տի հաւատացեալը էին. (Եւ) ոչ թէ ի թրիատու-
թենէն. եւ ի հեթանոսութեանն սովոր էին ծնունդ
արեգականն (23) կատարել յայնմ աւուր . վասն
այնորիկ ոչ հաւանէին թողուլ զտօնն : Ապա հար-


կառորեցան առարեալքն հաւանել նոցա, եւ կարդել
նոցա գլբիստոսի Ծնունդն յայնմ աւուր : Խակ որ
ի թշխատութենէն՝ ամենայն ուրեր Յանվարի ի
վեցն կատարեն, որ եւ մեր նախնեացն աւանդե-
ցաւ. նոյնալէս եւ ոնկմք այժմ, որպէս ասէ եթէ
օրէնք ի Ախօնէ ելցեն, և բան Աստուծոյ յԵղու-
սաղէմէ :

♦♦

ԺԵ. — Որ ինչ յաւորս որդույն Հերակղիոսի եւ
բոտին զորքը :

Բարեյաղթ Հերակղիոս՝ Հռոմայեցւոց թագա-
ւոր, զպէսովէս ալատերազմունա վանեալ եւ յիշատակ
քաջութեան թողեալ յաշխարհի. եւ զինի նորին
նտափ թագաւոր Հռոմայեցւոց որդի նորա Կոստան-
տին ամս 3 : Ի սորա աւուրս տիրեցին Ասորւոց
Տաճիլը. եւ արկին ընդ հարկաւ զեկեզեցիս սրբոց
քաղաքին Երուսաղէմի. եւ հայ թուականն 80 լինէր :
Խակ Կոստաս՝ սորին որդի, ամս 29 : Ի սորա հինգ
ամին Արարիոյ կռիւն եղեւ . եւ ի վեցն Տաճիլը

եկին ի Հայոց. եւ առաւ Պատին ի Տաճկաց. եւ որք
զերեցանն՝ 35,000 թուեցան : Եւ ի նորին 19 ամին
նատի կաթողիկոս Հայոց Տէր Կերուէս ամս 20, եւ
հայ թուականն 111 էր : Ու էր հայրագիր նորին
Կոստանտինի. և գանձիւր նորա շինեաց զբազմապայ-
ծառ փարախն բանաւոր հօտի ի Քաղաքուդաշտի՝
զառերն Պրիգոր. եւ ի նաւակատիան կոչեաց ըզ
թագաւորն Հոռոմոց : Որ յաւէժ հիացեալ ընդ
շինուածն՝ ետ հրաման շինողացն գնալ զկնի իւր զի
զնոյնաձեւն յարմարեայէ ի պաղատանն. և ոչ ժաման-
եալ դաղատոսն՝ ի մանապարհին վախճանիւր :



Ճ.Զ. — Ապառամբութիւն Հայոց . եւ Մահմետին
գալ ի Հայոց. եւ առումն Սեւանայ. եւ մահն
Մահմետի :

Ի 146Երրորդ թուականութեան Հայոց եկն
Մահմետն Բ ի Հայր. եւ աճապարեալ ընդ աշ-
խարհն Աղլանից՝ մոտանէ ի Չողայ : Իսկ ապլա-
տամբեալ Հայոց՝ արգելին զՏաճիկն ի Դվինի . եւ
զերկու (24) հազարս ի Տաճկացն սպանին ածեալ

զօր բաղումի ի Հոռոմոց : Եւ ի նմին ամին եղեւ դրաւ
զարմից սրբայն Գրիգորի . եւ դարձաւ Մահմէտն ի
Զալացէ : Գայ, սրաշարէ զԱւեւան՝ ծովապատճ բերդ,
ամս 3. եւ ապա առնու . եւ ի սուր սուսերի տրկանէ
զորս գտանէ ի նմօր : Եւ անտի անցեալ ի Հայոց
եհար զՀոռոմ սոլայն եւ զՀայն . եւ զորս ոչ կարաց
ըմբռնել՝ դարձան զործեալ մեծապէս երդմամբ ,
դաւով և խարէւթեամբ առ ինքն ժողովեաց զամեւ-
նայն զԱւաստրս Հայոց . եւ տարեալ ի Կախիջեւան
քաղաք՝ տիթ հարիւր այր յեկեղեցիան արկեսով՝ կեն-
դանւայն այրեաց : Եւ 400 այր ի Խրամ նոյնապէս
այրեաց . եւ զինվիրորս նոյս սրահար սաստակեաց :
Եւ այսորիկ սրատանառ կորատեանն եղեւ ի նոսա այն
զի առհասարակ չնչեալ ի նոսա հողի մոլորութեան,
զի արհամարհանօք այսն առնէին դհայրապետա եւ
զրահանայս, եւ զիրօնաւորս ձանձրացուցանէին :
Եւ թէ ափէտե կրեցին Հայաստաննեայրն զՀարուածան
զայնս, սակայն ոչ եթող Տէր Աստուած Մահմէտի
զպրէժն զայն . այլ ի հասանել նորայԱսորիս՝ դժբն-
դակ ախտ մահու զնա սրաշարեալ՝ զեօթն ամիս
յողեկանս (հոդեվարք) կացեալ հաղիւ ուրեմն սա-
տակիւր : Երիցս թաղեալ՝ վերընկեց լիներ . Երկիր
ոչ ընդուներ զնորս զարշելի մարմինն . սալս կալեալ
շուն մի՛ շամիդրեցին ընդ Մահմէտն . եւ այնալէս
ծածկեաց երկիր զչարն զայն :

Յետ այսորիկ զՇերոյ՝ Աղվանից իշխան, ազա-
տարն հանդերձ տարան յԱսորիա. Եւ Հայ թիւն 153
էր (25) : Եւ յետ երկուց ամոց անց Մըլքան՝ Տաճ-
կաց իշխանն, ի Գիլան. Եւ ոչ կարաց մտանել :
Եւ ել Խաղբաց տէրն ոթառն հազար արամբր. Եւ
էտո զԱղվանա. 158 էր թիւն : Եւ յետ երկուց ամոց
եկին Արգլ-Աղվանս, Եւ նառաւ. ի Պարտաւ :
Անդ ածին զՄանկիմ եւ զՄիրզազատ (26) եղբարս,
որբ էին ի տոհմի, աղասաց, առաջի նորա. Եւ վասն
հասածոյ քրիստոնէոթեան բազում և ազգի ազգի
տանջեալր՝ Մանկիմն երանելի զմիրզոթեան անուն
ժառանդեալ սրակեցաւ. ի Քրիստուէ. Եւ եղու
պատուական նորանչխարբ ի մեծ եկեղեցւոջն Պար-
տաւայ՝ ի սուրբ Գրիգոր : Խակ եղբայրն Միրզազատ
ոչ ժուժեալ տանջանացն՝ առաջի բազմամբոխ ժո-
զովցյն ուրացաւ. զՔրիստոս Աստուած. Եւ ազա ի
զեղջ եկեալ՝ յետոյ դասն եւ մեծ արտասուօք հաշ-
տեցոց զոր խոռվեցոյցն : Կա եւ զամենացն ժո-
մանակս իւր աւազան քաւոթեան զարտօսր իւր
արարեալ՝ լուսնայր զորս ազտեղեալ զթեացն. Եւ
չեծեծանա ի խորոց սրտէ առարեր առ գիտակն
զաղանեաց. մինչեւ ցելս անձին իւրոյ ի սուգ ան-
միսիթար մնայր : Այլ որ ողօրմած է և զթած՝ զնոս
ընդ մարտիրոս ընկալեալ՝ նշանվ զարմանալիք լի-
նէին ի ժամ մահու նորու :

Եւ ի նոյն ամի անցաւ Արդէ Աղիկ զկուր գետով
յայն կողմի. եւ դինի 3 ամաց եկն Մալխան, աւե-
րեաց զԴարբանդ. եւ եմուտ ի Խաղիրս՝ ոչ ուստեք
զօրացեալ ելանել : Առաջ թողու զբանակն կազմ
ամենայն ընչիւր, եւ զշարձա անդամ վերջապահա-
խր առնե. և զԵպանշահիկն զՎաչաղան ի պատրիկ-
եան Աղվանից, իշխան քաջ, կորովի, աջողակ աղեղ-
նաւորն հանդերձ զօրօրն իւրովի յետոյ իւր արար-
եալ. յորմէ զկնի եկեալ Խաղիկին պարտեցան
դարձեալ ի փախուստ : Այսօրէս վերծեալ Մալխան
ելանէր ընդ Վրաց կողմի : Իսկ ի 174 թուականու-
թեւանն՝ սմառն մահ անամոց, և ձմեռն՝ աշխարհա-
գիրն Հերթի (27), որ արկ զմարդ եւ զանասուն եւ
զսահմանս երկրի ընդ հարկաւ անթիւ ծառայու-
թեան : Ի սոյն ժամանակս զԶեւանշէր՝ իշխան
Աղվանից, սպանին Ամեթզուքն : Եւ ի նոյն ամի
մեռաւ Ամրաստ՝ Հայոց իշխան. եւ եզեւ տարին առվ
խիստ. որ էր թիւ Հայոց 175. եւ երից տահաց այլ
(եւս) անցելոց Զառահ երկրորդ անդամ մտանէ
ընդ Արխակս ի Խաղիրս. եւ ի միւսում ամի ել
Խաղբաց տէր Ասորդին (28), եւ արան զԶառահ, և
ձերբակալ արար զԶաղիկ : Եւ ի 180 թուականին
դարձեալ Մալխան շինէ զԴարբանդ յանուն Տաճ-
կաց. այլ վեպթողիկոսարանն արեւելից ոչ տերէ,
որ դեռ եւս կայ ի նմո :

ԺԵ. — Յաղագս Ստեփաննոսի և պիտուղոսի երբակն
ի Հոռոմս, և թերեղն զգրեսնեն, որ յարեւելս ոչ
կային. և վախճան նորին. և պատիժը որ հասին
յԱստիքոյ :

Յայսոսիկ ժամանակս Ստեփաննոս Սիւնեցի տիւ
ովք դեռ եւս մանուել գոլով, կիրթ և յարավարժ ի
խոկումն զրոց եզեալ՝ հանգիստի նմա հակածառել
Սմբատաց՝ ասպետի Հայոց երկարնակի. և թողեալ
զնա յանհաւանութեան զնաց ի Հոռոմս. դունէ
անդ միայնակեաց զոմն ուղղափառ. և առ նմա
դադարեալ իրայուան : Իսկ երկարնակն այն Արմ
բատ զրէ առ թագաւորն Հառոմոց եթէ Ստեփաննոս
հերձուածող եկեալ աստի բնակի առ այս անուն
միայնակեցի : Եւ յոյժ ցառոցեալ թագաւորն՝
խնդրէ զնա ի դուռն. և տուեալ նմա խրատ միայ
նակեացն առել զինքենէ անբնակ, անազդի (29) մու
բացիկ առաջի կայսերն. և լուեալ զայն՝ շիջաւ
ցառումն բարկութեան բռնաւորին : Յայնժամ
գտեալ համարձակութիւն Ստեփաննոսի՝ ասէ, ցիայս
ըըն՝ խնդրէ իմ ի քէն զի բացցին արկեղք սրբոցն :
Եւ դտեալ անդ ուկետուի մատեան տակս հաւատոյ՝

մատոց առաջի նորա : Ընթերցեալ զայն՝ առաքէ
կայսրն զԱտեփաննոս ի Հռոմ քաղաք բերել անտի
երիտ դիրս համարարբառ այնմ զրոց սակտ ճշմարիտ
հաւատոյ. մատոց առաջի (30) զի զավարհայցնմ
զրենւոյն ի կրօնս դարձուսցեն :

Խակ նորա զգրեանն ի Հռոմայ առեալ, անփոյթ
զշրաման ինընակապին արարեալ՝ դիմէ ի Պաֆին
քաղաք, վասն դիւր աշխարհն յայնմանէ ուստոցանել
Եւ ի Բարդենէ եւ ի Քուրոդոյէ խնդրոյ լինի ձեռնաւ-
դրեալ յեսլիակոպոսութիւն Սիւնեաց. եւ զմի ամ
կալեալ զեսլիակոպոսութիւն՝ սպանեալ լինի ի Մո-
գան զաւատի : Ասեն թէ ի սլովծ կանանց եղեւ մահ
նորա : Զորոյ մարմինն առեալ բերին յԱրկաղանի
սենեակն. եւ անտի փոխեցին ի Թանահատից վանս
ի հանգիստ : Եւ ի բերելն զգրեանս երանելոյն
Ատեփաննոսի ի Հռոմայ՝ յերբեակ դասու եպիսկո-
պոսութեան Հայոց կարդեցաւ եպիսկոպոսութիւնն
Սիւնեաց : Խակ միայնակեաց ոմն Կոյ անուն տեսա-
նէր ի տեսլեանն եթէ Ատեփաննոս զգոզն արեամբ
ի ունէր առաջի Փրկչին եւ ասէր. տե՛ս Տէր՝ զայ-
զի քո են դատաստանք արդար : Եւ աղղեալ ի
գաւառն զգալ բարկութեանն բողոքէ կոլ յաղօթո-
եւ ի վերուստ խաւար անտեսանելի կալաւ զԱռղանի
սահման. եւ զաւուրս քառասուն շարժեցաւ վայրն,
եւ խորսացդ եղեալ ընկրպիեցան կենդանւոյն ողիք

իրեւ տասն հաղար . վասն այնորիկ Ալաց ձոր
անուանեցաւ :



Ժ.Բ. — Ի գրեմայն Ստեփանենսի գտաւ այս սրատ-
մորին սակա աւերմանն Այսն քաղաքի , եւ
շինելոյն Հռոմայ :

Կ ժամանակս Առդամնի (31) դատաւորի առաւ
Այսն այսպէս : Քաղաքս այս յԱրայեցւոց (32) երկ-
րին էր հուսդ յաշխարհն Պեղոստնէս յարեմաւս
Մակեղոնացւոց , յերկրին Բովաց (Եւրոպիոյ) :
Ընդ այն ժամանակս ոչ գոյր թագաւոր Յունաց-
միայն իշխանը տիրելին բոլոր աշխարհնն . եւ Այսն
էր քաղաք մեծ , որ ոչ գոյր համեմատ նմա ի վերաց
երկրի : Յաւուրսն յայնոսիկ ոմն երխոսասարու յիշ-
խանաց քաղաքին գոյ ի Թեսազոնիկէ քաղաք , որ է
յարեւելս Մակեղոնիոյ ի պատճառս ինչ դժօսանաց-
ընկաղեալ եղեւ ի մեծամեծաց քաղաքին . և տրփեալ
ի գուստոր առն միոյ մեծի՝ սլատրեալ ածէ զնա ի
Այսն քաղաք : Զոր ծնաղաց ինողի եւող իմացան եթէ

յերիտասարդէն եղեւ յավիշտակեալ : Գրեն թուղթ
ի Վիտնացիսն, եւ առնուն պատասխանիս խիստու :
Եւ նորա ընթերցեալ յականջս ժողովրդեան իւրոց՝
անդանօր ի նախանձ բրդեցան. կոչեն յօդնականու-
թիսն դշրջակայսն ամենայն. եւ ժողովեալ անթիւ
զօրս՝ սպատերազմին ընդ Վիտնի սմա 15 ապականե-
լով զամենայն երկիրն : Եւ ապա յայլ խորհուրդ
մտարերեալ՝ յղեն առ քաղաքացիսն բանս հաւանա-
կանս. մեծ են (առեն). աստուածք Վիտնի, եւ վասն
այնորիկ տիկարացաւ զօրութիւնս մեր . խաղաղու-
թիսն արասցուք յայտնեւոէ, եւ ոչը դիցուք ընդ
միմեսնա. եւ զաստուածսդ Վիտնի ընծայիսք սպատ-
ուեսցուք : Եւ նոցա այսմ բանից հաւանեալ .
կազմեն երիվարս փայտեայ թուով 2,000 փոր գոր-
ծած . եւ մուծանեն ի ներքս արս սպատերազմնովս
թուով քառասուն հազար. եւ գերիվարսն սպատեալ
ուկւով եւ արծաթով՝ դնելին ի վերայ սայլից, եւ
տանելին ի դուռն քաղաքին գկորատական սպարդեսն,
եւ քարոզն աղաղակէր. այս են ընծայը աստուածոցդ
Վիտնի :

Ամսդունէր ինն չափ բարձրութեան երիվարացն,
զորս ոչ կարէին մուծանել ընդ դուռն քաղաքին .
քակէին մասն ինչ ի սպարապէն. եւ ժամադրութիւն
ելանելց արտարս, զոր արարեալ ունելին դիմամին,
զոր հաստին, մտանէ բաղմութիւն զօրացն, եւ մտանի

քաղաքն ի բերան սրոյ եւ ծերք եւ տղայը. իսկ ըզ
կանայսն գերեալ մտանեն ի նստան դառնալ յերկիրն
սախական : Հողմ ուժդին յարեւելից եկեալ վարէ
զնաւան մզնս երկու հազար եւ հինգ հարիսր, եւ
ընկենոյր արտաքս յերկիր օտարական՝ որ կոչի
Խոտաղիս : Կամէին միստանդամ նաւել յերկիր
խրեանց, իսկ գերեալ կանայքն ի մէջ գիշերին հրով
տոչորէին զնաւան մինչ ոչ մնալ եւ ոչ մի զի մի եր-
թիցեն ի ստրկոթիւն : Եւ տեսեալ աղանց զեղեալն՝
յոչ կամաց դադարեալ յաշխարհին ամուսնացեալ
ընդ կանացն գերեալս : Եւ յետ բազում ժաման-
նակաց մի ոմն ի միջոյ ժողովրդեանն առաջնորդ
ինքեանց կացուցեալ Հոռմելոս անուն, որ հեռագոյն
ի ծովէն մզոնտ 25, շինէ քաղաք յիւր անուն Հոռմ :
Առքա են ազգ Հռոմայեցւոց : Եւ այս յետ ամաց
441 եղեւ յետ առնըյ զՄիտն : Եւ յորժամ եղեւ
44 ամին նստաւ թագաւոր ի Հռոմ Փիլիպաս. 1000
ամ էր ի Հռոմայ շինելըյն. եւ անափ վոխեաց զժա-
գաւորոթիւնն ի Բիւզանդիա Կոստանտիանոս, որ
այժմ կոչի Կոստանտնոս աղօլիս :



ԺԹ. — Որ ինչ յերկերխսր բուականութենէ Հայոց
և այսր գործք լեալ ի ասհման Աղլանից :

Ընդ ժամանակս ընդ այնոսիկ տիռեցաւ, տարա-
ծեցաւ յօլորտս Երկրի բոնութիւն հարաւայնոցն
ազգի խիստ եւ կակծանող. որ իրեւ հոր լավեաց
զամենայն զեղեցկութիւն եւ զիստս մարդկան :
Ըստ սրբոյն Պօղոսի բանին, խմանալի այն եղեւ
ժամանակ ապատամբութեան եւ թէ զատաւոր հա-
սեալ է առ դուրս, եւ մերձ է ժամն ահարկու, օրն
չար եւ անաչառ : Այսպէս դադանացեալ Խամայէ-
լեան Հագարացինքն յինքեանս դրաւեցին զիստիկու-
թիւն Երկրի . եւ ծով եւ ցամաք ոնկնդիր եղեւ կա-
րապետաց նեռինն՝ որդւոցն կորատեան : Եղեւ այս
տանս Աղվանից զրկանք մեծապէս, զի զմացրարա-
զարն Պարտաւ. խլեցին յիշխանացն Աղվանից
Տաճիկը, ըստ խրեանց անստակ աղդաշաղախու-
թեանն. և որպէս զառաջինն աթու խշխանութեան
խրեանց արկին ի Պամասկոս Ասորեստանեաց .
նոյնպէս աստ յԱղվանս նատուցին ի Պարտաւ կալ
արքունեացն, եւ ծծել զպարտարտութիւն Երկրիւ :

Յորոց մի ոմն յարքունեացն եկեալ ի Պարտաւ.
եւ Հայոստանեացն սակա աշխարհին հոդոց զհայրա-

պետն իւրեանց Տէր Եսայիս հանդերձ եպիակո-
պոսօքն յզեալ առ նա առաքեն : Զորոյ զգալուստն
ըուեալ տիկնոջն Ա արդամուհեաց՝ կարեվիր եղեալ
ի դատաստանացն Աստուծոյ՝ դիմէ ընդ առաջ մինել
կարելից իւրում տարժանելի աղետիցն , զոր ի
ձեռանէ Տեսուն արր զբաժակ զառնոթեան ըստ
վերագոյն զրելոցն : Եւ երանելի հայրապետն Հայոց
խոնարհեալ յարտասուս կնոջն՝ օթեւանս առ նսա
կալեալ ցայդազաշտամամբ մաղթանս առ Աստուծ
մատուցանէր առ ի լուծանել զանէծս առաջնոց
հայրապետացն : Բնդ նորին եւ Տէր Սաղօմօն՝ Աղ-
վանից կաթողիկոս, իւրով եւ վակալապոսօքն ի խորհուրդ
եկեալ լուծանէ եւ նա զկազանս աթոռակալացն
իւրոց . եւ վասն իւրաքանչիւրոցն խնդրոց արմատ
մի մնաց տիկնոջն վշտագնելոյ : Եւ Ա արագ-Տրդա-
տոյ՝ Ա արագմանաց որդւոյ Աստուծ շնորհեաց կեա-
նըս . եւ որդին նորին Վտեփաննոս կէսօրեայ վախ-
ճանեալ . եւ նորին եղբայր Ա արագման վրիպեալ
ընկղմեցաւ ի Կուր դետ . նա եզեւ գերեզման նորա-
խակ Զեւանչերիկ՝ նորին եղբայր , ժառանդանայր
մինչեւ ցայս վայր :

Խակ ի լնուլ 270 թուց Հայոց ելին զաղտարար ի
Պարտաւայ արք ընտիրք ի Տամկաց . եւ յաւարի
առին զԱմարաս գտառու . եւ զերի առեալ իրրեւ
ողիս հազարս, եւ ի Մեծ Խրանց սահմանի ամբաց-

եալք ի տեղւո՞ն, որ կոչի Շիկաբար : Յայնժամանքի
եւ շքեղատեսակն Առհեղի Ամրատեան Եռանշահիկն
տէր քաջազօր Եղբօրօքն խրավը եւ զօրօքն խրեանց
ի լուսանալ առաւօսուն ի վերաց յարձակեալ՝ առ-
հասարակ դիամթաւալ զնոսա ցիր եւ ցան կացուցան-
էին . եւ որպէս յառիւծու ժանեաց զգերեալսն ի
բաց կորդէին : Եւ ի նոյն ամի ասպատակեաց Աւա-
դաց աշխարհաւերն (33) Տաճիկ, որ Աւառանշան
(34) անուն ճանաչիւր, ի սահմանս Հայոց. և յաւարի
առեալ զաշխարհս ամենայն՝ դասնաց ի Սիւնիս. եւ
ամրանաց ի բերդատեղի աւանին Շաղատու որ է ի
դաւառին Ծղկաց : Եւ տէր Վասակ՝ Ախնեաց տէր,
ածեալ զԲարսան ի Պարսից՝ Եհար զնոսա . եւ արար
փախտականս : Եւ Ախնեաց տէրն ի նմին ամի վախ-
ճանեցաւ :

Եւ նոյն ժամայն առ Բարսան զդուստր Վասակաց՝
Ախնեաց տեւան, ի կնութիւն : Եւ ի նոյն ամի տէր
Ներսէն ի Փիղիալպեան (տոհմէ) սպան զՎարագ-
Տրդատ ի Ատեփաննոսեան (տոհմէ), և զորդի նորին
ի մօրն գոդ զենին. եւ զամենայն սոսցուածս նորա
յափշտակեցին : Այս Վարագ-Տրդատ ի Միհրական
տոհմէն էր, որը զՎարագնս ժառանդեցին որդի ի
հօրէ առնլով : Աս ութերորդ էր ի Վարագ-Գրի-
գորէ՝ առաջին իշխանէն Աղվանից : Յետ այսորիկ
անհրամանակատար եղեւ զաւառն Բաղաց յանօրին

Բարանայ. Եւ ել նա ի Պարսից եւ առ, աւերեաց
զերկիդն, և ի սուր սուսերի արկ զիանայս և զման-
կունսն Բաղաց. և անտի ի միւս տարին անց Բարան
ի գաւառն Գեղաքունի. և արկ ի սուր զբնակիչնն
իրբեւ ողիս 15,000. և զմեծ մայրաբաղաբն Մարե-
նոցաց այրեաց. միայն մնաց ջրաղացն և այլ ոչ ինչ.
և էր թիւն Հայոց 276 :


Եւ յետ երկուց սամաց եհար Բարան զՃառուսին.
և հալածականս արտար անձինո իրբեւ 150,000. և ի
միւսում տարին եհար Բարան զԱրրահիմ՝ որդի
Ղեթայ : Եւ ի նմին ամի դաւաճանողը ի սէր խա-
զաղութեան, որոց անուսանը Գաւոն եւ Շապոհ
ճանաշխար, սպանին զԱտեվաննոս զկոչեցեալն Ապլ-
Ասաղ, որ էածն զԲարան, և եհար զԲաղակացիան :
Որ ի սուր նիզակաց կոսորեցին զԲերձոր գաւառ. և
զաւանան զՈւռեաց, զԿառնակաշ, զՀակարի, ըզ
Տափատ : Եւ դարձեալ ապստամբին ի Բարանայ,
զիմազարձ պատերազմաւ. ամբացան ի բերդն Գորո-
զու, և կալեալ զգաւառուն ամս 12 որբ. ևն այսորիկ.
վերին Վայկոնիք, Բերձոր, Ալաական, Հարանդ,
Ամարաս, Պաղկանք, Միսանք, Առզից գաւառ (35) :
Եւ յետ այնր զալանողն Ապլ-Ասաղայ կալեալ մեր-
ձաւորացն՝ չարաշար կործանեցին. և Եսայի անուա-
նեալն Այու-Մուսէ՝ այր խաղաղութեան՝ քուեր-
որդի Արլ-Ասաղայ, ըմբռնեսոլ զնոյն գաւառն՝

իշխանացաւ ամենայնի : Եւ ի նոյն ամի էանց Բարան զգետովն Երասխ ի Պարակց , և յԱմարաս գաւառին բանակեցաւ . բան խաղաղոթեան սկսաւ խօսիլ զի ի հնազանդութիւն նմա կոչեսցին . որ և ժամագիւտ զղջմամբ ոմանք հնազանդեցան . և յետո դաւեալը անհնազանդ եղեն :

Անտի դարձեալ Բարանայ յերկիր իւր ի Պարաս յԱտրաբաստական՝ եթող զօրավար ոմն Ոտսոտմ հանդերձ զօրօք . Ետ և հրաման նմա ոչ սպատերազմել ընդ բերդոյն . այլ ի սեր համակել զի հնազանդեսցին : Իսկ Ոտսոտմայ անփոյթ արարեալ ըզ սպատուերն Բարանայ՝ ել տալ սպատերազմ ընդ ամրացելոցն ի բերդին : Յայնժամ սպատինեալ բերդացեացն ի զօրութիւն Գրիստոսի՝ դիսաչս և սրբոց նշխարա ընդդէմ բերեալ՝ ի հարուածս սաստիկս հարկանէին զպարսկական գունդն :

Եւ ասի բան թէ ի սոյն ժամանակս Աերոր ոմն եղեալ եսլիսկոպոս Ամարասայ, գնացեալ ի Հոռոմս և հայցեալ ի թագաւորէն մասն ինչ ի նշխարաց սրբոց՝ չնորհեաց նմա . զոր համբաւեն եթէ սրբոյն Գրիդորի աջ բազուկն է, որով զօրհնութեան խալն խնկարկեն արտարոյ ամենացն զրոց : Բայց այս խակ են զարմանք և սոսկալի իրք թէ սուրբն Գրիդոր ի Աեսարիոյ էառ զաւանդութիւնն որ ընդ Հոռմայեցոցն էր իշխանութեամբ հայրապետաց, եւ ինքն

ոչ կարաց օրհնել ձեթ . այլ ի Աւստրիոյ առնուին
ձեթ Հայք մինչև ցժղովն Քաղկեդոնի : Ապա ի
զօրանալ հերձուածին ինքեանք բազում հոգուա-
կութեամբ և հեարիսք ուրեմն հաստատեցին զիարդ
օրհնութեան իւղոյն բաժանմամբ ի նոցանէ . այլ այս
օտար իմն է լուսաւորութիւն ի մեացորդաց առեալ
և ոչ կարգ ուղղութեան, որ խոտեալ իմն է եւ իրք
հերձուածեալք :



ի. — Երբեն Մամունայ՝ իշխանին Տաճկաց , ի Հո-
ռուս, և ի նմին աստակումն . ընդ նմին զրոցա-
ւորարինք պէապէս կարճառու բանիւք :

Երկերիւր և ութսուն էր թուական Հայոց յոր-
ժամ կամեցաւ Մամոն Տաճիկ շահաստակել ի
Հոռուս : Եւ կազմեալ նուս հարիսք՝ արկանէ ի նաւա-
րա զօրա որա 100,000, և վտարեալ զնուա ի ծով՝
կամէր սլաշարել զմեծ բազարն Աստանանոնալովիս :
Յայնժամ լինի ազգումն Հոռուսց ոցն . և խալոյն
աճառարեալ ընդ այլ կողմը ծավան արտաքս՝ պատ-
եալ պաշտորեն դժշնամիսն խաչին Քրիստոսի . եւ

առաթուր հարեալ խաղառ սատակեն, և զնոյն ինքն զԱմուն (36) կենազբաւեալ բառնան ի միջոյ : Եւ ընդ նոյն յաղթոթեան դիմեալ ընդ ծով առ նուսն՝ զբազմոթիւն սրոյ և ջրոյ առնէին կերակուր, (մինչեւ ոչ) մնալ ի նոցանէ և ոչ մի : Այս եղեւ մեծ զօրոթեամբ կենեղուտ խաչին Քրիստոսի հարուածք մեծամեծք Տաճար :

Խակ յետ երից ամայ Բագողի (37) ոմն ամիրայ Եկեալ հրամանաւ իշխանին Տաճար, որ Ամիր-Մումին կոչի, հասեալ ի Նախիջեւան քաղաք. անդ ըմբռնի մանուկ մի Յոհան անուն ի ձեռս նորա : Եւ սակա հաւատոցն որ ի Քրիստոս չարաչար տանջեալ՝ նահատակի ի սուրբ քառասունան մերձ յօր սրբոյ Պատերին : Որոյ նշխարքն լուսաճաճանչ փայլմամբ ահացուցանէր զթշնամիան, զոր տեսեալ նոցա՝ անհետեցին ի գիշերի, եւ ոչ ոք դիտաց զնա ի քրիստոնէիցն : Պատակողին խրում միայն մնայ յայտնութեան : Յետ ոյսորիկ անցանելոյ ես երկուց ամաց եկն Խազր պատգամ՝ այր շամբշոտ և անողորմ . և ի նմին սատակեցաւ : Խակ նորին որդին Եկեալ էառ զաշխարհս օրով և զերոթեամբ, և Եկեղեցիա բազում հրով այրեաց և կիսկեաց, և դնաց ի Բաղդատ : Եւ անտի դարձեալ Եկեալ արքունի հրամանաւ և դանձով՝ շինեաց զՊահանձակ քաղաք յԱրշակուշէն դաւասի :

Եւ յետ այսորիկ արշաւանս առներ յաշխարհ
Ախմեաց. գերի վարեալ զբաղացն սահմանս՝ դայ,
իջանէ յԱղահէ դաւառ, յաւան մի Արքուգետ
կոչեցեալ. և խկոյն հրամայէ այրել զեկեղեցին, որ
սրբոյն Գրիգորոյ էր անուանագրեալ : Եւ յայնժամ
զօրութիւն աստուածային հասեալ՝ հեծեալ մի ի ձի
ձերմակ ձեռլով ելանէ յեկեղեցւոյն արտօրս ակն
յայտնի ամենեցուն. ընթացեալ ի բանակն, շիոթ-
եալ զայրն անօրէն զօրօքն իւրովք դարձուցանէ ի
փախուստ ընդ սարն, որ կոչի Եղջերիս : Եւ անդ
հողմն դժնդակ մրրկեալ շրջապատեաց զնոսա.
և միայն ի ձի ապաստոն փախուցեալք զերծան :
Խակ կալանաւորքն և առապուրք ի լերանց վերաց
կորեան. և գերեալքն մնացին խաղաղութեամբ փա-
ռը Աստուծոյ տալով : Եւ ի նուլ երրարդ հարիսը
թուոյ Հայոց լցաւ սահմանեալ մեղացն տուգանք
հաւատացեալ իշխանացն Հայոց և Աղվանից, որ
յայսմ ամի կասթեալ, սպարաւանդեալ ըմբռնեցան
ի ձեռս Տաճկաց և տօրագրեալ ի տանց իւրեանց՝ յոշ
կամաց գնացին ի Բաղդատ : Եւ անդ վատանդեցու-
ցեալ սաստին անօրէնքն թողուլզհաւաստ իւրեանց.
յորոյ բազւամք կորեան զանման մահ թողլով զան-
կողուստելի գանձն հաւատոյ սրբոյ : Խակ երանելի
ոնն Շապուհ Արծրունի և միւս այլ այր ընտիր յազա-
տացն Հայոց յանձն տոին զմահ մարտիրոսական և

ոչ զկեանս սնոտիս : Յայնմամ տայր հրաման
բռնաւորն Տաճկաց երկաթի կարանօր զնոսա կեն-
դանւոյն ընկենուլ ի գետն Եփրատ . և զատրս
բաղումս ջահը լուսոյ ի վերայ զետոյն երեւեալ :
Ընդ որ մախացեալ Ամիր-Մումիւոյն՝ տայ հրաման
զի արք իջեալ ի գետն՝ առցեն զոսկերսն և հրով-
այրեացեն : Եւ յիջանել խորիջացն լցան աներեւոյթ-
մինէր . յերանել նոցա ի ջրոյն յուղելոյ՝ նոյն լցան ի
լիութիւն ջրոյն դայր :

Ապա կոչէ Ամիր-Մումիւն դջափր՝ Ասորեաց
եպիտոպոս, հրամայեաց յուղել զնշխարս նոցա :
Եւ եկեալ եպիտոպոսն յեղը Եփրատ զետոյ՝ իջու-
ցանէ խորէջս , և դտեալ զոսկերս երանելեացն՝
տարս . յիւրն եկեղեցի . և կարգեաց յիշատակս
զրով : Յայսմամի յանշափութենէ անձրեւաց եղեւալ
յանկարծ հեղեղ ի Մեծ Խրանց դաւատ, հոսեալ
զնայր հեղեղին ի Պատառակերտ զեօղ ի կիցս զե-
տոցն՝ տիմն հարփոր վրան խանարածաց տարսւ,
որք եկեալ էին ի Կովկասաց յապուր յաւորս ամա-
րացնւոյ : Եւ տէր Սուվան վախճանեցաւ ի Վայոյ
ձոր ի նոյն սմի : Եւ ի միւս տարին եկն Բուղա ի
Հայս . եւ սպանաւ Ասհակ Խամայելեան ի Տիղիս
քաղաք . և զամս երիս կազմու զՀայս մինչ դիշխանան
աղատ կանամբը խաղացոցանէր ի Բաղդատ : Ապա
ի չորրորդ տոմին եղեւ զամն Մահմետոյ՝ Խողթի

որդւոյ. և մոհ տեսառն Վասակայ-Գարոխն : Եւ
յ318 թուականին Հայոց անհնարին և հիացուցանող
շարժն Դվինայ, որ զամ մի ողջոյն դողացեալ խորա-
սուզեաց յանդունզս անձինա իրքեւ երկոտատան
բիւր մարդկան : Ահա նմանութիւն խրատոյ ոյս
ի մորդ :



ԽԱ. — Պաշարումն Պարտաւաց յորդւոյն Շեխսայ
և ի զօրաց Հայոց և Աղվանից. և Սամուելի
անձամբ առնուլ պատիս և զնալ ի Գալիմ :

Ի ժամանակի խոռվութեամն որ շարժեցաւ ի
մէջ Եսայեաց՝ որդւոյ Շեխսայ, և ի բոյ գործակալովն
Աւհմէտի՝ որդւոյ Ապղմեհզգի, որ կոչիւր Եմեմիկ,
զօրաժողով լինի որդին Շեխսայ ի կողմանցն Ասորես-
տանեաց միակամութեամբ Աշոտի իշխանի. զի ևւ
սա գումարէ զզօրան Հայոց հանդերձ իշխանորն Աղ-
վանից. երթան, հարկանեն զզակլիւն (38) ի դրանն
Պարտաւաց. և բաջամուխ կացին ի մարտի զամս 13 :
Ընդ ոյն սուրբու հասանէ վախճան հայրապետին

Աղվանից Յովսենիոց . և ոչ լիներ սրբաւու իշխա-
նացն Աղվանից նորոգել զաթռու հայրապետու-
թեան Աղվանից : Իսկ Մեծ Կողմանց եսլիսկո-
սոսն Սամուէլ անձնակամակ ընդ Միասցելի քահա-
նացի , որ իմաստաերն կոչիսր : Խորհրդագդած
եղեալ առանց զլիսաւորագունին աջոյ տայ զեալիա-
կոսկոսթիւն իւր Միասցելի . և ինքն Սամուէլ
զանկատարն առնու ձեռնադրութիւն յիւրմէ յեալիա-
կոսկոսէն : Լուրս այս եհաս ի բանակն . և բազում
եղեւ խոռվութիւն իշխանացն Աղվանից : Յայն
(ժամ) միարանութեամբ զեկուցանեն զայս Տեառն
Գէորդոց՝ Հայոց կաթողիկոսի . և նորա կանոնական
ստհմանադրութեամբ զրեալ առ իշխանն Հայոց՝
մաղթէ օգնել իրացն զաւարտն առնել խաղաղու-
թեամբ : Եւ նորա իմաստաբար ածեալ ի հաւան ըզ
պետս և զիշխանա Աղվանից՝ խաղաղութիւն ի մէջ
նոցա առներ . ոյլ նոցա զնոպիլ Հայոց սրատառեալ:
Իսկ Աշոտ՝ իշխանն Հայոց , խնզրէր զկարդադրու-
թիւն սրբոցն Գրիգորի և զձեռնադրութիւն առնուլ
ի Հայոց . որպ առ ժամն հաւանեալ Սամուէլի և
Միասցելի սրբուրմանն , զոր մեծ իշխանն Հայոց զրէ
առ հայրասպետն Գէորդ . և զՍամուէլն հաճեցուցաներ
առնեացն Աղվանից կամակցութեամբ : Յանկամայա-
կան մտաց չուեալերթայ ի Գլին՝ և զերկրորդն առնու-
ձեռնադրութիւն անձնահան Սամուէլ ի Գէորդոց՝

Հայոց կաթողիկոսէ, յաւուրս Աշոտի Հայոց իշխանի. և թուականութիւն Հայոց լինէր 326 : Եւ նոյն իշխանն Հայոց Աշոտ ըզ ի վաղնջուց դադարեցուցեալ քարոզութիւնն Ամսնեաց, որպէս այլ խմառուն, ընդ Սաղօմնն եպիակոսպան և ընդ Գէորգ հայրապետն վերստին նորոգեաց :

Ի նոյն ժամանակս եղեւ Աշոտի Բաղրատոնոյ նստացանել զաթու թագաւորութեան իւր ի մէջ Հայաստանեաց, որ իրազում ժամանակաց էր բարձեալ սպատիւ թագաւորական ի տանէն Թորոգումայ : Իսկ գալուստ Տաճկին ի Հայս, և գրաւել զաշխարհն ընդ Ծով ծառայութեամբ հարկաց ի թուականին Հայոց 342 լինէր. յորոց ձեռն ըմբոնեալ լինէր հայրապետն Գէորգ ի կատանս երկաթի պարփակեալ ածու ի Պարտաւ : Ապա բարեկաշտն Համամ, որ և Աղվանից եղեւ թագաւոր, նոյնավէս և զիրծանեալ թագաւորութիւնն տանն Աղվանից Համամ նորոգէ, որպէս Աշոտ Բաղրատոնի՝ դՀայոց թագաւորութիւնն : Այսք ի միում ժամանակի գործեցան : Եւ նոյն ինքն Համամ սակս առ Աստուած մեծապէս յանցանացն, որ վասն սնուտի այս կենացա զալարտ արեան Եղրօրն ժողովեալ յանձին իւրում՝ մեծաղոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ սունացն կարօտեալս և չբաւորս առաստավուարթանալառ կատարէր . որ և զմեծ հայրապետն Հայոց

Պէտք յանօրէն Աաջկայ կապարանէն բազմաբաշխ
գանձուր տայր արձակել, և յողնամնծար զնա արար-
եալ՝ առողջ առ Հայաստանեաց առարէր : Խակյետ
և ամաց, յորում տարեմուտն ի սրբութիւն հանդիպար
Պասերին օր, սպանաւ Ասրու-Ամբ Աղվանից իշխան
Հայկազունի, յիւրմէ հարազատէն Ամբատայ. և եղեւ
այն սուդ մեծ խրայնոցն զարմից : Խնմին ամիւզօրա-
ժողով լինի թագաւորն Հայոց Ամբատ՝ որդի Աշո-
տոյ Բագրատունուց, անցանէ ասպատակաւ յաշ-
խարհն Ասորեստանեաց. անդ ի դիմի հարկանին
նմա զօրքն Տաճկաց, և փախատեամբ դարձուցանեն
ի Հայս. թափուր և ունայն զամենայնն առնէին :
Անդէն մեռանէր Աշոտ իշխանն Հայկազն և սակաւը
ի զօրացն :

Ի նմին ժամու մեծ իշխանն Ա ասպաւրականի
Ասրու-Արվան սպանանի յիւրոց զօրացն : Ի նոյն
ամի զայր, հասանէր ամբարիչոց Տաճիկին Երկրորդ
անգամ յերկիրն Հայոց. և ի նորին հրամանէ ելանէ
ներբինին ի դրանէն Պարտաւայ դալ ի Հայք : Եւ
էր այրն ժպիրէ և անաստուած. ուր գնացը ոտից
նորա լինէր՝ աւերէր, բանդէր զեկեղեցիս Աստուծոյ.
և զնշան Քրիստոսի ուր և տեսանէր՝ աւերէր իբրեւ
զիտչի. և իբրեւ եհաս յաշխարհն Հայոց՝ առժամայն
փախատական լինէր թագաւորն Ամբատ : Եւ առեալ
զամբոցս նորա և զթաղուհին հանդերձ տիկնասմբ

և որդւովք իւրեանց, զբնակարանս և զսպաս սրբութեանց և զխաչո բազումն գանձուք խաղայուցեալ ի գերութիւն : Ընդ նոյն արշաւեալ ի Վիրս. ընդգէմ եղեալ նմա երկու բաջ զօրավարք Վրաց՝ Գէ-որդ իշխան և Արքեւէս՝ եղբայր նորին. և երկորինն չարաչար մեռանեին ի նմանէ :

Յայնժամ վերափոխի մեծ հայրապետն Հայոց Գէորգ և իշխանն Ախոնեաց Աշոտ, զոր ողբերդական կանայք կականեին ասելով. մի եկեացէ և մի վիցի այսպիսի տարի ի վերայ երկրի որչափ ազգ մարդկան է : Եւ հայ թիւն 346 էր : Այլ այն ամենայն սկիզբն էր երկանց և տաղնասպին, որ եղեւ Հայոց, զի զնոյն ինքն զմեծ թագաւորն Սմբատ յետ սակաւ ժամանակի մատնեաց աստուածահոս սրատուհասն, որ լինելոց էր աշխարհի՝ ի բաց կացեալ վերնոյն զօրութիւնն ի նմանէ՝ զկորատեան իւր և Հայոց զնաց ճանապարհ՝ ի յերեսս դազմանաղէմ իշխանին Տաճկաց երթալով. որ (այսինքն է Յուսուփ ամիրա) դշան և չմարդոյ բերելով բարձ ըմբոնեալ զկամաւ եկեալ թագաւորն ի վերայ փայտի սրանանէ : Եւ ապա դուժէր ճայն աղետաւոր ի տուն Թորդոմայ, և առհասարակ աւերանը աշխարհին հասանէր : Հայ թիւն 363 էր. զորոյ վրէժն միայն Աստուած ինողեաց սրանաման Սմբատայ. զի անազ զորոյնն այն Տաճիկ փոխեալ ի Հայոց՝ զնաց, անցանէ

ընդ Ասորեստան երկիր. և մատնի ի ձեռն Աքարացոցն իշխեցողի. և կենդանւոյն թաղեալ սատակէր

Ի վերայ այսոցիկ անցելոց ժամանակաց սորտի աղջն այն Տաճկաց. և Երեւի աղջ այլ, որ Գիլեմիկը (39) կոչեն, որոց գլխաւոր ոմն եկեալ Ապար անուն համատարած սիրեալ զիւր գաւազան՝ տիրէ Աղվանից, Պարսից և Հայոց. և եկեալ ի Պարտաւ Խրացուցանէ խակոյն : Ընդ նոյն ժամանակու բախի ի կողմանցն հիւսիսոյ այլաղէմ օտարանշան իմն, զոր Ռուզիկ կոչեն, ոչ աւելի քան զերեք ժամանակ ընթանալ իրեւ մրրիկ ընդ համատարած աշխարհուծով ելլիցն Կասպից յանկարծ հասանէին ի մայրաքաղաքն Աղվանից Պարտաւ . ոչ ուստեր լեալ կարողութիւն ընդդիմակայել նոցա : Եւ ի սուր սուսերի մատնեալ զբաղաքն՝ թափեցին յինքեանս ըզ վայելչութիւն ամենայն կազմութեանց բնակչացն : Եւ նոյն ինքն Ապարն սրաշարեալ զնոսա՝ ոչ ինչ կարէր վնասել զի անցաղթելի էին զօրութեամբ : Խակ կանանց քաղաքին հնար խմացեալ բաժակ մահուարուցանէին Ռուզացն : Որոց խմացեալ զդաւաճանանութիւնն յանխնայ կոտորէին զկանայսն և զմանկունս նոցա . և կացեալ ի նմատ ամիս 6՝ թափուր և ունայն զբաղաքն թողուին, և մնացեալըն զանդիսող ձեւով գնացին յաշխարհն խրեանց բաղմազան սուարտ :

ի՞Բ. — Արկմարտանուրիս Ազգաշարանաց համա-
ռուսարար :

Ասուղաբանութեամբ այսպէս ծանեար՝ ի Հայ-
կաղնեաց արանց խնամաւորել ի (ընդ) Միհրական
տոհմին, և պատուաստութեամբս այսուիկ առ ի զոյգ
տնել զավետութիւն արեւելեաց կողմանց Ազգանից։
Անուանք արբայիցն՝ որք վերազոյնն զրեցան, ի
քաջին Վաչաղանաց մինչև ցրաբեպաշտն Վաչա-
ղան 10 թագաւորք, որ ըստ թուոյ առուրց տարւոյն
եկեղեցի մի այն բարեւոպաշտն Վաչաղան շինեաց
յարեւելս. և յետ մահու նորս մկան նուաճիլ աղդն
այն. և Միհրեանն, որ ի Ասուանեան տոհմին էր
եկեալ ի Պարսից, հաստատեցաւ ի նախարարու-
թիւն. և անուանք նոցա որդի ի հօրէ սանլով են
այսորիք՝ Միհր, Արմացիլ, Վարդ, բաջն Վարդան,
որ հաւատացեալ ի Քրիստոս՝ ոչ շինող Գարդման
բերդոց։ Ազա որդի Վարդ ծնանի զՎարադ-Գրի-
գոր՝ առաջին իշխանն Ազգանից, որ ծնաւ չորս որ-
դիս՝ զՎարադ-Փերոժ, զԳուանչէր, զՅեղուա-
խոսրով, զՎարադման։ Ի սոցանէ զերէց որդւոյն
շարեալ ըստ կարդի անուանս բերցուք յայտ առ
Հայկազինան. և այլին կացցեն, որք են Վարադ-

Փերուժ, Վարազ-Տրդատ, Վարդան, Ներսէչ :
Գիշնդակ օր և հաս ի Տամկաց դիմոյ մարդկան և ի
հաւատս ըրբառուածրար (40). և ոտք տարապելոց պա-
րաւանդեալկաղեցանիշդթ այսերկաթեղէնս : Ա ան-
որոյ բազումք խորշակահարք և հեղձամղձուկ աստա-
կեցան : Ի նոյն խորհրդի գնացեալ Ներաէ՛ ան-
ցանէր ընդ Հացիան գիւղ մտանել յԱստրիա. լինէր
օրն կիւրակէ : Կա մեկնեալ յընկերացն միայն՝
դարձաւ առ հոգեւոր հոցրն Ախմէօն՝ սպասաւոր
սուրբ խաչին, ծածկելով զանուն խըր՝ ընդ այլն
ազօթէր :

Խակ երանելին Ախմէօն առնա խրախուսեալ ամէր.
ո՞վ ես դու՛ Տէր Աստուած յայտնեաց զաշխարհա-
կործան քո ամբարշտութիւնդ, որ և որդիք ոմանք
զրոյին լուռթեանդ չարութիւն (41) կորատեան
տառապելոց առնուն դաւազան . ոչ առարին դու-
իցես Ներաէ՛ . որ զիմեալ երթաս յԱստրիա Քրիս-
տոսի յաւելորդել զնոյն չարութիւն արեւելեսցցն
եկեղեցեաց : Այսդ երթաս զերկիրն, այլ բաց աչօք
ոչ տեսոյես զերկիր հարց քոց : Խակ Ներաէ՛ ի ան-
կեալ առ ոսս ծերոյն՝ ոչ ինչ լսէր սրատասխանի,
միայն զնանապարհն զնոյըր . և անդէն վախճանեալ ,
ըստ բանի հօրն Ախմէօնի, անշնչացեալ լոկ մարմինն
բերաւ ի հող խըր : Ներաէ՛ ի որդիք Գաաղիկ. Գաաղիաց
որդի Ատեփաննոս և Ասլրսամին՝ քոյր խըր : Զայս

Վարսաղ-Տիրատ և զորդի խր Ատեփաննոս Կերսէն
Փիզիոլպեան՝ ազգակիցն խր, սպան ի միում ժամու
ի Խորածորն, որ կոչի Պաղոյի վանք : Առա յայն
աղէտիցն զառն զգեցեալ արութիւն կնոջն սպանե-
լոյն՝ առեալ զմնացեալ խր զուստր Ապրամ՝ զիշե-
րահէն տաժանելի ուզեւորմամբ մտանէ ի բերդն
Խաչենայ՝ բարուրո Խորհեալ տան խըռում՝ ամուս-
նացուցանէ զԱպրամ Ատրներսէնի՝ Առջի որդուց,
որ է ի Տոհակաց և տէր Ախնեաց, որոյ բռնազրօսու-
թեամբ կալեալ էր զգաւառն Գեղամայ, և որդին խր
Ատրներսէն հանդիպեցաւ կնոջ զգաստի, որք եր-
կիւղածք յԱստուծոյ, և բարեպաշտ զիւրեանց ցու-
ցանէին զկեանս, և աշխարհի քաղցունք :

Առ Ատրներսէն շինէ զբերդն Հանդու, և զատա-
քանս խր եղեալ ի զիւղն որ կոչի Վայկունիք, ուր և
բաղանիք արքունակուն են : Զնա տարան ընդ այլ
իշխանան յերկիրն Պարաից, և կալով նորա ամս բա-
զումն՝ տիկինն Ապրամ յառաւել բարեգործութիւնս
յաճախեր, և մեծածախ տենչմամբ շինէ զՆորավանս
ի զաւատին Աոդից ամենասպայծառ զարդուք : Եւ
խակոյն զայր Ատրներսէն զերծեալ ի կողմանց Տաճ-
կաց, և զաւժամայս լուծանէ կեանս : Վինին սորա
որդիք Գրիգոր և Ասուսէթ : Գրիգոր շինէ ըզ
Հաւախաղացին բերդն, և յայն կողմն ձգեաց զձեռն
իր իշխանութեանն : Եւ Գրիգորոյ լինին որդիք

Հինգ, յորոց երէց որդին Ապու-Այի սովանսանի յազգակցին Սմբատայ, և միւս որդին Սահակ որևէ Սեւաղայ կոչեցաւ՝ այր քաջ և յաջող : Սա սոհասարակ տիրեաց Գարդմանաց և Քուստի-Փառնաց դաւաց, այլ և աւաղակալեւտաց Զորոց գետոյն բավանդակ եղեւ իշխան. և խնդրով իսկ դրազիսութեան, և դպրապետո ի տան խրում կարգեաց : Ընդ որ և բազմաջան հնարինը թաղաւորն Հայոց Սմբատ մարտուցեալ՝ ոչ ինչ կարաց ստերիւրել զնա ի կամս իւր :

Եւ Սեւաղայ ծնանի երկու որդիս՝ զԳրիգոր և Դիմիտր. Գրիգոր ծնանի զՍեւաղայ որ Խշխան անուն կոչիւր, և զՄտրներաէն. Խշխան անուն ծնանի որդիս չորս՝ զՅովհաննէս, զԳրիգոր, զՄտրներաէն, զՓիլիպպէ : Զերէց որդին Խշխանին զՅովհաննէս որ և Սեներերիմ կոչեցաւ, ընտրեաց աջ բարձրեւցն կոչելով ի թաղաւորութիւն. զվաղնջուց խափանեալ թաղաւորութիւնն Տէր ամենակալ ի ձեռն սորանորոգեաց. զօր թաղաւորն Պարսից մեծամեծ զարդուք զարդարեաց զնա՝ տայ նմա և զթագ հօր իւրոյ և զնորին երիվարն : Խ նոյն ամի և որ Յունացն էր Մաղիստրոս Դաւիթ կոչեցեալ անուն՝ թաղ զարմանաղան և ծիրանիս թաղաւորական սուարէր ի պատիւ և ի զովեստ աստղւածայաջող առն այնորիկ . և ի ձեռն հայրասպետական աջոյն առնոյր

զօծումն թաղաւորական ի վասա Քրիստոսի :



իզ. — Անուանք հայրապետական Աղվանից . ամբ
և գործք նոցին :

Սակա հայրապետական անուանդ պա՛րտ և սպառ-
չուճ վարկանելի էր զստոյզն գրոշմել ի դրի, բաց
զի յիսկը բանցն հոլովեալ և նախաշախիդ առաջնորդաց
գործք և ժամանակը և անուանք հրկեղ և զեալ յան-
օրինաց, և Կտակարանիք և սպառք և տեղիք կազց
նոցա անցայտք՝ մեզ ոչ բերեալ ի լուր. այլ զայտ
փոքր ի շատէ արտայայտեալ բացատրեցաք առ ի
զիտութիւն այնոցիկ, որք փոյթ յամնին կալեալ իցեն
ոյամ խնդրոյ : Այսէ զի առաջին որատճառ լուսա-
ւորութեան մերոյ է սուրբն Եղիշա՝ աշակերտ սուրբ
առարելոյն Թաղդքոսի, որ ձեռնադրեցաւ յՆորու-
տաղեմ ի ձեռաց սրբոյն Յակովաց : Աս եկին լուսա-
ւորիչ երից աշխարհաց Զողայ, Վահնաց և Աղվանից,
և ի սոյն կատարեցաւ վկայութեամբ : Եւ սպա Տէր
սուրբն Պրիգորիա Պահպահիկ թռոն մեծին Պրիգորի՝

Հայոց Լուսաւորչին, Երկատեսակ վասոօր կայեալ
ի նոյն աթոռ :

Սուրբն Շուշիաղիչոյ, Տէր Մատթէոս, Տէր
Սահակ, Տէր Մովսէս, Տէր Պանոս, Տէր Ղազար,
Տէր Գրիգոր, Տէր Զարուհիս, Տէր Դաւիթ, սուրբն
Յօվհան որ և Հօնաց եղեւ Եսլիակոսոս հայրապետաւ
կան շնորհիւ . Տէր Երեմիա : Ի սրա աւտքա արար
դիր Աղվանից Երանելին Մելքոնի, որ եւ Հայոց եւ
Վրաց եւ զնշանազիր ջանիս մեծաւ : Տէր Արաս
որ յակոբան թուականիս Հայոց վախեաց զաթոռ
հայրապետոթեանն ի Զողոյի, ի Պարտասաւ. կացեալ
ամս հայ յեպիսկոպոսոթեան Մեծ Խրանց կոչեց-
եալ . և առ սովոր կալան սովորոթիւն դրել ի սրա-
ութուակթիթի Աղվանից, Լինաց և Զողոյկաթողի-
կոս : Եւ առ սա դրեցին ի ժողովոյն Պավելաց ասել
մի ընութիւն աստուածոթեան և մարդկութեան,
յուելու ի սուրբ Աստուածն անմահ և խաչեցար.
զի նոցա ուսեալ ի խնզիր Պրոկրի Կաստանանու-
սովի հայրապետին, որ Երկերիսը սուրբ Հարդին
Եփիսոսի ժողովոյն տակաւորեցին ի սուրբ Երրորդու-
թիւնն . և յետոց ի Տիմոթէոսէ՝ Աղեքսանդրու հայ-
րապետին, և ի Պետրոսէ Անախորացւոյն գալատեանն
առ Անաստաս կոցորդն ընդ ձեռն Յակովոյ՝ Միջա-
զետաց Եսլիակոսափափի, որք զնոյն սահմանեցին ուղղա-
փառացն անմահ և խաչեցար ասել որպէս և է իսկ,

զի չէր լեալ սովորութիւն։ և ոչ հերձուածք կային
յաշխարհիս, թէ պէտք ունիս մեր քննութեանս
այսորիկ (42). առաջ յետոյ առ Եղրիւ կաթողիկոսիւ
գնաց Ստեփաննոս՝ Գարդմանայ եպիսկոպոսն, առ
նաև և հաղորդեցաւ ընդ նմա : Եւ Գարդման, եւ
Արձակս ընկալան զաւանդութիւնս զայս, զոր այժմ
ամեներեան ունիմք :

Տէր Վիրոյ՝ ամս 34 : Սա թափեաց զգերեալն
Հայոց, Վրաց և Աղվանից ի Շամայ Խաղբէ. և սա
խնդրեաց ի Խոսրով արքայէ գրել պատիւա Գարդ-
մանայ տէր և իշխան Աղվանից ի վերաց թղթոց
առ կուսակալս աշխարհիս, զոր և դեռ ևս գրեն :
Տէր Զաքարիա՝ այր սուրբ, ամս 17 : Սա յերաշխի
առ զմեծ քաղաքն Պարտաւ, և աղօթիւք իւրովք
զերծոց ի գերութենէ զբաղում անձին, և ձեռնադ-
րեաց եպիսկոպոս Սիւնեաց զլրդանէս ոմն անուն
յանհաւաննութեան Հայոց : Տէր Յովհան՝ ամս 25,
յեպիսկոպոսութենէն Ամարասայ կոչեցեալ յա-
թոռ : Տէր Ուխտանէս՝ ամս 12 : Սա անիծեաց ըզ
նախարարս Աղվանից վասն աղքաշաղախ խառնակ-
ման, որք եղեն սաստակեալք. Տէր Եղիաղար՝ ամս 6,
յեպիսկոպոսութենէն Շաբոյ : Սա եղիտ զսուրբ
խաչն ծածկեալ ի Մեսրոբայ, ի Գիտ գեօլ. եւ ի
նոյն կենարար փայտէն մասն առեալ՝ եդ ի 120
դաշնեկանի ուկւո՞լ, և գրեաց. Եղիաղարաց է. և կարգ

ևդ զօր խաչին տօնել ի Գիս : Աերսէս, յեպիսկու-
սոսութենէն Գարդմանայ՝ ամս 17 : Սա վրիպեալ
ի մոտաց՝ կամեցաւ աղմկել դսեպհական տունա Աղ-
վանից խոտորեալ յաղանդն Քաղկեդոնի : Կոտեալ
մաքմուլ և ողւով յանձնա՞ որոշեալ եղեւ ի փառաց
Որդւոյն Աստուծոյ Աղվանիք և Հայովք՝ բաժին
առեալ իւր զոր հերձուածողքն առին : Տէր Ախմէօն՝
ամ մի և կէս : Սա էր սարկուադապետ աթոռույն որ
զպգտորումն Աերսիսի երարձյերկրէս, եղեալ կանոնա
7 տունա : Տէր Միքայէլ՝ ամս 35 : Սա էր սարկաւագ
ի Շաբոյ. և սորա կոչեցեալ զՄաքենոցաց հայրն
Սաղօմօն, և անիծեալ զտեարս Աղվանից, որոց զե-
րից աղդաց ծնունդս ամուսնացեալ էին, որ առժա-
մայն հասեալ սրատուհաս սպառեցան : Տէր Անաս-
տաս՝ ամս 4 : Տէր Յովհէմ՝ ամս 17 : Ի սորա
հինգերորդ ամին լցաւ 200 ամ թուոյ Հայոց : Սա
եկեալ յաթոռ յեպիսկուալութենէն Ամարասաց :
Տէր Պատիթմ՝ ամս 4, և սա յԱմարասաց եպիսկուպո-
սութենէն կացեալ յաթոռն՝ թափեաց զող և զսպաս
սրբութեանց. և դեղ մահացու արբեալ ի դասողաց՝
վախճանի : Տէր Պատիթմ՝ ամս 9, յեպիսկուպոսու-
թենէն Մեծ Կուենից : Սա վաճառեաց անօրինաց
զՊաստակերտն և զՍահմանախաչ : Տէր Մատ-
թէոս՝ ամ մի և կէս, յեպիսկուպոսութենէն Կապա-
ղակաց և Սողկու :

Տէր Մովսէս՝ ամս երկու : Տէր Ահարոն՝ ամս երկու : Տէր Սալոմօն՝ կէս ամ : Տէր Թէոդորոս՝ ամս 4, յեպիսկոպոսութենէ Գարդմանայ : Տէր Սաղմօն՝ ամս 11 : Տէր Յովհաննէս՝ ամս 15 : Աս փոխեաց զկաթողիկոսարանն ի Բերդակ, որ իւրեանց Հովանոց տեղիք էր, որ հանու ի Պարտաւայ : Տէր Մովսէս՝ կէս ամ : Տէր Դաւիթ՝ ամս 28, յեպիսկոպոսութենէն Կապաղակայ : Աս օրհնեաց զանօրէն ամուսնութիւնն Շարոյ տեառն. և նորին տեառն Եղբայր աշխարհական հարցեալ ասէ ցնա. Դաւիթայ լեզուգ որ օրհնեաց մի խօսեացի, և աջդ չորսացի. որ առժամայն եղեւ մինչև ցմահնորա :

Տէր Յովհաննէփ՝ ամս 25, յեպիսկոպոսութենէն Մեծ Կուենից. անձամբ առեալ սորա զպատիւ՝ յետոյ լուծեալ ի կարգէն՝ առնու զերկլորդ ձեռնազրութիւն ի Գէորգայ՝ Հայոց կաթողիկոսէ : Տէր Յովհանն՝ 8 ամ և կէս : Աս էր Դիմայ եպիսկոպոս, և առանց կամաց կաթողիկոսին Գէորգայ զայ յԱղվանս. եւ աստիւն ձեռնազրի, զոր նոյն ինքն Գէորգ եւ զսակրկին ձեռնազրէ :

Տէր Ամելօն՝ ամս 21 : Աս էր զրան եպիսկոպոս սուրբ աթոռոյն. որ առաւել զարդարեաց սակասուք զառիք խաչն : Տէր Դաւիթ՝ ամս 6, յառաջնորդութենէ Փառխառոյ վանաց : Տէր Ահարոն՝ ամս 18, յեպիսկոպոսութենէ Մեծ Կուենից : Տէր Գաոզիկ՝

ամս 14, յեպիտակոպոսութենէն Գարդմանայ : Իսորա
չորրորդ ամին լցաւ թիւմ Հայոց 400 : Տէր Դաւիթ՝
ամս 7, յեպիտակոպոսութենէն Կապաղակայ : Տէր
Դաւիթ՝ ամս 6 : Աս ա՛ռ ձեռնադրութիւն յԱնա-
նիայէ՝ Հայոց կաթողիկոսէ : Տէր Պենեղաս՝ ամս 18,
յեպիտակոպոսութենէն Գարդմանայ : Տէր Մովսէս՝
ամս 6, յառաջնորդութենէ Փառխառսոյ վանաց :

ՎԵՐՋ



ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՋԻՆ ԵՒ ԵՐԿՐՈՐԴ ԳՐՈՑ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂՎԱՆԻՑ

ՄՈՎՍԻՍԻ ԿԱՂԱՆԿԱՅՏՈՒՑԻՈՑ:

1. Թիւ ամաց հասակի 10 նահապետացն յԱղամաց մինչև ցՆոյ, զոր թուէ հեղինակ մեր, ուրեք ուրեք խոտորի ի Ասմուէլէ Անեցւոյ, գոլով բազում մասամբ համաձայն սուրբ Գրոց : Զորօրինակ մատենագիրն մեր տայ Յարեղի ամս 165 ի ծնանին զԵնովը, որում սուրբ Գիրք և Ասմուէլ տան 162 : Մաթուսաղայի տան Կաղանկայտուացին և Ասմուէլ ամս 167 նախրան զծնունդն Ղամերայ. իսկ Աստուածաշունչն՝ 187 : Ղամերայ տայ Կաղանկայտուացին ամս 168 նախ քան զծնունդն Կոյի . իսկ Աստուածաշունչն և Ասմուէլ 186 :

2. 2դ օրինակ մեր ունէր Գիգերովն. 3դն և 4դն՝ Գեղերովն : Ասմուէլ Անեցին զնէ Գաղերոն մերթի հարաւ կոյս, մերթ՝ ի հիւսիս. սապէս և Միքայէլ Ասորի : Ոչ կամեցեալ թարթափել ի գիւտ անուանը որ արտաքոյ երեւի մերոյ աշխարհի և թերեւա այլայլեալ այսչափ ինչ ասեմ հարեւանցի թէ Գա-

դիր կոչեր ի հնումն ի լեզու Փիսնիկեցւոց քաղաքն
Գաղէս (այժմ Կաղիպս), և նեղուցն Գաղէսի Գաձա-
ռում fretum արդ անուանի կիրճ Գիրբաղտարի :

3. Ծագումն Արաց անցացտ իմն է, եւ գրեթէ
անստոյդ, թէ և ոչ աւանդութիւնը պակասին, ոչ
ժամանակագիրը : Միջին դարու սպասմաղիրք մեր
տեսեալ զսակաւ մի զօրանալ նոցա և տիրել մասին
ինչ հիւսիսց Հայոց մեծաց՝ ձիոն եղին հնարել
ազգաբանութիւնս անծանօթս Խորենացւոյն և այլ
ամենայն մատենադրաց մերոց տռաջնոց : Յայս
ասկա Հայկ, որ իսկզբանէ անտի միածին համարեալ
էր հօր իւրամ Թորդոմոյ, յետ ի վերաց անցանելոց
3,000 և առելի ամաց ստացաւ, ըստ վեյելոյ Ստե-
փաննոսի Օրբէլեանց եւ նմանեաց իւրոց, այլ եւս
եղբարա եւթ . Քարթլոս, Քարդաւս, Մովլան, Լե-
կան, Հերաւս, Կոմիաս, Եղրէս. որով եւ Վիրք
իրրեւ սերեալք ի Քարթլոսէ՝ եղրօրէ Հայկաց, գրե-
ցան մեղ հօրեղբօրորդիր : Այս ինչ անտարակուսե-
լի է թէ ընդ բարս, վարս, խօսս, աւանդութիւնս
Հայոց և Արաց ոչ նշմարին ամենեւին հետք ինչ
ընտանութեան թէ եւ ի լեզուի նոցա գտանին բազ-
մաթիւ բառք Հայոց : Կաղանկայտուացին համա-
րեալ զվիրս սերեալ ի Թօրշայ՝ ընտանեցուցանէ
զնոսա Որդացւոց և Տիւրենացւոց : Այլուր բան
վցի զբառից Հայոց վարեալ ի Արացին :

4. 2 օրին . ունէին Ախղովացիք : Ախղոնացի
բառիւ չէ արժան խմանալ զբնակս Ախղոնի (արդ
Ասյդէ), որ էր մի իշահաստան քաղաքաց Փիւնիկիոց
ընդ մէջ Բերտափի և Տիւրի, այլ զազգս Փիւնիկե-
ցւոց և Քանանացւոց : Երրայեցիք կոչեն զայն Յե-
գոն (որա), յոր Առւրբ Գիղիք յաւելուն միշտ մակղիրս
մեժ (Յովսէ. ՃԹ. 8. Յուղիթ. Ա. 31) : Հիմնեալ
ի հին Տիւրացւոց Ախղոն շինեաց վերատին դՏիւր նոր
միտվ ամսայ յառաջ քան զաւերն Տրովայի : Ճար-
տար էին յոյժ Ախղոնացիք ի նաւավարութեան, ի
ձեռագործս և յայլ բազում արուեստս . և մշակէին
խնամօր զաստղաբաշխութիւն , զուառմականու-
թիւն և զիմնաստափրութիւն :

5. Կապուտակիսա , այս ինրն Կապատղոկիս +
Հնագոյն անուն գաւառիսէ Գամիլրք :

6. Գաղատիա համարի այսպէս կոչեցեալ յա-
նուն Գաղղղ կամ Գօլուայ՝ նախահարց արդի Գաղ-
ղիացւոց, յորոց գնացին անդ հատածը իրրե. վարձ-
կան զինուորք յառաջ քան դՔիրիատոս :

7. Վիտվիւ խմանալի է դՏրովայ հին քաղաքն,
որոյ աւերակք թուին երեւիլ ցարոդ առ Դարդանե-
լեան նեղուցիւ :

8. Այժմ Կերմաղոնիսա, է մին յեւթն Յոնիական-
կղզեաց ի Միջերկրեան ծովու :

9. Կարկիւրիսա է աղաւաղեալն Կորկիւր (Corcyre)

կղզւոյն Ֆէասեանց հատուածելոց ի Առնթոսէ. որ
ի ժամանակի Պեղոսլոնէսեան մարտի զինեաց 120
նաւա սպատերազմիկ :

10. Աեղաղէմն եթէ չիցէ այլայլութիւն Կիւկղա-
դեան խմբի կղզեացն (Cyclades), անծանօթէ ինձ :

11. Յովանիա կոչէր արեւմտեան մասն Ասիոյ
ուր Յոնեանք (Յոյնք) հալածեալ յԱրայեցւոց ի
Պեղոսլոնէսէ եկեալ բնակեցան ընդ մէջ Կիւղիոյ և
Կարիոյ հիմնեալ քաղաքս 12. իման Փոկէ, Երիթրէ,
Գլազոմեն, Թէոս, Կոլոֆոն, Եփեսոս, Պրիեն,
Միւյոնտ, Միւետ :

12. ԶՏրասլոն կամ Տրասլօն համարելի էր աղա-
սաղութիւն Տապրորան (Այլսն) կղզւոյ եթէ ոչ էր
Կաղանկայտուացւոյն յաւելեալ «և ի կողմի արեւմտից
երթան, հասանեն աղդքս այս մինչեւ ի Տրասլոն»,
զոր չեղեւ մեզ ստուգել ճշդիւ՝ թէև երեւին յԽտա-
լիա և ի Գաղղիա Տիեսլօրտ և մերձաւոր անուամբ
քաղաքք ինչ :

13. Արշակունի ճոխութիւնն կալաւ դաթոռ պե-
տութեան Պարսկաց ոչ ամս 450. այլ՝ 468-481. սկսեալ
255 ամօր նախքան դՔրիստոս՝ խափանեցաւ յամի
Տեսոն 226. և թագաւորք կացին ոչ 14. այլ՝ 22 :
Որոց կարդ և անուանք ըստ նորագոյն տեղեկու-
թեանց են ըստ այսմ. Արշակ Ա. Տրդատ-Արշակ
Ա. Արտավան Ա. Ֆրահատ Ա. (Հրահատ). Միհր-

դատ Ա. Ֆրահատ Բ. Արտավան Բ. Միհրդատ Բ.
Մնասկիրէս. Ախնատրոկէս (Աննատրուկ). Ֆրահատ
Գ. Միհրդատ Գ. Որոտ. Ֆրահատ Դ. Ֆրահատա-
կէս սակաւորեայ. Վոնոնէս. Արտավան Գ. Վար-
դանէս. Վողոգէս Ա. Բագուր. Վողոգէս Բ. Ար-
տավան Դ. :

14. Թիւ Արշակունի թագաւորաց Հայաստանի
ոչէ 24. և ոչ ամբ տեւողոթեաննոցա 620 : Ի Վա-
ղարշակաց մինչեւ ցԱրտաշիր նատան ի Հայս պատ-
կաւորք 27. զորօրինակ. Վաղարշակ Ա. Արշակ Ա.
Արտաշէս Ա. Տիգրան Ա. (Բ). Արտավազդ Ա.
Աստ բաժանեցաւ աշխարհ մեր յերկուս կամ առելի
տէրութիւնս. բուն թագաւորք մեր նատան անկախ
ի մեծն Հայս. այլք՝ ի փոքր Հայս ընդ հովանաւորու-
թեամբ Հռոմայեցւոց, զորոց ոչ ինչ յիշեն սրատմա-
զիրք մեր նախնիք : Արշամ. Արդար. (այսու
անուամբ բաղում թագաւորք յիշատակին ի դիրս
արտարին. զոր ստուգեն նաեւ զրամք նոցին) : Անա-
նուն, Աննատրուկ. Երվանդ Ա. (Բ). Արտաշէս Բ.
Արտավազդ Բ. Տիգրան Ա. Տիգրան Բ. (Գ). Վա-
ղարշ. Խոսրով մեծ. Տրդատ. Խոսրով Բ. Տիգրան Բ.
Արշակ Բ. Պատ. Վարազդատ. Արշակ Գ. և Վա-
ղարշակ Բ. (ի միասին) . Խոսրով Գ. (Երկիցո).
Վոամ-Շապուհ. Շապուհ պարսիկ եւ Արտաշիր :
Արդ հարստութիւնն Արշակունեցաց սկսեալ 150
5.

ամօք նախ քան զբրիստոս և բարձեալ 433 ամօք
զկնի՝ ամք տեւողութեան այնորիկ լինի ընդ ամէնն
583 և ոչ 620 հաշուեալ ի միասին և զմիջոց անիշ-
խանութեանն. և թիւ թագաւորացն լինի ընդ ամէնն
27 և ոչ 24 ըստ Կաղանկայտուացւոյն :

15. Երկու օր. կոչեր : Աթինէ բանս և անխմասոտ:
Պարոյր ոչ կոչէր Ակայորդի, ոչ Հրաշեայ եւ ոչ
որդի Հոյկակայ. այլ որդի էր Ակայորդւոյ և հայր՝
Հրաշէի. Խորեն. Ա. 22 :

16. Շրաթնէ, անտարակայոյս, Շամրաթն յորմէ,
ըստ Խորեն. Ա. 22. սերեցաւ արգայական ցեղն
Բագրատունի որ թագաւորեաց Հայոց և Վրաց :

17. Կամ բաղմանշան է բառս աղու, կամ ըստ
դարուց այլայլեալ : Խորեն. և Կարեկացին վարեն
զայն իրր համազօր քաղցու. Սարկաւագ և թարդ-
մանք Փիլոնի, Ոսկերերանի և այլն՝ իրր թիւնաւոր,
կեզծաւոր. ածանցրն աղուի նշանակեն կծուութիւն,
դառնութիւն, որպէս բացատրեն հեղինակը Հոյկա-
զեան բառարանին: Ինձ եւս մնայ յաւելուլ թէ աղու է
բառ համաշխարհական և տարրեր նշանակութեամբ
վարեալ ի լեզուս բազում. զորօրինակ. սու Թուրք
նշանակէ թոյն. առ Գաղղիացիա այցն նշանակէ սուր,
աղի. որք և առեւալեն զայն յահիարէ Գայելացն Ակով-
տիոյ և Խրլանդիոյ : Արդ ևս այս բառ վարի ի Հայա-
տան իրբեւ կծու, արտասուաբեր այլ ոչ իրբեւ քաղցր:

18. 2 Օրին . Կովկասաղաւանս . երրորդն՝ Կաւ-
կասաղաւանս . յայսմ վիճակի էր և օրինակն Հ-
Վետնդեայ Ալիշանեան : Ակնկալութեամբ ընտ-
րելադոյն գաղափարի թողաք որպէս և էրն յուղա-
գոյն սպատմենի մերում :

19. ԶՉողայէ ընդարձակադոյնս խօսեցեալ եմ ի
յառաջաբանի գրոյս . անդ առաքեմ դշնասէրս : Թէ
և զոյ դեռ տարակրոյս սակս նոյնութեան Չողայի,
Ճորի, Չողի . այլոչ սակս միոյ ի սոցունց ընդ Դար-
բանդի : Չողայ, որպէս է տեսանել Եր. 370 գրոյս,
չէր հեռի ի Դարբանդէ այլոչ էր գուռն Ալվանից
կամ Դարբանդն ինքնին որպէս գրէ ոմն առ մեօք :

20. Տեղի հռչակաւոր ի հին Ուտի նահանդի-
ուր սուարեալն Եղիչէ կանդնեաց զմայր եկեղեցին.
Աղվանից :

21. Վանք անուանի ի նմին գաւառի կոչեցեալ
գոտիոխակի Զյուշտիկ կամ Ներս-Միհր ուր հան-
գուցաւ սուրբ գլուխ սուարելոյն Եղիչի :

22. Այլ էին Աղվանք ևսյլ Ալանք թէն . ան-
ուամբ մերձաւորք միմեանց . սուաջինքն էին հնադոյն
քնակը աշխարհին . Ալանք յետոյ հասուած եկեալ
անդ ի հիւսխոյ, և կալեալ զմասն ինչ այնորիկ :
Մ. Խոր. Բ. 50. սպատմէ զարշաւանս Ալանաց յեր-
կիր մեր, զպարտութիւննոցաւ զամուսնանալն Ար-
տաշիսի Բ. արքայի մերոյ ընդ Աաթինիկ՝ դստեր թա-

գաւորինոցա: «Սոյն մատենագիրն Բ. 52 սլատմէ զմահ
հօրն Ապթինկայ, զգնալն Ամրատոյ՝ մերոյ դօրա-
պետի, յԱլանս և դժադաւորեցուցանելն զեղրայր
թագուհոյն մերոյ : Ապարէն զոր ինչ Խորենացին
Ալանաց տայ, զնոյն կաղանկայտուացին և Փոս-
տոս Բիւղանդացին Աղվանից վերագրեն. և սխալին
երկորին եւս :

23. 2 Օրին. ունէին «շտեմարանաց» 2 եւս՝ «շա-
րանաց» յոր անուն կոչին ցարդ ի Հայս սլտուղք եւ
արմուիք շարեալ ընդ թել և չորացուցեալ յամա-
րայնի ի ձմրան պէտս :

24. 2 Օրին. «շարս» :

25. Պագոն չատուածն Փղշտացւոց կարծիւր
հեղինակ արօրադրութեան և նշանակ բեղմնա-
ւորութեան. որ և պաշտիւր յԱղոտ և ի Գաղաց ուր-
եղին և զտապանակ ուխտին յափշտակեալ յիսրա-
յելացւոց :

26. 2 Օրին. «սլարապեսոլ» :

27. 2 Օրին. «ոչ դործէր» :

28. 1 Օրին. «վայրագն» :

29. 2 Օրին. «ուշնագնելութեամբ» . միւսն՝
«ուշագնելութեամբ» :

30. 2 Օրին. «չարանալ» :

31. 1 Օրին. «Ճեւի» . միւսն՝ «Ճրի» . իցէ՞ այս
Արիր քաղաքն Արար մատենագրաց :

32. 1 Օրին. «ճեղք» . նշանակէ թերեւա փոքր
մանուկ :
33. 2 Օրին. «ասլատամբութեամբ սլատճառս » :
34. Զոր կաղանկայտուացին Վաղարշակ կոչէ
աստ, զնոյն սակաւ մի ստորեւ Վաղարշ անուանէ :
- Անուն թագաւորիս Վողակէշ զրի ի հին դրամն
յորմէ Հռոմայեցիք արարին Վողողէս :
35. 2 Օրին. «ի բարի քաւութեանն » :
36. 1 Օրին. «անանց յաւխտենից ուրացողաց » :
37. 1 Օրին. «միարանութեամբ հաստատեալ » :
38. 1 Օրին. «զից աստեաց » :
39. Թոււահամարս ակամայ մոռացեալէ :
40. 1 Օրին. «մեծագոյն ուրուք » :
41. 2 Օրին. «զերկրեւաւ » . ուղղագոյն եւս էր
ընթեռնուլ ընդերկլեալ : Դժոխային սլատիժս
պարակական ցարդ եւս ի կիրէ, զյանցաւորն տարա-
ծեալ յերկիր պորտ ի վեր և հաստատեալ զդէմնն
յանդիման արեւու խարեն դաշսն ազդի ազդի հաւ-
րիս : Եթէ աստուածալսակն Վաչաղան այսսլիսի
դիւահնար կտտանօք վարեցաւ առ մոլորեալս երկրին
իւրոյ, զինչ ապա ոչ գործեցին դիւալսակրն :
42. 1 Օրին. «սակ» . միւսն՝ «պսակ» :
43. 2 Օրին. «տարւոյ տարի» :
44. 1 Օրին. «աղանդէր» . միւսն՝ «սղանդէր» :
45. 1 Օրին. «Յունաց եալիսկոպոսապետ» :

46. 1 Օրին. «Երդեսացւոյն» :

47. 1 Օրին. «Եւ նա եւս անխոյթ արարեալ Երիցուն» :

48. 2 Օրին. «որոյ վասն և Եկեալնոյն արբն նու վին ահաւորագոյն կերպարանօր» :

49. Եր. 153. տող 10 ի տեղի զեսպակին մի օրինակն ուներ վակամին :

50. 1 Օրին. «թիացն» . միւսն՝ «թևոցն» :

51. 1 Օրին. «Հոնդարաց» :

52. 1 Օրին. «որ ես պուժեալ ոքյամիցի» :

53. 1 Օրին. «մէծ ժողովրդիւ Պականու» :

54. 2 Օրին. «Պարահան» :

55. 2 Օրին. «յոտնկացեալ» . ոտնկալեաց համարի սկաշտոն ոտնկացութեան :

56. 1 Օրին. «Գեռօն» . միւսն՝ «Գեղեօն» :

57-58. 1 Օրին. «Բարուիձ» :

59. 1 Օրին. «վատակոխ դործեր» :

60. 2 Օրին. «հանդերձ ագելուն» :

61. 1 Օրին. «Պարսկանց» . միւսն՝ «Պարսկաստանաց» . Երրորդն՝ «Պարսականս» :

62. 2 Օրին. «Երկերտու» :

63. 2 Օրին. «զէտ եկեալ» :

64. Կամ ի Գլուխն 22 սրակամին բանքինչ, կամ որ զինի դայ կցուրդ այնմ համարելի է, մեր զէտ զնացար օրինակաց մերոց :

65. 1 Օրին. « Երկու բուռն հարեալ արգելոյր » :
66. 1 Օրին. « Թողոյր առաջի բրածին » :
67. 2 Օրին. « ընտելական » :
68. 1 Օրին. « բժշկելով զյուլովիցն խանգարդ հոս » :
68. 1 Վրկին. 1 Օրին. « մողմողայս » :
69. 1 Օրին. « զաւադ եսլիակոպոսն » :
70. 1 Օրին. « սալասարկէր » :
71. 1 Օրին. « հօր » :
72. 2 Օրին. « ի ժողովին » :
73. 2 Օրին. « Այրմանուշայ » :
74. 2 Օրին. « Երկիցս » :
75. 3 Օրին. « բաս քաղցու » . քաղցու կոչի ե Հայաստան հոյդ խաղողոյ կոխելոյ :
76. 2 Օրին. « Հայոց » :
77. 3 Օրին. « որ որո վար և այդի չէ » :
78. 2 Օրին. « խայտակ որ » . մին « կատակ ոք » :
79. 1 Օրին. « վասն ամենայն » :
80. 1 Օրին. « Մարտոք » :
81. Թուի թէ մատենադիր մեր չգնէ խտիր ինչ
ընդ դիցապաշտութիւն և ընդ հրապաշտութիւն ըզ
մին վարելով փոխան միւսոյն . սակայն աղանդն
Զրադաշտի (զօրացեալ յԱղվանս և յԱտրագատա-
կան) արգելոյր խստիւ զերկլագութիւն կուոց :
82. Եղաք ըստ չորից օրինակաց մերոց Փլինս թէ

և անհաւան կամօք. զոր աղաւաղութիւն համարիմք
լինաց .

83. **Տե՛ս զոյամանէ զոր ինչ գրեալ եմք ի յառաջա-
րանի դրոյս :**

84. **Կաղանկայսուացին զԳարդարա և զԱսմի-
ճիի Հեփթաղսն համարեալ զերի ածեալ ի Մակե-
դոնացւոյն յԱղվանս ընտղէմ ելանէ ապարէն Մոլ-
սիսի Խորենացւոյն և այլ սրատնարանից մերոց, որք
զԳարդարսն յԱռանոց ասեն սերեալ : Խակ Հեփ-
թաղը, որպէս ասացեալ եմ այլուր, ի Հոնաց յաղզէ-
էին և ի հիւսիսոց Զինաց հասուածեալ :**

85. 2 Օրին. « Ընդ ներբոյս » . թերեւս դրելի էր
ըստ ներկոյս :

86. Օրին. « Զորովովսում » , միւսն՝ « Զորավո-
խում » :

87. 1 Օրին. « զԱսիսն » , միւսն՝ « զԶախն » :

88. 1 Օրին. « մետաղն » , միւսն՝ « մետապան » .
Երրորդն՝ « մետաղան » :

89. 1 Օրին. « չխախական » . միւսն՝ « սլստղա-
կան » . Երրորդն՝ « սխաղական » :

90. 1 Օրին. « գործակոիչ » :

91. 1 Օրին. « Թօրէլեան » . միւսն՝ « Թօրէլական » :

92. 2 Օրին. « չոմարատակ » . զո՞ն, որպէս յոյտ
է, նշանակէ նաւակամուրջ :

93. 2 Օրին. « ագիստոսեան » . մեք պահեցար

զագիստրոսեանն իրրեւ լատինական էքստրմ՝ ասպետ, այրուձի :

94. 2 Օրին . « կենաց մարդոյ խմաստութեան ծնունդ է առարինութեան » :

95. 2 Օրին . « գունդդ » :

96. 3 Օրին . « չընոտի » :

97. 2 Օրին . « ալարազարդի » :

98. 1 Օրին . « յիննասմենից » : Ստեփաննոս Օրբելեան որ ի Գյուխն Լ . պատմութեան Ալևնեաց բառ առ բառ օրինակէ զԼաղանկայտուացին՝ զնէ . « և ճաշ արարեալ ամենայն մեծամեծաց խրոց ամենիցն ամենայն տոհմից ազատատոհմն Պարսից նախարարացն » : Եցրկորին եւս մթին են և դժուարիմաց : Հինամեանն կամ իննամեանն կաղանկայտուացւոյն շընծայէ խմաստ ինչ սպայծառ . ամենից ամենայնն Օրբելեանի ճապաղէ : « Նախնի Պարսիկը բաժանեալ էին ի ցեղս և ի նահապետութիւնս 40. յորոց մին թագաւորեալ՝ մնացեալ իննունք համարեցան առաջին նախարարութիւնը տէրութեանն . յայս թերեւս ակնարկէ իննամեանն կաղանկայտուացւոյն » :

99. Այսինքնէ մովկետան մովզես՝ որ էր դենպետ Զբաղաշտեան կեշտին :

100. Պակասի ի մին « ընթեռնուլ » :

101. 1 Օրին « պաճառ » . միւսն՝ « ուճառ » :

102. 3 Օրին. «Աթաշ խողայիւ» . մեր սկահեցաք
զմիոյ միայնոյ ընթերցուածն իբրեւ ու զղագոյն . զոր
համարիմբ ելեալ յարաջ խօղայէ . որ ի սկարսիկ լեզուն
նշանակէ մերթ հուր-աստուած , մերթ՝ իշխան հրոյ :
Երկրորդ իմաստիւս վարի արդ ևս խողայն ի Պարս-
կաստան ուր տանուտեալք կոչին քեանդ-խողայ :

103. 2 Օրին. « յիանանիւթից զրեհիւք » :

104. 1 Օրին. « չորերթ զեան ձակառն սրբնձեայ և
տախտակովն յօրինեալ » :

105. Բազում անգամ ցանկացայ գիտել զրուն
նշանակութիւն վարազագիր բառի . և իդձ իմ ցարդ
անկատար մնայ : Բացատրութիւնն զոր տան բառիս
հեղինակը Հայկազեան բառարանին , անբաւական
թուի ինձ . Հ. Ղ. Ինձ . ի Հնախօսութեանն Հայա-
տանեայց . Հատոր Գ. եր. 79 կարծէ ի խոր կամ
ի բարձր բանդակէ տասացեալ վարազագիր . այլ ոչ
ինչ յառաջ բերէ յասլացոյց բանից խրոց : Մեր ես
թէեւ գիտեմք թէ մին ի Սասանեան թագաւորաց
կրէր ի սաղաւարտի խրում սկատկեր վարազու , թէ
արք աւագանիք ինշան քաջութեան կոչէին զանձինս
վարագ և թէ վարագն սակաւու իմն տարբերի ի
վարազագրէ (ոսկեղիր) . տակայն նախ բան յայտնեն
զմեր կարծիա՝ խոստանամբ մի Շար հայ պատմագրաց
ի պարզեւ այնու որ յանձն առնուցու տալ մեզ զնիւդ
մեկնութիւն բառիս :

106. 1 Օրին. « ախոյանայր » . միւսն՝ « ախոյա-
Նէր » :

107. 1 Օրին. « ի Մազիս » . միւսն՝ « մաշխտա-
թըս » , երդորդն՝ « ի Մազիս » :

108. Երես 211. տող 15 : Հին դրամք Սասա-
նեանց դանունս Յազկերտ գրեն Խզդկերդ որ թա-
գաւորեաց ի 440է ց457 ամ Տեառն և համարի
երկրորդ ըստ կարգի. այլ մեք պահեցաք զմերոցն
յարմարագրութիւն :

109. Լուրնաս գետ համարի յումանց այժմեան
Եօր. առ որով էր ի հնումն քաղաքն Խաղխաղ .
Եղիշէ եր. 131 կոչէ Լովնաս :

110. Եղիշէ եր. 131 կոչէ Գաազրիկ :

111. Զհանգամանս ամենայն պատերազմիս օրի-
նակէ Կաղանկայտուացին գրեա՛ թէ բառ առ բառ
յԵղիշէի զրոցն : Յայս սամկս զԿապկոշն (Կոմիկաս)
որ չէր հեռի յասակարիզէ անտի ճակատուն, պահեցաք
ըստ նորուն Եղիշէի թէեւ երկորին այլ օրինակք
ունէին Կապկոշ :

112. Երես 219. տող 6. 1 օրին. « սիւզեղաբար » :

113. Կոր իմն ասդացոյց կարծեաց մերոց թէ Զո-
ջայ ոչ է Գարբանդ. այլ այլ իմն քաղաք ուր նատան
ամս աւելի քան երկերիւր կաթողիկոսք Աղվանից :

114. 2 Օրին. « Ախնասաց » :

115. 1 Օրին. զեւսորախուսլեան լուեալ յինէն » :

116. 1 Օրին. « Տրխոյ » :
117. 1 Օրին. « ի մէնջ » :
118. 1 Օրին. « այլ մարմարական պատերազմումբ կարի աճէլին » :
119. Չորեքին օրինակը մեր այսպէս ունէին. թէ եւ մարթէր ընթեռնուլ ընտրեալ առաքելոցն երկու տասանից :
120. 1 Օրին. « յետս յետս » :
121. 1 Օրին. « Փղօս » :
122. 1 Օրին. « Գայշանիոյ » :
123. Չորս կաղանկայտուացին կոչէ աստանօր հասարակօրէն Խաղիր, պատմադիրը Յունաց զանազանն յԱվարս, ի Բուլղարս, ի Ռուսա, ի Ալավ, ի Գերեզս, ի Թատրքս. յորոց Հերակլ առեալ տարագաղթականս յերկիր կայսերութեան իւրոյ : Չոմանս ի վայրենեաց աստի ի ձեռն պատարագաց որսաց եալ Հերակլի գրգռեաց արշաւանս դնել յերկիր Պարսից. այլը եւս սաղրեալ ի սոցանէ ասպատակեցին ի Յունաստան և աւերեցին զմասն ինչ Կոտանտնուազօլսի :
124. Ծով մեծ կոչէ կաղանկայտուացին զԼասալիականն որ համեմատութեամբ ընդ այլոց ծովոց հաղիւ թէ արժանի է ծովակլի անուան :
125. 1 Օրին. « զա՞ւ և զտկարութիւն մեր » :
126. 1 Օրին. « յոտ մի՞ն . միւսն՝ « յոտ մի՞ն . մեր

եղաբ հօտյոր անուն կոչի ցարդ մին ի խաղուց ման-
կանց Հայոց, որք գործեալ դարձակ ինչ կամ վտափե
յերկիր՝ ձգեն յայն զափ մի ընկոյզ կամ ալնդուլ, եւ
որ արկանէ զամենայնն ի հօտն՝ շահի զխաղն :

127. 2 Օրին. « պերեւէ ջտիցն » :

128. 1 Օրին. « միայն ձեռնոտու լիցին ինձ ի մեծ
նախանձուէն դիսաւորաց. յանձն առնում եւ ևս
ըսուլ զազասրումն զազանաբարոյ ոսկեսէր աղջին » :

129. 1 Օրին. « Պորկանն » :

130. 1 Օրին. « դումարտակարանութիւն » :

131. Զոր մերայինքն Կալատ կոչեն՝ Յունացն
պատմագիրք Սիրոյէս եւ Եերուէհ կարդան : Գու-
մարտակն Հերակլի ընդդէմ Խոսրովու Բ. սկսաւ
յամին 622 և ի յանդ ել ի 628 ամին. որ եւ ի ճակատս
6 խորտակեալ զզօրութիւն Պարախ և աւերեալ
զբազում զառառս աշխարհին՝ ետ ընկենուլ յաթոռոց
զԽոսրով և սպանանել :

132. 1 Օրին. « անուարակաց » :

133. 2 Օրին. « Մարազպանդ » :

134. 1 Օրին. « մօտաւոր » :

135. 2 Օրին. « իդաղան » :

136. 1 Օրին. « հեղձամահ արարեալ զնոսա ող-
ջէն. այլ վարեցին » :

137. 1 Օրին. « խառարն մառախչապատ » :

138. 1 Օրին. « գիշագարշս » :

139. 1 Օրին. « կողմանակարդ » :
140. 1 Օրին. « զորօմաձեւ » :
141. 1 Օրին. « անսպիսն » :
142. Թէեւ եղար ըստ չորից օրինակաց մերոց չոր խեչ. այլ ակամայ. կնճիռ, կնճեռ և չեչ կոչի ի Հայաստան ողկոյզ խաղողոց կոխեալ և մղեալ :
143. Թարիսան ոչ թոփ գոլ անուն յատուեկ. եւ նշանակէ ի լեզու Թամթարաց աղաս, ապահարի :
144. 2 Օրին. « որ վանեցին զորդիսն Հռոմայեցոց » :
145. 2 Օրին. « յոր յարուցեալն էին » :
146. Թոփ լինել Կասան զիմաստոն Ավարաց որ ի սաղրելոց Խոսրովու Բ. արշաւեաց ի Թքակիա եւ յապականութիւն եղ զմի մասն Կատանանուազօսի:
147. 1 Օրին. « ընկիմնեալ » :
148. Զերու խարսնն (ողբաց) Կաղանկացտուացոյն է Զերելն Յոյն պատմաբանից որք համարին զնա ոչ ըստ մերոցն իւազւաւոր Խազբաց. այլ զօրսավար Թուրքաց բնակելոց առ Վոլգայ գետով : Աս էր որ պատրեալ յուկրոյն Հերակլի անց ի գլոխ 40,000 սցրուձից և արշաւանս եղ յԱզգանս, ի Վիրա և ի մեծն Հայսյամի 627 զործելով ամենայն որեք չարիս և առերս անհնարին :
149. Վահրամ-Զորինն Ասսանեան կարգեցաւ յՈրմզզայ արքայէ կուրակառ առ ի վանել զյարձաւ.

կումն Թուրքաց Ավոլգայի, որոց ասպատակեալ էր
ի Հայս և յԱտրապատական ։ Յետ սպանանելց
Ահարամայ զառաջնորդն Թուրքաց կալաւ գործ
պատերազմի ընդ որդւոց նորա, զոր և ձերբակալ
արարեալ արարեաց ի Մաղային. և տեսեալ զա-
պերախտութիւն Որմզդի սերմանեաց խորվութիւն
ընդ նա և ընդ որդի նորա Խոսրով (Փարսիկ)՝
ժառանդ ամոռոյն Պարսից : Խրբեւ խոյս ետ Խոս-
րով յԱտրապատական՝ Որմիզդ հրաման արար
ունել և ուահել ի բանտի զբենողուեհ և զՎաստամ
(Բնդոյ և Աստամ)՝ քեռիք նորա : Սոքա եւս շար-
ժեալ ի սրամնութիւն կալեալ կուրացուցին զՈր-
միզդ, զոր սպանեալ սպա փախստեաց գնացին ի
Յոյնս հանդերձ Խոսրովու յահե Ահարամայ-Զուրի-
նայ : Յորժամ Խոսրով փեսացացեալ կայսերն՝ դար-
ձաւ զօրու Յունաց և տիրեաց Պարախից՝ յայնժամ
Ահարամ-Զուրինն խոյս ետ ի Թուրքատան ուր եւ
սպանուալ յետ սակաւուց : Այնապէս սպանուն Բնդոյ
և Աստամ հրամանուա Խոսրովու :

150. 1 Օրին. « սորա յորդոր լինէր միւսն՝ սի-
րայորդոր լինէր » :

151. 1 Օրին. « սորա յորդոր լինէր միւսն՝ սի-
րայորդոր լինէր » :

152. Կաղակա կոչի քաղաքաւանն ի սահմանո
Բարիլոնի 15 փարաախ հեռի ի Կոմիայէ : Ասո

մղեցաւ մեծ ճակատն Ամահմետեանց ընդդէմ հրա-
սլաշտ Պարսից : Եւ գոռողն Յաղկերտ մատնեալ
ի պարտութիւն փախսեաւ ի Հուլան. որ և սսլանեալ
ի ջրաղացապանէ ումեմնէ թաղեցաւ յիստահր :

153. Չորեքին օրինակը մեր ունեին միասլէս
յութն ամսոջ զոր ուղղեցաք եղեալ յութերորդ
ամին Յաղկերտի, որ ելեալ յաթու յամին 632, ի
640 ամին մղեաց զ՞ոչակաւոր ճակատն զորմէ խօսի
կաղանկայտուացին :

154. Պարաիկը յեօթներորդ դարուն բաղում ճա-
կատս ետուն Արարաց. ի մարտին կաղակաց (636)
հրամանատար զօրու նոցա էր Ռուստամ-Գյարուք-
զատ : Ի ճակատուն 'Ահավենդի (640)' Պերոզան
կամ Գերուղան, ուր անկատ 'Յօման' Արարացն
սպայապետ : Խորազատ եթէ շիցէ ացլայլութիւն
միոյ յերկուց անուանց աստի՛ համարելի է իրրեւ
մի յստորին զօրավարաց Պարաից :

155. 1 Օրին. « զրտահարելն » :

156. 1 Օրին. « Գեղմնազգի ոմն » . միւսն՝ « Գե-
ղանազգի ոմն հիւղինակ » : Թերեւս դրելի էր անու-
նըս Պիլեմազգի յորոց թագաւորեցին յետոյ ի
Պարսկաստան :

157. 1 Օրին. « դեղուր գուժի » :

158. Թերեւս իցէ աժմեան Վետօրէչի դաւառն
Շիրվանի » :

159. 1 Օրին. « արք զառանձնողը » . միւսն՝ « զառանցանողը » :
160. Յաղկերտ Գ. որդի Շահրիարայ, ել յաթոռն յամի 632 և սովանաւ ի 652. որով բարձաւ տէրութիւն Պարսկաց :
161. 1 Օրին. « կորդեալի տանեաց » : Եցէ՞ կորդեալի ժանեաց :
162. 1 Օրին. « յԱրարատեան գաւառէ » :
163. 1 Օրին. « ամենաստեսչին » :
164. 1 Օրին. « արձայնք » . միւսն՝ « արձագանք » :
165. 1 Օրին. « բաղմագաշ » :
166. 1 Օրին. « ընդուտ առեալ » :
167. 1 Օրին. « չուեալի տէր » :
168. 1 Օրին. « վաթշաբար դրութիւնք » . միւսն՝ « քաթշաբար » :
169. 1 Օրին. « սլատաղահիւթ » :
170. 2 Օրին. « զերեամբ » :
171. 2 Օրին. « սլարդեւախիստ » :
172. 1 Օրին. « առ մեծաղնութիւն » . միւսն՝ « առ մեծարդնութիւն » :
173. 1 Օրին. « ըստաւարակութիւն » :
174. 1 Օրին. « կոյոյն վոլորտաձդութիւն » :
175. 1 Օրին. « ծայրայապաւիչ » :
176. 1 Օրին. « բայից » . միւսն՝ « բացից » :
177. 2 Օրին. « համազարդ պատրանտութիւն » :

178. 1 Օրին. « բուրուց խնկոց » :
179. Եթէ շիցէ Շիմաշէն՝ այլ իմն համարի ապաքէն գտաւառն Աքշակաշէն, որպէս ակնարկեալ եմ ի յատաջարանի մատենիս :
180. 2 Օրին. « սրբովեանց սրբոցն » :
181. 2 Օրին. « պուրաստին » :
182. 1 Օրին. « անխայաբար » :
183. 2 Օրին. « յօձարձակ » :
184. 1 Օրին. « զաղատասահ » :
185. 1 Օրին. « զվարապն» . միւսն՝ « զվարզն » :
186. 1 Օրին. « արկեալ զվահանան » :
187. 1 Օրին. « վիրադին » :
188. 1 Օրին. « անխայաբար » :
189. Ի վերոց գրի նամեսական. աստ' ամեսական, որոց երկոցունն մի եւ նոյն թուի իմաստ եւ գրչովեամբ մխայն զանազանեալ : Ի Հայկազեան բառարանի ոչ գտաւ մին կամ միւսն. ինձ եւս ոչ ախորժելի եղեւ տալ մեկնութիւնս մտացածին :
190. 1 Օրին. « վարձակական » . միւսն՝ « վարձանական » :
191. Գրաշարն մեր ի ժամանակի բացակայութեան մերոց փոխանակ ղնելոց զինի 190 թուահամարին 191, եղեալ է 184 եւ այնպէս հաշուեալ մինչ զ190 զոր վերստին կրկնեալ է : Զայս ծանուցեալ ընթերցողաց մերոցի տեղեկութիւն ակն ո. նիմ

Ներողամտութեան նոցա. ես եւս յոչ կամաց զհետ
երթալ ստիպիմ անդգուշութեան նորին :

184. 1 Օրին. « նշխարաց » :
185. 1 Օրին. « առայկացեալ » :
186. 1 Օրին. « ձորք » :
187. 1 Օրին. « իրի » :
188. 1 Օրին. « անտեղուն » :
189. (Կարդա՛ դայս թիւ 189). 2 Օրին. « հեղիւ-
նակին » :
190. Բազում անդամ յիշատակեալ գոլով անու-
նըս այս՝ պահեցար ի տալազրութեան մատենիս,
թէ և ոչ գտանի ոչ ի բուն Աղվանս և ոչ յերեսին
դաւառս մեծ Հայոց որք անկան ընդ նոցա իշխանու-
թեամբ. որ եւ անծանօթ երեւի Խորենացւոյն եւ
ստորագրութեան Հին Հայաստանեացց հեղինակին :
Այս անուն թէ եւ մերձաւոր Մեծ Կուէնից՝ միոյ
ի գաւառաց Արծափայ, այլ խանգարեալ երեւի :
191. 1 Օրին. « Տաղձանսն » անուն նոյնալէս ան-
ստոցդ : Զրովշտիկ և Գլխոյ վանք գոլով յՈւտիա,
ի վիճակի Խարայէլի եսլիակոստի, յորում էր եւ
Պաղձանք՝ առաջնորդարան նորին, համարելի էր
ասլարէն թէ եւ Մեծ Կողմանք էին յայնմ գաւառի
ի սահմանս մեծ Հայոց :
192. 1 Օրին. « լսեցուցանէր » :
193. Մի ոմն յարդի մատենագրաց դՊողա շիտ-

թէ ընդ Պարբանդայ հակառակ ասից Կաղանկայտուացւոյն, որ զերկոսին քաղաքս որոշակի յիշէ :

194. Ասպանդէատն որ չէ այլաճայն և այլանշան իմերոյն սարանդարամետէ գո՞նէ ինախարրիստոսեան դարս յորժամ Հայր, Պարաք և բազումը յազգաց հիւսիսի դնոյն ունէին կրօն, է Ասպանդոմադ կամ Կապենդարմատն Զենդից ըստ բացատրութեան Բուրնումի. որ և համարիւր մի յԱմշասպանդից (Խղեղից) զորոց ճառել հանդերձեալ եմք ի զիրս նախնի կրօնից Հայոց :

195. 2 Օրին. « նուիրական ձայնիւք » :

196. 1 Օրին. « ամարագոչ » :

197. 1 Օրին. « սրագործութիւն » :

198. 1 Օրին. « ուռուց » :

199. 1 Օրին. « ընդունելութեամբն » :

200. 1 Օրին. « յորժամ » :

201. 1 Օրին. « որք զօրք » :

202. 1 Օրին. « չափկասար » :

203. 1 Օրին. « յառաջ եղիցի նոյն ինքն զանպատում պարզեւացն Քրիստոփի » :

204. Որչափ անկեղծ Հայ մարդ զռւարձանայ ընդ լուր քարոզութեան սուրբ հաւատոյ մերոյ առ Հոնս, առ Թուրքաստանեայս և առ Խաղիրս ի ձեռն Խարայէլի Եսլիսկոպոսի, այնչափ եւս և աւելի թախծութեամբ լնանի սիրտիւր յորժամ լսէ թէ կաթողի-

կոսն Աղվանից ապառում կամակորութեամբ իմն
անփոյթ զայնմանէ եղեալ՝ ոչ աղերսանաց նորա-
հաւատ Հոնաց լսէ, ոչ Քրիստոսի պատուիրանաց
հոգատակէ և ոչ զիսրայէլ կամզայլեալիսկոստառնո-
սա առարի առ ի հաստատել և յընդարձակել զնորա-
ծին եկեղեցին Քրիստոսի : Եղիսակարն էր, այո՛ ըստ
արտարին ձեւոյն կաթողիկոս Աղվանից, այդ ըստ
Ներքնոյնո՞ղիտէ ինչ էր է՞րաշակերտ Քրիստոսին
հետեւո՞ղ էր սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին
սրբոյն Գրիգորիսին՝ Խրոյ նախորդի : Եթէ Աստուած-
որդին վասն վրկութեան մարդկան էջ յերկիր, ետ
զանձն իւր կամաւ ի մահ և առարեաց զընտրեալսիւր
յաշխարհ ամենայն տալ աւետիսկենաց ամենայն արա-
րածոց. Եթէ սուրբ Լուսաւորիչն կամաւ համբէր
սոսկապի չարչարանաց և անցոյց ամս երերտասան ի
խոր վիրապի առ ի լուսաւորել զՀայս. Եթէ սուրբ
մանուկն Գրիգորիս առաջնորդ կացեալ Աղվանից՝
աւետարանեաց զԱղազգութս, զԼոմիս, զՃիզիս,
զՀոնս և եհեղ զարիւն իւր սուրբ ի վկայութիւն
Քրիստոսի. Եթէ սուրբ Ղեւոնդեանք նաև ի կա-
պանս և տարադիր ի հայրենեաց ոչ դադարէին
տակաւին բարողելի Նիւշապուհ դրանն կենաց, և ի
հաւատս ածել զմողապետն : Ոչ սպարէն Եղիսակար
ևս, որ պանծայր նոյուն գոլ աթոռակլից և գործա-
կից՝ զնոցուն պարտ էր բերել յանձին զործս և

առաքինութիւն առ ի հաստատութիւն եկեղեցւոյ
Քրիստոսի և ի փրկութիւն մոլորեալ եղբարց մերոց,
մանաւանդ ի դարուն յորում Արարք տակաւ աշա-
կերտեալ Մահմետի՝ առաքէին ի չորխա ծագս աշ-
խարհի քարոզս նորածին կրօնի խրեանց : Ո՞հ ծանրէ
հեղդութիւնս և մեծի պարաւանաց արժանի : Եթէ
Եղիազար, իրրեւ գաղջ աշակերտ Քրիստոսի, ան-
փոյթէր զհողեւոր փրկութենէ Հոնաց, զէթ հոգալ
պարտէր, իրր այր կենցաղագէտ, զմորմնաւոր օգտէ
աղգայնոց իւրոց արդիւնաւորեալ ի հաւատակցու-
թենէ հզօր աղգայն Հոնաց, Թուրքաստանեաց եւ
Խաղբաց. սակայն նա յայսմ բարեմասնութենէ եւս
վերջացեալ գտաւ : Ամին իրի երերին ազգք հիւսի-
սոյ յետ դոյզն ինչ աստուածդիտութեան, վասն ոչ
ունելոյ քրիստոնեաց հովիւա, աշակերտեցան Մար-
դարէին Արարիոյ եւ խաւար ածին Աղվանից եւ
Հայոց առհասարակ :

205. 1 Օրին. « յիսկղբան » :
206. 1 Օրին. « յերկիր եկեալըս » :
207. 1 Օրին. « զհաւատն ». միւսն՝ « զաւանդն » :
208. 1 Օրին. « այլ թէպէտ » :
209. 1 Օրին. « յորդորարանութեամբն » :
210. 1 Օրին. « հերձողը » :
211. 1 Օրին. « Եւ զայլ աշխարհի զառաջին սովո-
րութիւն իւրեանց թողին » :

212. 1 Օրին. « Եւ ոչ գրոյն ի ալատասխանականին » :
213. 2 Օրին. « որպէսակաշտութիւն » :
214. 2 Օրին. « բարեկառմին ձերոյ կերտղոց » :
215. 1 Օրին. « նախարարացն » :
216. 1 Օրին. « ընդ խառն » :
217. 1 Օրին. « ի ճայն տապաստելոց » :
218. Չորեքին օրինակը մերունէին Առուշեղ: Եթէ
սալարապետ անուամբ մարզպանս կամ՝ ոստիկանս
Հայոց խմանայ Կաղանկայտուացին՝ սխովի ապա-
քէն. իբրովի առ Եղրիւ չփ Առուշեղ ոք կարգեալ
յայն գործ. այլ Վարագտիրոց Բագրատունի, Դա-
ւիթ Աահառունի եւ Թէոդորոս Ոչտունի :
219. 1 Օրին. « 75 սիւն » :
220. 2 Օրին. « 90 սեամբը » :
221. 2 Օրին. « թագ » : Այս բառ թէեւ ոչ գը-
տանի ի հայկազեան բառարանի. այլ վարի ի Հայաս-
տան. և նշանակէ վանդակաձև հիւսուած :
222. 1 Օրին. « վերնատունն միջին » :
223. 2 Օրին. « վարրայ կամարակապօք » :
224. 2 Օրին. « և ի նմանէն կրկին յայրն » :
225. 2 Օրին. « պանդսուանդըն » :

ՇԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

ԵՐՐՈՐԴ ԳՐՈՅ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՂՎԱՆԻՑ :

1. 2 Օրին. « Հատորը Երրորդ սրատմութեան Աղվանից » :

2. 1 Օրին. « Բախորհայ » : Թուլմա Արծրունի .
Եր. 110 դնէ զանցս զայս յԵղիպտոս սրատահեալ ,
որ չէ վաւերական իմն, և զդասատուն Մահմետի
կոչէ մոնողոն (մենակեաց) Սարդիս Բհիրայ արի-
տսական : Առ Սամուէլի Անեցւոյ անունս այս գրի
Բիսիրայ . և տեղի անցիցն դնի անապատն Աինայ :

3. 2 Օրին. « Կործան » . Երրորդն՝ « Կործան առ-
նել » , մեր Եղաք ըստ միոյն և եթ կոտորած առնել
նշանակել կամեցեալ այնու զանանազոհս Մահմե-
տեանց, թէ եւ առաջինքն Եւս ակնարկել կարէին ի
ի տարօրինակ ծնրադրութիւնն նոցա :

4. 1 սրատմութիւնս Պարսից ոչ յիշատակի զայ-
սու ժամանակաւ . Եւսի անուն որ զօրսավար կամ
իշխան սպարամկ, բայց եթէ Եւրդար ոմն յատաջ քան
գԲրիտանու : Պաւոցէ հեղինակ մեր անուամբա այսու
զՄոսէյլամ՝ սուստ մարդարէն Օնէոյմիեան իմանայ

որ արդարեւ յաղթեցաւ ի Խալեղայ Ալլոդեան՝
զօրապետէն Աբու-Բէրրի :

5. 4 Օրին. «Յաղկաթ ամսոյ». մեր եղար Պառզ-
կաթ ամսոյ համարեալ զառաջինն վրիպակ հեղինա-
կին կամ գրչացն. ըստ որում չիք այդանուն ամիս
առ Աբարացիա ոչ յառաջ, ոչ զինի Մահմետի :
Ահաւասիկ կարդ եւ անուանք երկուսասան ամսոց
Աբարաց նախօրան զՄահմետ եւ զինի. 1. Մոհար-
րամ. 2. Սաֆոր. 3. Ռարի Ա. 4. Ռարի Բ. 5.
Զումադա Ա. 6. Զումադա Բ. 7. Ռաշար. 8. Շա-
րան. 9. Ռամադան. 10. Շավալ. 11. Պուլկադա.
12. Պուլհեջա : Ալմասուղի ի զիրա խր անուան-
եալ Մուրոջ-էլ-Պահար, աւանդէ թէ երկու գար
յառաջ քան զերեւումն Մահմետի, երկուսասան
ամիսը Աբարացւոց կոչէին. 1. Կատիկ. 2. Թակիս.
3. Տալիկ. 4. Կաջիր. 5. Ասլախ կամ Ասմախ. 6.
Ամսահ. 7. Ահլակ. 8. Կասա. 9. Զահեր. 10. Բարտ
կամ Մարտ. 11. Հարփ կամ Կայս. 12. Կասա
կամ Մերիս : Խակ Ամրիթունի ի Քիսար-էլ-Աթար
այլով անուանք կոչէ զայնս. զորօրինակ. 1. Մուտա-
մեր. 2. Կաջիր. 3. Խալան. 4. Սասլան. 5. Հեն-
նին. 6. Ռօննա. 7. Ասամիմ. 8. Աղել. 9. Կատիկ.
10. Վաղել. 11. Հէվահ և 12. Բաղակ :

6. Այս անուն, որպէս եւ ըազում այլք, այլայլ-
եալ երեւի ի հեղինակն մեր : Բուն անուն նորա էը

Արդեւ կաարաց որդի Արդուլ-Կօհաֆայ. որ իրեւ
ետ զԱյիսոյ՝ զուստր իւր, ի կնութիւն Մահմետի,
կոչեցաւ Արու-Բէրր այսինքն հայր կուսի : Յետ
մահու սուտ մարդարէին եկաց յամի 632 առաջնորդ
Խալամաց, նուաճեաց ընդ իւրեւ զասպատամբեալն
Եմին, տիրեաց Ասորեստանի եւ Ասորեաց. ի կար-
գի եղ զԱրտ բանն և մեռաւ ի 634 տուեալ զիշխանու-
թիւն իւր Օմարաց :

7. զԱմարի Ա. կոչէ մատենադիր մեր Շահ ռարի
տւաղ յորում մեռեալ ասէ զՄահմետ ի հասակի 63
ամաց յետ կալոյ յիշխանութեան ամս 10 : Ճշդիւ
խօսելով՝ ոչ որ զիտէ դեռ սոսոյդ զթուական ծնրե-
ղեան նորա եւ մահու : Մեծազոյն մասն մահմե-
տեան մատենադրաց համարին զնա ծնեալ ի 20
Ապրիլի 571 ամի Տեառն, ապրեալ 63 լուսնական
ամս եւ աւուրս 3 (61 տարի արեդակնային եւ 48 օր)
եւ մեռեալ ի 12-13 Ուարի Ա. 7-8 Յունիսի 632 ամի :

8. 3 Օրին. « Ամիրմոմսոնիք » . մեր եղար ըստ
միոյն եւ եթ Ամիր-մումսիք զոր Արարացիք զրեն
եւ հնչեն կմիր-ալ-Մումինին այս ինքն է առաջնորդ
հաւատացելոց : Զառաջինն Արու-Բէրր սոտանձ-
նեաց զտիտղոսս զայս. ապա՝ այլ ամենայն յաջորդը
իւր : Ամիրալետն ոմանց ի մատենադրացն մերոց է
անձոռնի թարգմանութիւն բառիս՝ զուրկ յիմաստէ.
ըստ որում սամիր կամ էմիր նոյն է յարարերէնն որ

ինչ է սկսութիւնը յայս ստուկու ստիրապետն ոչ այլ
ինչ նշանակէ բայց եթէ սկսուապետ :

9. Արտւ-Բերբ թագաւորեաց ամս երկու միայն
եւ ոչ աւելի :

10. Օմար Ա. յառաջն կոչիւր Արտւ-Հաֆզայ-
Խրն-ալ-Քատար, եւ յաթոռ Մահմետի յամին 634:
Յառաջն մոլի թշնամի խաղամութեան, ապա եղեւ մոլե-
ռանդն սլաշտական այնորիկ, ի սէր որոյ կործանել ետ
4,000 եկեղեցիս եւ կանդնել 1,400 մզկիթու. այրել
ետ զհոչակաւոր մատենագարանն Ավեքսանդրիոյ
ի նախատինս խր յախտենական. կազու զի իրիս,
զՄիջազետս եւ զՊարս. եւ սրահար սաստակեցաւ
ի Պերող անուն պարսիկ ծառացէ խրմէ յամին 644:

11. Օթման Ա. յաջորդեաց յաթոռ խալիֆայու-
թեան յամին 644 ի հասակի 80 ամաց. տիրեաց
Ափրիկէի եւ Պարսից եւ ծախեաց ի հոր զօտա-
րաձայն օրինակս Կուրանին Արտւ-Բերբի. սպանու-
յիւրոցն յամին 656 :

12. Կարդա՛ Ամիր-ալ-Մումինին :

13. և Օրինակը մեր ունէին հաւասարապէս Գառ-
թողկիոդ զոր համարիսք այլայլութիւն կաթողիկոսի
ի բերանս Այալրաց : Պարսք ցարդ կոչեն զկայժողի-
կոսն սրբոյ Լուսածնի խալիֆայ իրրեւ տեղապահ,
որպէս եւ կոչէր առնուայաջորդն Մարգարէին խր-
եանց :

14. 2 Օրին. « Հոմայիղ ի նմին ». Երրորդն՝ « Հառամայիղ հիմն ». Եղար ըստ միսյն հոմանիղ ի նմին. դի և Սպլասմ՝ տիկինն Աղվանից, այնպէս բամբասիւր յոմանց :

15. 2 Օրին. « Բերդակոր ». տեղիս այս, որպէս ցուցեալ եմք ի յառաջարանի մատենիս, էր ամարացնոց հայրապետացն Աղվանից :

16. 2 Օրին. « Վագիկութեան դրախտին » :

17. 2 Օրին. « Վորճանացս Հայոց » :

18. Չորեքին օրինակը մեր « ի բաց ընկեցեալ էր զՆերսէսի Հայոց կաթողիկոսութենէ » : Ներսէսասայս որ և Քակուր, ոչ էր կաթողիկոս Հայոց. այլ Աղվանից. յայս սակա եղար. ի բաց ընկեցեալ էր Հայոց զՆերսէս ի կաթողիկոսութենէն :

19. 2 Օրին. « Պայս նորոյ » :

20. 3 Օրին. « անարժանից ի ճշմարտից սուրբ քահանայից » :

21. 1 Օրին. « Խօթացեալ իշխանին մնայր » :

22. Ի կրօնասպատում զիրս մեր, որչափ և մարթեղեւ մեղ խուզել ոչ գտան հետք կարծեաց Ակրայէլի՝ կոսմողիկոսի Աղվանից, որպէս թէ էր երբեմն յորժամ եկեղեցի մեր պաշտէր զերեսին տօնս՝ Ծնընդեան, Յայտնութեան և Անտեաց Քրիստոսի իմիսին և իմիում աւուր : Յաղաղս երկուց առաջնոցն չիր երկրմասութիւն և ոչ մի. զԾնունդն և զՅայտնու-

թիւն Քրիստոսի ոչ միայն Հայք, այլ և Երուսաղեմ
մացիք, Աղեքսանդրացիք, Անտիոքացիք, Կոս-
տանտնուալոլսեցիք եւ այլ Քրիստոնեայք տօնէին ի
միասին, ի 6 Յունվարի, մինչ յկէսն չորրորդ դա-
րուն, զորս ապա այլը բաժանեցին յերկուս. իսկ
Հայք կացին, մնացին ցայսօր ժամանակի, որպէս եւ
էին առաջնորդք հաւատոյ մերոյ : Խակ տօն Աւե-
տեաց, որչափ եւ հնար եղեւ մեզ ստուգել միշտ
սլաշոեցաւ յեկեղեցի մեր յ7 Ապրիլի եւ ոչ երեք
ընդ Ծննդեան եւ Յայտնութեան Քրիստոսի :

23. Յոյնք եւ Հռոմայեցիք չէին միայն որք կա-
տարէին զտօն ծննդեան, մահուան եւ յարութեան
Արեւու, այլ նաև Հայք, Պարսք, Եգիպտացիք,
Փիւնիկեցիք, Փոխւգիացիք եւ բաղումք ի նախա-
քրիստոսեան ազգաց : Զայսմանէ ի մտի ունելով
ճառել յուրոյն գիրս նախնի կրօնից Հայոց, զայս եւ
եթ ի հարեւանցի ասեմ այժմ թէ Պարսիկը եւ Հայք
այլարանեալ զարեւն իրեւէ էակ հոգեւոր՝ ընծայէին
նմա հասակս չորս ըստ չորից հասակաց մարդոյ,
այսինքն ծնունդ, պատանեկութիւն, արրունք եւ
ծերութիւն : Ի Հասարակածին ձմռան յորում կար-
ձագոյն աւուզք ականէին տիրել տօնէին ըստ
Հիղաց եւ Յուստինոսի զծնունդ անյաղթին Միհրի.
զոր Հռոմայեցիք առեւալ յարեւելեաց թարգմանէին
իրարրառ խրեանց natalis solis invicti. եւ տօնէին ի

25. Պեկտեմբերի : Տօն յարութեան Ալեւու պաշտիւր միջտ ի հասարակածին դարնան, յամեւանն Ապրիլի որ եւ էր միանդամայն տարեգլուխ : Այսու տօնիւ ակնարկելին Հայր և Պարսիկը զիջումն արևու ի մեր կիազունդ, զյաղթանակ այնորիկ ի վերաց Ահրիմանի եւ դազատութիւն խրեանց յիշխանութենէ խաւարի, ցրոյ և այլ չարեաց ձմռան : Պարսր, թէ եւ մահմետական, արդ եւս հանդիսացուցանեն զտարեգլուխ խրեանց ի դարնան կոչեցեալ զայն Եարուգ :

24. 3 Օրին, « 62,000 » . դոր վրիալակ գրչի համարեալ եղաք 2,000 ըստ աւանդելոց Վետոնդ վարդապետի ժամանակակցի և այլ սրատմարանից մերոց :

25. 1 Օրին, « 183 » :

26. 2 Օրին, « Մանուկ և Մարդաղատ » :

27. 1 Օրին, « Երդի », միւսն՝ « Հերդի » :

28. 1 Օրին, « Խաղբաց տէրն Ասորդին » :

29. 2 Օրին, « ազգի մուրացիկ » . ըստ Ստեփաննոսի Օրբելեան եղաք անազդի մուրացիկ :

30. Կամ աւելորդ էր. « մատոյց առաջի » կամ զրելի էր զորս եթէ մատուցէ առաջի : Ստեփաննոս Օրբելեան ի Գլուխն ԼԱ. այսպէս խօսի զիրացս « Երթ ի Հռոմ ». Եւ տե՛ս անդանօր յարկեզս մեծի եկեղեցւոյն. եթէ գտանես այլ եւս երիս զիրս որպէս զայդ, սակա զամենացն աշխարհ յայդ կրօնս զարձու-

ցից ։ Կաղանկայտուացին Ա երապատուեալ վար-
դապետին Հայր Ղ եւոնդեայ Ամիշանեան տարրե-
րիւր սակաւ մի ի մերոցն ։ Ահա ընթերցուածն
այնորիկ զ գտեալ անդ ուկէտիս մի մատեան սակս
սակս հաւատոյ մատոյց առաջի նորա. ընթերցեալ
դայն յզէ կայսր զԱտեփանոս ի Հռոմ քաղաք բերել
անտի երիս դիրս համարարբառ այնմ զբոց սակս
ճշմարիտ հաւատոյ. մատուցէ առաջի. դի զաշխար-
հըս ի յայն զրենոյն կրօնս դարձուացեն ։

31. Ապդան, Արդան, Ապդոն անուն դաստաւոր
ոք ոչ յիշատակի առ նախնի մատենագիրա : Այս
անուն եթէ շիցէ աղաւաղութիւն Խրոմենեայ Արե-
տացւոյ կամ Գիօմեդայ Արգովուացւոյ, անծանօթ-
մաց ինձ :

32. Վիտն, Խիտն կամ Խիտմ ոչ էր յԱրացեցւոց
աշխարհին եւ ոչ ի Պեղալոնէս որ էր յԵւկոպիայ.
այլ ի փոքրն Ասիայ շինեալ ըստ առասպելաց յԻ-
լուէ՝ որդւոյ Տրոսի, որ և Տրովա կոչեցաւ յայս սակս:
Հուալ հնոյն Տրովայի Աղերսանդր Մակեդոնացին,
ըստ աւանդելց ոմանց, կանդնեաց զերկրորդ իմն
Խիտն, որ կործանեալ ի Ամազոնէ նորողեցաւ ի
Կեսարէ եւ քայրայեցաւ յետոյ ըստ օրինակի հնոյն.
որոյ վլատակի կարծին երեւել ցայտմ ի սահմանս
Զիավակ զեղջ : Շվալիէ եւ Շուազեօլ Գութֆիիէ
համարին զՏրովա շինեալ ի ծայր ըլլոյն Բունար-

Բայցի ոչ հեռի յականց Ակամանղրեայ, զորով պատ
առնոյր Ախմուաս դետակ : Ալարք եւ Ռեննել անդ-
րանիկ այլուր համարեցան նշարել զաւերակս Տրո-
վայ. Մակլարեն մերժ եալ զդիւտ Ռեննելայ՝ այլուր
փոխաղրեաց զդիրս առասպելեալ քաղաքիս : Հա-
սարակօրէն կարծի թէ Խլիոն կամ Տրովայ շինեալ
էր հուտ հրուանդանին Աեզեայ և Հեղեապոնտի, ի
դաշտին Մենդերեայ ընդ մէջ Խղայի եւ ծովուն :

Պատերազմն Տրովայ յոմանց համարեալ իրբեւ
վաւերական խմն, յացլոց մերժեցաւ իրբեւկարկատուն
առասպել յունական սնախառութեան : Զիք նա եւ
ստուեր ինչ միաբանութեան սակս ժամանակին յո-
րում սկսաւ եւ ի յանդ ել պատերազմն ստերիւրեալ :
S. C. F. Petit-Badel եւ Saint-Martin դնեն զպատե-
րազմն Տրովայ յամին 1199. Հերոդոտ եւ Թուկիդիդ
ի վեր հանեն զայն ցթուականն 1300. արձանագիրք
Պարոսի ցուցանեն դժուականն 1209. Տիմէ, Երա-
տոսթէն, Աօսիր, Արխտէս, Ալովոդոր, Դիոդոր
Աթիլիացի եւ այլք բազումք՝ զամն 1183-1184. Փե-
րեկիւդ, Մարկելլէն եւ Ալավիէ, զամն 1116-1126 :

33. 2 Օրին. « աշխարհօրէն Տաճիկ » :

34. Մեր եւ Վ. Հ. Ղետոնդեայ օրինակը այսպէս
ունէին, ապա թէ ոչ Արանշահ սիրէի կարդալ :

35. 2 Օրին. « Առղէից » . որ տարրեր դրչու-
թեամբ մի եւ նոյն թուի :

36. Ամսուն կամ ԱՆ-Ամսուն՝ որդի Հարուն-ալ-Ռաշիտոյ, եւ եօթներորդ խալիֆայ Արաբաց, ոչ սպանաւ ի Յունաց, որպէս կարծէ մատենագիր մեր : Կա մեռաւ ի Տարսոն յամի Տեառն 833 յորժամ դառնայր ի արտերազմէն Յունաց ղենի տիրելց կրետէ կղջւոյ :

37. 1 Օրին. « Բարդողի » . միւսն՝ « Բարդող » :

38. 1 Օրին. « Վշակվիչն » . միւսն՝ « Քշակիչ » :

39. Առ Պարսս, ըստ իմ գիտելց, չէք ճոխութիւն Գիլեմիկ : Այս աշխարհ անկաւ յամի Տեառն 652 ընդ իշխանութեամբ խալիֆայից Արաբաց եւ եկաց ընդ նորօք ցամն 1258, թէ եւ երբեմն երբեմն յայլ եւ յայլ գաւառս այնորիկ յարեան հայրենակը ոմանք ջանալով վերականգնել զհայրենին ազատութիւն. զորօրինուկ. Թահերեանիք՝ յամսն 820-872. Սօֆիարեանիք՝ յ872-902. Ասմանեանիք՝ յ902-992. Բոյիդը Խրակլ Աճեմի՝ յ932-1056. Բոյիդը Պարսից՝ յ932-1029. առաջ Խազնեվեանիք, Սալջուկեանիք, Խարեզմեանիք, Մողալը, Խլիսանեանիք, Թաուրմանիք եւ այլք : Բօյահ՝ ձինորս սոսկական, ի գաւառէն Գիլեմայ, նահատետ եկաց հարաստութեանն Բույլեան, որոյ երկրին որդիք մտեալ ընդ ծառայութեամբ իշխանին Գիլանայ, որ տիրէր ափանց Կասպիական ծովու, կարգեցան կուսակալը Խրանի, Գիրմանի եւ Խսովահանի, որք եւ յետ սակաւուց

Հրատարակեցին զանձինս ինքնապլուխ : Թուի թէ
հեղինակ մեր կամ օրինակողք իւր զԴիլէմիկ ցեղն
կոչեն Գիլեմիկ, զոր սպարտ վարկաք ծանուցանել ի
տեղեկութիւն ընթերցողաց :

40. Աթին է բանս եւ կարօտ բացատրութեան.
Երերին օրինակը մեր ունիին «դժնդա որ եհա ճաք
գլխոյ մարդկան հաւատի քո արար », երրորդն՝
«դժնտայ որ եհաս ճաք գլխոյ մարդկան հաւատ քո
արար » : Զոր սպարդել կամելով, ակնկալութեամբ
ընտրելադոյն օրինակի, եղար «դժնդակ օր եհաս
ի Տաճկաց գլխոյ մարդկան եւ ի հաւատս քրիս-
տոսարար » :

41. 2 Օրին, «որ եւ որդիք քո զրո անլուռթիւնք
շարութիւն կորատեան տառապելոց առնուն դա-
ւազան » :

42. 2 Օրին, «թէպէտ բննես մեր քննութեամբ
այսուիկ » :



ՅԱՆԿԳԼԽՈՑ ԵՐԵՍԻ ԴՐՈՅ

ՊԱՏՄՈՒԹՅԵԱՆ ԱՂՎԱՆԻՑ :

Երես :

Ավ.		2
Ա.	Առաջին յարձակումն ի հարաւոյ եր-	
	զրէ ունիլ զծագս տիեզերաց Խամայէլական	8
	աղջին :	
Բ.	Որյետ Մահմէտի՝ սուստ մարդարէին,	9
	եղեն Ամիր-Մումիք (8) :	
Գ.	Վասն Բակուրայ ումեմն Կերսէսաա-	11
	նուն՝ եղեալ կաթողիկոս Աղմանից :	
Դ.	Թուղթ ժողովոյն Աղմանից առ	14
Եղիս՝ Հայոց կաթողիկոս :		
Ե.	Թուղթ Եղիայի՝ Հայոց կաթողիկո-	15
	սի, առ Աբդէ-Մէլիք Ամիր-Մումիք ի նոյն	
	խորհուրդ :	
Զ.	Պատասխանիթղթոյն Եղիայի՝ Հայոց	16
	կաթողիկոսի, Աբդէ-Մէլիք Ամիր-Մում-	
	նոյ :	
Է.	Գաղն Եղիայի՝ Հայոց կաթողիկոսի,	
	ի Պարտաւ, և սլատօն ել զԵրսէս, և ի տեղի	

Նորին յաջորդել զԱմէօն սարկաւագաւ	16
պետն կամօք ժողովոյն Աղվանից : . . .	
Բ. Զեռնարկ զոր խնդրեաց Եղիսա' Հա-	
յոց կաթողիկոս, ի ժողովոյն Աղվանից վասն	
միաբանութեան և ուխտի հաստատութեան	
Հայոց և Աղվանից :	18
Թ. Գիր պայմանի Տեառն Եղիսայի' Հա-	
յոց կաթողիկոսի, առ Աղվանա : . . .	24
Ժ. Գիր անուանց նախարարաց Աշ-	
վանից ըստ նախադրութեանն, զորս ներ-	
քինին ԱրդէՄելերի Ամիր-Մումնուց տա-	
րաւ և եղ ի դիւանի արքունի : . . .	26
ԺԱ. Կանոնք Տեառն Ամէօնի' Աղվանից	
կաթողիկոսի, յետ կործանման Ներսիսի :	27
ԺԲ. Հարկասահանջիլն Վարագ-Տըր-	
դատայ' Աղվանից իշխանի. և երթնի Յոյնս	
տալ սկասանդ զորդիս իւր. և Միքայէլի	
փոխանորդել զաթոռն Աղվանից զինի	
Սամուելի :	35
ԺԳ. Վասն ոչ առնել առ ազդայինս	
խնամութիւն Միքայէլի' Աղվանից կաթո-	
ղիկոսի, արարեալ ժողով :	38
ԺԴ. Նորին Միքայէլի' Աղվանից հայ-	
րապետին, խնդր յաղագս սկասանձման	
Զաքարիայ և Ծննդեան և Յայտնութեան	

- Փրկչին ընդդէմ երկարնակ աղանդոյն : 39
- ԺԵ. Որ ինչ յաւուրս որդւոյն Հերակե-
զիսի և թոռին գործք : 42
- ԺԶ. Աղատամբութիւն Հայոց. և Մահ-
մէտին դալ ի Հայոց. և առումն Սեւանայ.
և մահն Մահմէտի : 43
- ԺԷ. Յաղագս Ստեփաննոսի Եպիսկո-
պոսի երթալի Հոռոմս, երերելն զգրեանն,
որ յարեւելս ոչ կային. և վախճան նորին.
և պատիժք որ հասին յԱստուծոյ : 47
- ԺԸ. Ի դրենոյն Ստեփաննոսի դտաւ
այս պատմութիւն սակս աւերմանն Վիոն
քաղաքի, և շինելոյն Հռոմայ : 49
- ԺԹ. Որ ինչ յերկերիւր թուականու-
թենէ Հայոց եւ այսր գործք լեալ ի սահ-
մանա Աղվանից : 52
- Ի. Երթն Մամունայ՝ իշխանին Տաճկաց,
ի Հոռոմս, և ի նմին սատակումն. ընդ նմին
զրուցատրութիւնք պէսպէս կարճառօտ
բանիւք : 57
- ԻԱ. Պաշարումն Պարտաւայ յորդւոյն
Շեխայ և ի զօրաց Հայոց և Աղվանից. և
Մամուկիլի անձամբ առնուլ պատիւ և գնալ
ի Դմին : 61
- 7.

[2 n. 504.]

- 118 -

A 55010

իթ. Կրկնաբանութիւն Աղքաշարանաց	67
համառօտարար :	
իգ. Անուանը Հայրապետացն Աղվա-	71
նից. ամբ և զործք նոցին :	
Ծանօթութիւնը առաջին և Երկրորդ	77
գրոց :	
Ծանօթութիւնը Երրորդ գրոց : . . .	104
Ցանկ դիմոց Երրորդ գրոց : . . .	115



Wheaton.

Ovijanx

Digitized by Google

PREGUSTA

‘Unpleasant’

‘**Umaṇī**’

